ՋԱՆԻ ՌՈԴԱՐԻ

ՀԵՔԻԱԹՆԵՐ, ՈՐ ԵՐԵՔ ԱՎԱՐՏ ՈՒՆԵՆ

Թարգմանություն ռուսերենից

Խմբագիր՝ Գայանե Թերզյան

ԴՊԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք՝ ընթերցողին	
Կախարդական թմբուկը	*թարգմ.՝ Գայանե Թերզյանի*
Խորամանկ Բուրատինոն	*թարգմ.՝ Գայանե Թերզյանի*
Խեղճ ուրվականները	*թարգմ.՝ Գայանե Թերզյանի*
Հաչել չիմացող շունը	*թարգմ.՝ Սոֆյա Ասատրյանի*
Տունը անապատում	*թարգմ.՝ Լիլիթ Մարգարյանի , Լամարա Թանգյանի*
Սրնգահարը և մեքենաները	*թարգմ.՝ Մերի Մարտիրոսյանի*
Շրջապտույտ՝ քաղաքում	*թարգմ.՝ Մերի Մարտիրոսյանի*
Գլխարկների անձրև Միլանում	*թարգմ.՝ Կարինե Հովհաննիսյանի*
Ինչով են մարդիկ իրար նման	*թարգմ.՝ Քրիստինա Ասատրյանի*
Պրոֆեսոր Զարհուրելին	*թարգմ.՝ Գայանե Թերզյանի*
Ինչ-որ մեկը լաց է լինում	*թարգմ.՝ Լիլիթ Մարգարյանի*
Հրաշագործ Միաց-Նեմը	*թարգմ.՝ Անի Ավդալյանի*
Ռինալդոյի արկածները	*թարգմ.՝ Քրիստինա Ասատրյանի*
Հովվի մատանին	*թարգմ.՝ Աննա Պետրոսյանի*
Տաքսի՝ դեպի աստղերը	*թարգմ.՝ Անի Հարությունյանի*
Ինչպես էր Տինոն հիվանդացել	*թարգմ.՝ Աննա Պետրոսյանի*
Հեռուստացույցի պատմությունը	*թարգմ.՝ Սոֆյա Ասատրյանի*
Հարյուր լիր՝ գրպանում	*թարգմ.՝ Լիլիթ Մարգարյանի*
Մեծ գազարը	*թարգմ.՝ Անի Ավդալյանի*
Ճանապարհորդ կատուն	*թարգմ.՝ Անի Հարությունյանի*
Հեքիաթների ո՞ր ավարտներն են	
դուր գալիս հեղինակին	

Այս գիրքը, երեխաներ, խաղ է։ Հեքիաթներն այստեղ անսովոր են. յուրաքանչյուրը երեք ավարտ ունի։ Կարդացե՛ք հեքիաթները, դիտե՛ք նկարները, մտածե՛ք դրանց մասին և որոշե՛ք, թե, ի վերջո, ո՞րը պիտի լինի հեքիաթի վերջը, իսկական ավարտը, և ինչո՞ւ։

Շատ հնարավոր է, որ վերջաբաններից ոչ մեկն էլ դուր չգա ձեզ։ Այդ դեպքում ինքներդ վերջաբան հորինեք, գրեք կամ նկարեք այն։

Մի բան էլ ասեմ։ Կարծում եմ, ավելի լավ է ընկերների հետ միասին խաղաք, այդպես ավելի ուրախ կլինի։ Իսկ ամենակարևորն այն է, որ այդպես կարող եք նաև մրցել, թե ո՞ւմ երևակայությունն է ավելի հարուստ, ում հորինածն է ավելի լավը և ավելի հետաքրքիր։

Հաջողություն եմ մաղթում։

Ջանի Ռոդարի

1969 թ.

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԹՄԲՈՒԿԸ

Մի զինվոր տուն էր դառնում պատերազմից։ Նա շատ աղքատ էր, ունեցած-չունեցածը մի թմբուկ էր միայն։ Բայց տրամադրությունը հրաշալի էր, չէ՞ որ երկար տարիների բացակայությունից հետո վերջապես տուն էր վերադառնում։ Դրա համար էլ չորսբոլորը հնչում էր նրա թմբուկի ուրախ դղրդոցը. «Դրմփ-դրրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ, դը՛մփ-դրրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ»։ Քայլում էր նա ճանապարհով, մեկ էլ մի պառավի հանդիպեց։

– Է՛յ, փառապանծ զինվոր, պատահաբար մի սոլդո չե՞ս ունենա։

– Հաճույքով քեզ երկուսը կտայի, տատիկ, եթե ունենայի, բայց ոչ մի սոլդո չունեմ։

– Իսկապե՞ս չունես։

– Հենց այս առավոտյան քրքրեցի գրպաններս, բայց ոչինչ չգտա։

– Իսկ դու մի անգամ էլ նայի՛ր, լա՛վ փնտրիր։

– Գրպանո՞ւմս։ Լա՛վ, կփնտրեմ, եթե ուզում ես, բայց վստահ եմ, որ… վա՛յ, էս ի՞նչ բան է…

– Սոլդո, տեսնո՞ւմ ես, ուրեմն կա։

– Երդվում եմ, որ չգիտեի այդ մասին։ Հրաշալի է։ Վերցրո՛ւ, տատի՛կ, այն քեզ երևի ավելի շատ է պետք։

– Շնորհակալ եմ, զինվոր,- ասաց պառավը,- փոխարենը ես էլ քեզ մի բան կտամ։

– Իսկապե՞ս, բայց ինձ ոչինչ պետք չէ։

– Քեզ մի փոքրիկ կախարդանք կնվիրեմ։ Ուշադի՛ր լսիր։ Ամեն անգամ, երբ հնչի թմբուկդ, բոլորը կսկսեն պարել։

– Ի՜նչ զվարճալի կախարդանք է։ Շնորհակալ եմ, տատի՛կ։

– Սպասի՛ր, սա դեռ բոլորը չէ։ Մարդիկ կսկսեն պարել և չեն կարողանա կանգ առնել, քանի դեռ չես դադարեցրել թմբուկը խփել։

– Ա՛յ քեզ լավ բան։ Չգիտեմ դեռ, թե ինչ կարող եմ անել այս նվերով, բայց երևի պետք կգա։

– Էն էլ ո՜նց։

– Ցտեսությո՜ւն, տատի՛կ։

– Ցտեսությո՜ւն, զինվո՛ր։

Եվ թմբկահարը շարունակում է ճանապարհը դեպի տուն։ Գնում է իր ճանապարհով, մեկ էլ անտառից դուրս են թռչում երեք ավազակ։

– Քսա՛կդ կամ կյա՛նքդ։

– Վերցրե՛ք, Աստծու սիրուն, պայուսակս էլ վերցրեք… Միայն թե այն դատարկ է։

– Ձեռքերդ վե՛ր, թե չէ կկրակենք։

– Լսում եմ, պարոնայք ավազակներ։

– Որտե՞ղ ես թաքցրել փողերդ։

– Եթե ունենայի, երևի գլխարկիս մեջ կպահեի։

Ավազակները նայեցին գլխարկի մեջ, բայց այն դատարկ էր։

– Իսկ գուցե ականջս կմտցնեի։

Նայեցին ականջի մեջ՝ ոչինչ չկար։

– Չէ՛, ավելի շուտ քթիս ծայրին կդնեի, եթե փող ունենայի։

Ավազակները փնտրեցին, փնտրեցին և, իհարկե, ոչինչ չգտան։

– Էս դու իսկապես աղքատ ես,- բարկացան ավազակները։- Որ էդպես է, թմբուկդ կվերցնենք, էլի բան է, գոնե մեկ-մեկ կուրախանանք։

– Վերցրե՛ք,- հոգոց հանեց զինվորը,- ափսոս է, իհարկե, հին ընկերոջից բաժանվելը, այսքան տարի միասին ենք եղել։ Բայց եթե ձեզ այդքան պետք է…

– Պե՛տք է։

– Թույլ տվեք գոնե վերջին անգամ նվագեմ, հետո վերցրեք։ Համ էլ ցույց կտամ, թե ինչպես են թմբուկ խփում, լա՞վ…

– Դե լավ, թող այդպես լինի, նվագի՛ր։

– Շատ լավ,- ուրախացավ թմբկահարը։- Ես թմբուկ կխփեմ՝ «Դը՛մփ-դըրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ, դը՛մփ-դըրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ», իսկ դուք պարեք։

Տեսնել էր պետք, թե ինչպես սկսեցին պարել այդ սրիկաները։ Ոնց որ տոնավաճառում պարող արջեր լինեին։ Սկզբում դա նրանց դուր եկավ, ծիծաղում ու կատակում էին։

– Դե՛, դե՛, թմբկահար, իսկ հիմա վալս նվագիր։

– Իսկ հիմա՝ պոլկա։

– Մազուրկա։

Բայց երբ հոգնեցին, շնչակտուր եղան, ցանկացան կանգ առնել, չկարողացան։ Ուժասպառ եղան, ոտքի վրա չէին կարողանում կանգնել, իսկ կախարդական թմբուկը նրանց ստիպում էր պարել։

– Օգնեցե՛ք։

– Պարե՛ք։

– Խնայի՛ր։

– Պարե՛ք։

– Աստծո՛ւ սիրուն։

– Պարե՛ք, պարե՛ք։

– Բավակա՛ն է, բավակա՛ն է։

– Էլ թմբուկս չե՞ք խլի ձեռքիցս։

– Չենք խլի։ Հերի՛ք է…

– Ինձ հանգիստ կթողնե՞ք։

– Ինչ ուզում ես՝ կտանք, միայն դադարեցրու նվագդ։

Բայց թմբկահարը դադարեցրեց այն ժամանակ, երբ նրանք լրիվ ուժասպառ եղած գետնին թափվեցին։

– Շատ լավ է։ Էլ հետևիցս չեք հասնի։

Թմբկահարը փախավ, բայց համենայնդեպս ժամանակ առ ժամանակ դարձյալ խփում էր թմբու-կին, և այդ ժամանակ սկսում էին պարել նապաստակներն իրենց բներում, սկյուռիկները՝ ծառերի վրա և օրը ցերեկով արթնացած բվեճները։ Այդպես գնում էր թմբկահարը՝ վերադառնալով տուն։

Առաջին ավարտ

Գնում էր, գնում, մեկ էլ մտածեց. «Բայց լավ բան է այս կախարդանքը։ Ավազակների հետ հիմարի պես վարվեցի։ Կարող էի ստիպել, որ ինձ տան իրենց բոլոր փողերը։ Գուցե ետ դառնամ և փնտրե՞մ նրանց»։

Հենց այն է, ուզում էր հետ դառնալ, երբ տեսավ ընդառաջ եկող փոստային կառքը։

– Այ սա ավելի հարմար է։

Ձիերն արագ վազում էին, ծլնգում էին զանգակները, կառապանը մի ուրախ երգ էր սուլում։ Նրա կողքին նստել էր զինված ոստիկանը։

– Բարև՛, զինվո՛ր, ուզո՞ւմ ես քեզ տեղ հասցնենք։

– Չէ, ես էստեղ էլ ինձ լավ եմ զգում։

– Ուրեմն դուրս արի ճանապարհից, թույլ տուր անցնենք։

– Իսկ դուք նախ մի քիչ պարեք։

«Դը՛մփ-դըրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ։ Դը՛մփ-դըրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ»,- թնդաց թմբուկը։ Եվ իսկույն սկսեցին պարել ձիերը, կառապանը ցած թռավ իր տեղից և սկսեց դոփել։ Իսկ ի՜նչ ծիծաղելի էր պարում ոստիկանը՝ցած գցելով զենքը։ Ուղևորները նույնպես բոլորը սկսեցին պարել։

Պետք է ասեմ, որ այդ փոստային կառքով երեք արկղ ոսկի էին տեղափոխում, մի երեք հարյուր կիլոգրամ կլիներ։ Զինվորը մի ձեռքով թմբուկն էր խփում, իսկ մյուս ձեռքով արկղերը ցած գցեց կառքից և ոտքով հրեց թփերի մեջ։

– Պարե՜ք, պարե՜ք։

– Բավակա՜ն է, բավակա՜ն է, էլ չենք կարողանում։

– Ուրեմն հեռացեք, արագ-արագ, և ետ չնայե՛ք…

Փոստային կառքը հեռացավ՝ առանց իր թանկարժեք բեռի, իսկ զինվորը շա՜տ-շատ հարստացավ, միլիոնատիրոջ չափ… Հիմա նա կարող էր իր համար առանձնատուն գնել, պարապ-սարապ ապրել և ամուսնանալ ինչ-որ կարևոր պաշտոնյայի աղջկա հետ։ Իսկ եթե էլի փող պետք լիներ, էլ բանկ գնալու կարիք էլ չէր լինի, բավական է ձեռքը վերցներ իր թմբուկը։

Երկրորդ ավարտ

Գնաց, գնաց զինվորը, հանկարծ տեսավ մի որսորդի, որը նշան էր բռնել, որ կրակի կեռնեխին։ «Դը՛մփ-դըրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ։ Դը՛մփ-դըրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ»։ Որսորդը ցած գցեց հրացանը և սկսեց պարել։ Իսկ կեռնեխը թռավ, հեռացավ։

– Թշվառակա՛ն, դու դեռ պատասխան կտաս սրա համար։

– Դա դեռ կտեսնենք, իսկ դու պար արի, դե՜…

– Ա՜խ, էլ ուժ չունեմ։

– Ուզում ես կանգ առնել, խոստացիր, որ այլևս ոչ մի անգամ թռչունների վրա չես կրակի։

– Խոստանո՜ւմ եմ։

Շարունակեց նա իր ճանապարհը և տեսավ մի գյուղացու, որն իր էշին էր ծեծում։

– Պարի՛ր։

– Օգնեց՛եք։

– Պարի՛ր։ Կդադարեցնեմ, եթե երդվես, որ այլևս երբեք էշիդ չես ծեծի։

– Երդվո՛ւմ եմ։

Քաջ զինվորը շարունակեց իր ճանապարհը։ Գնում էր և թմբկահարում ամեն անգամ, երբ պետք էր լինում ինչ-որ վատ արարքի վերջը տալ, արդարությունը վերականգնել կամ պատժել չարագործին։ Իսկ չարագործներն ու անարդարությունը, չգիտես ինչու, այնքան շատ էին հանդիպում, որ նա ոչ մի կերպ չէր կարողանում տուն հասնել։ Բայց զինվորը շատ գոհ էր։ «Իմ տունն այնտեղ կլինի, որտեղ կարող եմ իմ թմբուկի օգնությամբ բարիք գործել» ,- որոշեց նա։

Երրորդ ավարտ

Գնում էր զինվորը և մտածում։ «Հետաքրքիր թմբուկ է, տեսնես ինչպե՞ս է սարքված։ Որտե՞ղ է գտնվում նրա կախարդանքը»։ Ձեռքի մեջ պտտեցրեց փայտիկները, ուշադիր զննեց։ Կարծես թե սովորական փայտիկներ են։

– Իսկ գուցե գաղտնիքը թմբուկի մե՞ջ է թաքցրած, այս ձգված կաշվե ծածկոցի տակ։

Եվ նա դանակով մի փոքրիկ անցք բացեց թմբուկի վրա։ Պարզվեց՝ ներսը դատարկ է։

– Դե լավ, ի՛նչ արած…

Եվ զինվորը, ուրախ թմբկահարելով, շարունակեց ճանապարհը։ Բայց այս անգամ նապաստակները, սկյուռիկներն ու թռչունները այլևս չէին պարում նրա թմբուկի հնչյունների տակ, բվեճներն էլ չէին արթնանում։

«Դը՛մփ-դրրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ։ Դը՛մփ-դրրը՛մփ-դը՛մփ-դը՛մփ»։ Ձայնը ոնց որ թե նույնն էր, բայց կախարդանքը չքացել էր։

Գուցե չհավատաք, բայց թմբկահարը, չգիտես ինչու, նույնիսկ ուրախ էր դրա համար։

ԽՈՐԱՄԱՆԿ ԲՈՒՐԱՏԻՆՈՆ

Կար-չկար մի տղա… Պինոքիո-Բուրատինոն։ Չէ, ոչ թե նա, ում մասին պատմել էր իտալացի գրող Կառլո Կոլոդին, ոչ էլ նա, ում մասին հեքիաթ էր գրել Ալեքսեյ Տոլստոյը։ Սա բոլորովին այլ տղա էր։ Ճիշտ է, սա նույնպես փայտից էր սարքված, բայց, մեկ է, ուրիշ էր։ Եվ նրան Կառլո հայրիկը չէր պատրաստել։ Նա ինքն էր իրեն սարքել։

Այս Բուրատինոն էլ, հեքիաթի նշանավոր փայտե մարդուկի նման, սիրում էր սուտ խոսել։ Եվ ամեն անգամ, երբ սուտ էր խոսում, նրա քիթն էլ էր երկարում։ Բայց, մեկ է, սա ուրիշ Բուրատինո էր։ Մանավանդ, որ երբ նրա քիթը երկարում էր, նա չէր վախենում,լաց չէր լինում և

օգնության չէր կանչում։ Նա վերցնում էր դանակը կամ սղոցը և շատ հանգիստ կտրում էր քթի ավելորդ մասը։ Չէ՞ որ նա փայտից էր, դրա համար էլ ամենևին ցավ չէր զգում։ Բայց քանի որ նա բավականին հաճախ էր սուտ խոսում, նույնիսկ շատ հաճախ, շուտով նրա տանը քթի ծայրից կտրված բազմաթիվ փայտե կտորներ հավաքվեցին։

– Շատ լավ է,- որոշեց նա,- կարծում եմ կբավարարի կահույք սարքելու համար։ Ես ինքս կպատրաստեմ և ատաղձագործին էլ փող չեմ տա։

Ասաց ու արեց։ Բուրատինոն մի լավ չարչարվեց և նրա տանը հայտնվեցին մահճակալ, սեղան, պահարան, աթոռներ, գրադարակներ, նստարաններ։ Վերջում, երբ ցանկանում էր հեռուստացույցի համար մի պահարանիկ սարքել, տեսավ, որ փայտը չի բավականացնում։

– Ոչինչ,- որոշեց նա,- պետք է միայն մեկ անգամ սուտ խոսել։

Նա դուրս վազեց փողոց և փնտրեց, թե ում կարող է ինչ-որ սուտ ասել։ Մեկ էլ տեսավ մի գյուղացու։

– Բարի օր,- ողջունեց նրան Բուրատինոն։- Իսկ գիտե՞ք, որ Ձեր բախտը կարգին բերել է։

– Ի՞մ բախտը, ինչպե՞ս։

– Դեռ չգիտե՞ք։ Դուք ախր վիճակախաղի տոմսով հարյուր միլիոն եք շահել։ Այդ մասին հենց նոր ռադիոյով ասացին։

– Չի՛ կարող պատահել։

– Ո՞նց թե՝ չի կարող պատահել… Կներե՛ք, Ձեր անունն ի՞նչ է։

– Ռոբերտո Բիզլունգի։

– Դե հա, տեսնո՞ւմ եք, ռադիոյով հենց Ձեր անունն ասացին՝ Ռոբերտո Բիզլունգի։ Իսկ Դուք ինչո՞վ եք զբաղվում։

– Գյուղացի եմ, հող եմ վարում…

– Ուրեմն կասկած չկա, հենց Դուք եք շահել հարյուր միլիոնը։ Շնորհավորո՛ւմ եմ…

– Շնորհակալ եմ, շնորհակալ եմ…

Սինյոր Բիզլունգին գլուխը կորցրել էր այս նորությունից, շատ էր հուզվել ու մտավ մոտակա սրճարան, որ ջուր խմի։ Հանկարծ գլխի ընկավ, որ ախր կյանքում ոչ մի անգամ վիճակախաղի տոմս չի գնել, ուրեմն ինչ-որ բան սխալ է։

Իսկ Բուրատինոն վերադարձավ տուն։ Նա շատ գոհ էր իր խորամանկությունից, քանի որ քիթը երկարել էր ճիշտ այնքան, որքան պետք էր պահարանիկի ոտքը սարքելու համար։ Նա կտրեց անհրաժեշտ կտորը, մաքրեց հարթաթղթով և մեխեց։ Ահա և պատրաստ է, հրաշալի պահարանիկ ստացվեց։ Եթե ուզենաս այսպիսի մի բան գնել, ահագին փող պիտի տաս,

համարյա քսան հազար լիր։ Վատ չէր, ահագին փող տնտեսեց։ Իր տան համար կահ-կարասի պատրաստելուց հետո Բուրատինոն որոշեց առևտրով զբաղվել։

– Շինանյութ կվաճառեմ և կհարստանամ։

Իսկապես, նա այնքան էր վարժվել ամեն տեսակ ստեր հորինելուն և աջուձախ խաբելուն, որ շատ շուտով փայտե շինանյութի մի մեծ պահեստ կառուցեց, որտեղ աշխատում էին հարյուր բանվոր և հաշիվներ գրող տասներկու հաշվապահ։ Նա գնեց նաև չորս ավտոմեքենա և երկու ավտոգնացք, որոնք պետք էին ոչ թե զբոսնելու, այլ քթի կտորները տեղափոխելու համար։ Նա դրանք նույնիսկ արտասահման՝ Ֆրանսիա և Շոտլանդիա էր ուղարկում։

Եվ նա գնալով ավելի ու ավելի շատ սկսեց խաբել։ Եվ նրա քիթը չէր հոգնում աճելուց։ Բուրատինոն ավելի ու ավելի էր հարստանում։ Հիմա նրա պահեստում երեք հազար հինգ հարյուր բանվոր էր աշխատում, իսկ հաշիվները գրում էին չորս հարյուր քսան հաշվապահ։

Բայց, ցավոք սրտի, անդադար ստելու պատճառով Բուրատինոյի երևակայությունը սպառվեց։ Որևէ սուտ կամ անհավանական պատմություն հորինելու համար նա հիմա ստիպված էր թաքուն ականջ դնել, թե ինչպես են ստում ուրիշները և կրկնել նրանց՝ թե՛ մեծերի, թե՛ երեխաների հորինածները… Բայց դրանք, որպես կանոն, շատ փոքրիկ ստեր էին, որոնցից քիթը ընդամենը մի քանի սանտիմետր էր աճում։

Այդ ժամանակ Բուրատինոն որոշեց հուշարար վարձել։ Նոր աշխատակիցն ամբողջ օրը նստում էր գրասենյակում, տարբեր անհավանական բաներ էր հորինում, գրի էր առնում թղթի վրա և տալիս տիրոջը.

– Ասացե՛ք, որ Սուրբ Պետրոսի տաճարը կառուցել եք Դուք, ոչ թե Միքելանջելոն։

– Ասացե՛ք, որ Ֆորլիմպոպոլի քաղաքն անիվների վրա է կանգնած և կարող է ճանապարհորդել։

– Ասացե՛ք, որ մի անգամ հայտնվել եք Հյուսիսային բևեռում, Երկրագնդի մեջ անցք եք բացել և հասել Հարավային բևեռ։

Հուշարարը վատ չէր վաստակում այս ստերի շնորհիվ, բայց ստելու այս անդադար վարժանքներից երեկոյան գլուխը սկսում էր ուժեղ ցավել։

– Ասացե՛ք, որ Մոնբլան սարը ձեր հորաքույրն է։

– … որ փղերը ոչ թե կանգնած կամ պառկած են քնում, այլ՝ կնճիթի վրա կանգնած։

– … որ Պո գետը հոգնել է Ադրիատիկ ծովը թափվելուց և ցանկանում է Հնդկական օվկիանոսը նետվել։

Հիմա, երբ շատ հարուստ էր դարձել, Բուրատինոն արդեն ոչ թե ինքն էր կտրում քթի ծայրը, այլ նշանավոր հյուսն վարպետները: Դրա համար նրանք սպիտակ ձեռնոցներ էին դնում և կտրում էին ոսկե սղոցով:

Տերը նրանց կրկնակի էր վճարում. Նախ՝ աշխատանքի, ապա՝ լռելու համար, որ ոչ մեկին չպատմեն իր զարմանալի քթի մասին: Իսկ երբ օրը շատ հաջող էր լինում, Բուրատինոն նրանց նույնիսկ մի բաժակ հանքային ջուր էր հյուրասիրում:

Առաջին ավարտ

Բուրատինոն ոչ թե օրերով, այլ ժամ առ ժամ էր հարստանում: Բայց չկարծեք, թե նա ագահ էր դարձել: Հուշարարին, օրինակ, երբեմն նույնիսկ նվերներ էր տալիս: Ասենք՝ անանուխի կոնֆետ, տանձ կամ սենեգալական դրոշմանիշ…

Համաքաղաքացիները շատ էին հպարտանում Բուրատիոյով, ցանկանում էին նույնիսկ նրան քաղաքապետ ընտրել, բայց նա չէր համաձայնում, քանի որ չէր ցանկանում իր վրա այդպիսի մեծ պատասխանատվություն վերցնել:

– Բայց ախր Դուք այնքա՜ն շատ բան կարող եք անել մեր քաղաքի համար,- ասում էին նրան:

– Կանեմ, առանց դրա էլ կանեմ: Մանկապարտեզ կսարքեմ, եթե, իհարկե, այն իմ անունով կոչեք: Քաղաքային այգում նստարան կդնեմ, որ ծերունի բանվորները հոգնած ժամանակ կարողանան հանգստանալ:

– Կեցցե՜ Բուրատինոն: Կեցցե՜ Բուրատինոն:

Մարդիկ այնքան ուրախացան, որ որոշեցին քաղաքի գլխավոր հրապարակում Բուրատինոյի մարմարե հուշարձանը կանգնեցնել: Եվ կանգնեցրեցին: Մարմարե Բուրատիոն երեք մետր հասակ ուներ, իսկ նրա կողքին կանգնած աղքատ տղան, որ նույնպես մարմարից էր, ընդամենը իննսունհինգ սանտիմետր էր: Մարմարե Բուրատիոն նրան մի սոլդո էր տալիս: Հուշարձանի մոտ նվագախումբն էր նվագում, երկինքը լուսավորվել էր հրավառությունից…

Դա շատ մեծ տոնակատարություն էր:

Երկրորդ ավարտ

Բուրատինոն ոչ թե օրերով, այլ ժամ առ ժամ էր հարստանում: Եվ որքան հարստանում էր, այնքան ավելի ագահ էր դառնում: Հուշարարը, որ գիշեր-ցերեկ աշխատում էր՝ նորանոր ստեր հորինելով, վաղուց խնդրում էր տիրոջը, որ աշխատավարձը բարձրացնի, բայց Բուրատինոն ամեն անգամ մի պատճառ էր գտնում նրան մերժելու համար:

– Լավ ես սովորել՝ հավելավճար պահանջել, իսկ երեկ ինձ հազիվ մի երեքսոլդոյանոց սուտ տվեցիր՝ քիթս ընդամենը տասներկու միլիմետր էր աճել: Այսպիսի կտորից ատամմաքրիչ էլ չես սարքի:

– Ես ընտանիք ունեմ,- բացատրում էր հուշարարը,- իսկ կարտոֆիլը թանկացել է:

– Բայց բլիթներն էժանացել են: Ինչո՞ւ չես ուզում կարտոֆիլի փոխարեն բլիթ գնել:

Ի վերջո հուշարարը սկսեց ատել տիրոջը և որոշեց վրեժ լուծել:

– Ես նրան ցույց կտամ,- սպառնաց նա՝ նոր ստեր գրի առնելով թերթիկների վրա:

Մի անգամ թերթիկներից մեկի վրա նա ակամա գրեց. «Պինոքիոյի արկածների» հեղինակը Կառլո Կոլոդին է, իսկ «Ոսկե բանալին» գրել է Ալեքսեյ Տոլստոյը»: Այդ թերթիկն ընկավ ստերով թերթիկների մեջ: Իսկ Բուրատինոն, որ ամբողջ կյանքում ոչ մի գիրք չէր կարդացել, մտածեց, որ սա էլ մյուսների նման հուշարարի հորինած ստերից է, մտքում պահեց այն, որ պետք եղած դեպքում ասի:

Հենց այսպես պատահեց, որ նա կյանքում առաջին անգամ, ակամայից ճշմարտություն ասաց: Բայց հենց այդ պահին այն փայտակտորները, որ հայտնվել էին նրա ստերի արդյունքում, փոշի ու թեփ դարձան, անհետացավ նաև նրա ողջ հարստությունը, ոնց որ ջուրը քշի-տանի: Բուրատինոն նորից դարձավ աղքատ, հայտնվեց իր հին տանը, որտեղ նույնիսկ աթոռ չկար, անգամ մի թաշկինակ, որով նա կարողանար արցունքները սրբել:

Երրորդ ավարտ

Բուրատինոն ոչ թե օրերով, այլ ժամ առ ժամ էր հարստանում: Եվ, իհարկե, շուտով կդառնար աշխարհի ամենահարուստ մարդը, եթե այդ կողմերում չհայտնվեր մի խորամանկ, ամենագետ մարդ: Նա գիտեր անգամ, որ Բուրատինոյի ողջ հարստությունը կցնդեր, եթե նա ճիշտ խոսեր:

– Սինյոր Բուրատինո, այսպես ու այսպես, զգույշ եղեք, նույնիսկ պատահաբար մի ճիշտ բառ չասեք, թե չէ ամեն ինչ կավարտվի: Հասկացա՞ք: Շատ լավ է: Հա՛, ի դեպ, սա ձե՞ր առանձնատունն է:

– Ո-ո-ոչ,- ասաց Բուրատինոն:

– Ուրեմն ե՛ս այստեղ կապրեմ, այն ինձ շատ է դուր գալիս: Իսկ այս պահեստները նո՞ւյնպես ձերը չեն:

– Ո-ո-ոչ,- դժկամությամբ կմկմաց Բուրատինոն՝ չցանկանալով ասել ճշմարտությունը:

– Հրաշալի է, ուրեմն իմը կդառնան…

Այսպես մարդը խլեց Բուրատինոյից մեքենաները, ավտոգնացքները, հեռուստացույցը, ոսկե սղոցը… Բուրատինոն գնալով ավելի ու ավելի էր մռայլվում, բայց ավելի շուտ լեզուն կկտրեր, քան կասեր ճշմարտությունը։

– Ի դեպ,- վերջում հարցրեց մարդը,- սա Ձե՞ր քիթն է։

Այստեղ Բուրատինոն էլ չհամբերեց.

– Իհա՛րկե իմն է։ Եվ Դուք այն չեք կարող խլել ինձանից, վա՛յ նրան, ով կհամարձակվի ձեռք տալ քթիս։

– Այ սա իսկական ճշմարտություն է,- ժպտաց մարդը։

Եվ նույն վայրկյանին Բուրատինոյի ողջ հարստությունն իսկապես տաշեղների վերածվեց, փոշի դարձավ։ Ուժեղ քամի բարձրացավ և քշեց-տարավ ամեն ինչ, նաև խորհրդավոր մարդուն։ Եվ Բուրատիոն մնաց մենակ, դատարկ ձեռքերով, նույնիսկ հազի համար անանուխի մի կոնֆետ անգամ չուներ։

ԽԵՂՃ ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐԸ

Բորտ մոլորակի վրա ապրում էին ուրվականներ, շա՛տ ուրվականներ։ Ապրո՞ւմ էին։ Չէ՛, ավելի ճիշտ՝ հազիվ էին իրենց գոյությունը քարշ տալիս, մի կերպ ծայրը-ծայրին էին հասցնում։ Բոլոր ուրվականների նման նրանք ապրում էին որտեղ պատահի՝ քարանձավներում, հին, կիսաքանդ ամրոցներում, դատարկ, լքված տներում, ձեղնահարկերում։ Կեսգիշերին նրանք դուրս էին գալիս իրենց թաքստոցներից և ցրվում մոլորակով մեկ՝ վախեցնելու բորտացիներին։

Բայց բորտացիները նրանցից բոլորովին չէին վախենում։ Նրանք խելացի մարդիկ էին և ուրվականներին չէին հավատում։ Երբ հանդիպում էին նրանց, այնքան էին ծիծաղում, մինչև ուրվականները, ամոթից կարմրելով, անհետանում էին։

Օրինակ՝ հենց որ ուրվականներից մեկը սկսում էր շղթաները զընգզընգացնել ու ճռռացնել, հայտնվում էր բորտացիներից մեկն ու բղավում.

– Հե՛յ, ուրվակա՛ն, գոնե շղթաներդ մի քիչ յուղիր, թե չէ շատ են ճռճռում։

Իսկ երբ մեկ ուրիշ ուրվական, օրինակ, սկսում էր թափահարել իր ճերմակ սավանը… իսկույն բորտացիներից մեկը, ավելի շուտ մի փոքրիկ տղա ձայն էր տալիս.

– Ի՜նչ ես դեսուդեն ընկնում, շուտ սավանդ բեր, մտցրու լվացքի մեքենայի մեջ։ Վաղուց ժամանակն է, որ այն քիմմաքրման տանես։

Լուսադեմին ուրվականները վախեցած, հուսահատված վերադառնում էին իրենց թաքստոցները և բողոքում.

– Սատանան գիտի, թե ինչ է կատարվում։ Պատկերացնո՞ւմ ես, թե ինձ ինչ ասաց մի սինյորա, որ պատշգամբում նստած գիշերային զովն էր վայելում։ «Տե՛ս,- ասաց,- չուշանաս, քո ժամացույցը ետ է մնում։ Մի՞թե ձեր ուրվականների մեջ մի ժամագործ չկա, որ վերանորոգի այն»։

– Իսկ ի՞նձ։ Նրանք ինձ համար մի գրություն էին թողել, կոճգամով դռանն էին փակցրել։ Եվ գիտե՞ս, թե այնտեղ ինչ էր գրված։ «Հարգելի սինյոր ուրվական, երբ ավարտեք Ձեր զբոսանքը, դուռը կփակեք։ Անցյալ գիշեր դուռը բաց էիք թողել, թափառական կատուները տուն էին մտել և խմել իմ փիսիկի կաթը»։

– Ոչ մի հարգանք ուրվականների նկատմամբ։

– Ոչ մի պատկառանք։

– Պետք է ինչ-որ բան ձեռնարկենք։

– Օրինակ ի՞նչ։

Ինչ-որ մեկն առաջարկեց բողոքի ցույց կազմակերպել, մեկ ուրիշը՝ խփել մոլորակի վրա եղած բոլոր զանգերը, որ բորտացիները չկարողանան քնել։ Վերջապես խոսքը հասավ ամենաձեր և ամենաիմաստուն ուրվականին։

– Տիկնայք և պարոնայք,- ասաց նա՝ կարկատելով իր հնամաշ սավանի ծակերը,- թանկագին բարեկամներ, ոչ մի բան չենք կարող անել։ Բորտացիներին այլևս չենք կարող վախեցնել։ Երբե՛ք։ Նրանք ընտելացել են մեր աղմուկին, գիտեն մեր բոլոր հնարքները, և մեր բողոքները նրանց չեն հուզի։ Ո՛չ, մենք այստեղ այլևս անելիք չունենք…

– Ի՞նչ է նշանակում՝ «այստեղ»։

– Ուզում եմ ասել՝ այս մոլորակի վրա։ Պետք է արտագաղթել, հեռանալ այստեղից…

– Իհարկե, որ հայտնվենք մի մոլորակի վրա, որտեղ միայն մոծակներ ու ճանճե՞ր կան։

– Ոչ, պարոնայք, ես մի շատ հարմար մոլորակ գիտեմ։

– Եվ ինչպե՞ս է այն կոչվում։

– Այդ մոլորակի անունը Երկիր է։ Ես մի հավատարիմ ու վստահելի մարդուց իմացել եմ, որ Երկրի վրա միլիոնավոր երեխաներ են ապրում, որոնք հենց լսում են ուրվականների մասին, վախից գլուխները բարձի տակ են թաքցնում։

– Ի՜նչ հրաշալի բան է։

– Չի՜ կարող պատահել։

– Ինձ այդ մասին պատմել է մի մարդ,- շարունակեց ծեր ուրվականը,- որը կյանքում երբեք սուտ չի խոսում։

– Դե լավ, ուրեմն եկեք քվեարկենք։ Քվեարկենք։

– Ինչի՞ համար քվեարկենք։

– Ո՞վ է համաձայն, որ տեղափոխվենք Երկիր մոլորակ, թող թափահարի իր սավանը։ Սպասեք հաշվեմ. մեկ, երկու, երեք… քառասուն … քառասուն հազար… քառասուն միլիոն… Իսկ ո՞վ է դեմ. մեկ, երկու… Դե ինչ, ճնշող մեծամասնությամբ որոշումն ընդունվեց, գնում ենք։

– Իսկ նրանք, ովքեր դեմ էին, նո՞ւյնպես կարող են գնալ։

– Իհարկե։ Փոքրամասնությունը պետք է հետևի մեծամասնությանը։

– Ե՞րբ ենք մեկնում։

– Վաղը երեկոյան, մութն ընկնելուն պես։

Հաջորդ երեկոյան, դեռ Լուսինը չծագած (ի դեպ, Բորտ մոլորակում տասնչորս Լուսին կա, ու անհասկանալի է, թե ինչպես է նրանց հաջողվում պտտվել նույն մոլորակի շուրջը և չբախվել միմյանց), բորտացի ուրվականները շարք կազմեցին և թափահարեցին իրենց սավանները՝ մեծ, անաղմուկ թևերի նման… Եվ ահա նրանք թռան… Սպիտակ հրթիռների նման թռան դեպի տիեզերք։

– Իսկ ճանապարհից չե՞նք շեղվի

– Մի՛ վախեցեք, ծերուկն այնքան լավ գիտի երկնային ուղերթները, որքան իր մաշված սավանի անցքերը…

Առաջին ավարտ

Լույսի արագությամբ շարժվելով՝ մի քանի րոպե անց բորտացի ուրվականները մոտեցան Երկրագնդին և վայրէջք կատարեցին այն մասում, որ այդ պահին ստվերի մեջ էր, այդտեղ գիշերը նոր էր սկսվում։

– Իսկ հիմա ցրենք մեր կուռ շարքերը և թռչենք տարբեր կողմեր,- ասաց ծեր ուրվականը։- Յուրաքանչյուրը թող ուսումնասիրի իր շուրջը և գործի ըստ իրավիճակի։ Լուսադեմին կհավաքվենք այստեղ և կքննարկենք դրությունը։ Համաձա՞յն եք։

Եվ ուրվականները հալվեցին գիշերային մթության մեջ։

Իսկ երբ լուսադեմին նորից հանդիպեցին, քիչ էր մնում ուրախությունից դուրս թռչեին իրենց սավաններից։

– Տղանե՛ր, սա պարզապես դրախտ է։

– Ի՜նչ երջանկություն։

– Ի՜նչ տոն։

– Ո՞վ կմտածեր, որ այսքան շատ մարդ դեռ հավատում է ուրվականներին։

– Եվ ոչ միայն երեխաները, այլ նաև մեծահասակները։

– Եվ նույնիսկ կրթված մարդիկ։

– Ես մի դոկտորի վախեցրի։

– Իսկ ես՝ նախարարի։ Վախից նույնիսկ նրա մազերը ճերմակեցին։

– Վերջապես մեզ համապատասխան մոլորակ գտանք։ Ես կողմ եմ, որ մնանք այս մոլորակում։

– Ե՛ս էլ։

– Ե՛ս էլ։

Այս անգամ քվեարկելիս ծածանվեցին բոլոր սավանները, ոչ մեկն անշարժ չմնաց։

Երկրորդ ավարտ

Լույսի արագությամբ շարժվելով՝ մի քանի րոպե անց բորտացի ուրվականներն արդեն շատ հեռու էին իրենց մոլորակից։ Ցավոք սրտի, մեկնումից առաջ խառնաշփոթի մեջ ոչ ոք չնկատեց, որ շարասյան առջևում հայտնվել էին հենց այն ուրվականները, որոնք դեմ էին երկիր թռչելուն։ Իսկ դրանք հենց երկրային ուրվականներ էին։, ավելի ճիշտ՝ միլանցի ուրվականներ, որոնք փախել էին Լոմբարդիի մայրաքաղաք Միլանից՝ չդիմանալով հոտած պոմիդորների տարափին, որ նրանց վրա էին նետում տղաները։ Ուրվականները թաքուն եկել էին Բորտ մոլորակ և թաքնվել տեղացի ուրվականների մեջ։ Եվ տուն վերադառնալու մասին նրանք, բնականաբար, լսել անգամ չէին ուզում։ Իսկ եթե որևէ մեկն իմանար, որ նրանք երկրացի ուրվականներ էին, նրանց վիճակը լավ չէր լինի։ Ու այդ ժամանակ նրանք մտածեցին... Ինչ որ մտածեցին, այն էլ արեցին։

Նրանք շարասյան գլուխն անցան։ Բոլորը ենթադրում էին, որ ծեր, իմաստուն ուրվականն է ցույց տալիս ճանապարհը, իսկ նա թռչելիս ննջում էր։ Իսկ երկրացի ուրվականները, Երկիր թռչելու փոխարեն, փոխեցին ճանապարհը և ուղղություն վերցրին դեպի Պիկյո մոլորակ, որը գտնվում էր երեք հարյուր միլիոն միլիարդ կիլոմետր և յոթ սանտիմետր հեռավորության վրա։ Այդ մոլորակում միայն ինչ-որ խոսող գորտեր էին ապրում։ Բորտացի ուրվականներն այնտեղ վատ չէին ապրում, համենայն դեպս մի քանի հարյուր տարի։ Իսկ հետո գորտերն էլ դադարեցին վախենալ նրանցից։

Երրորդ ավարտ

Լույսի արագությամբ շարժվելով՝ մի քանի րոպե անց բորտացի ուրվականները հայտնվեցին Լուսնի մոտ և արդեն պատրաստվում էին վայրէջք կատարել Երկրի վրա և իրենց գործին անցնել, երբ հանկարծ տեսան, որ Երկրից դերի իրենց է թռչում ուրվականների նույնպիսի մի հոծ շարասյուն։

– Հե՛յ, ովքե՞ր եք։

– Իսկ դո՞ւք ովքեր եք։

– Դա ազնիվ չէ, մենք առաջինը հարցրեցինք։

– Մենք ուրվականներ ենք, Երկիր մոլորակից։ Հեռանում ենք, քանի որ այստեղ այլևս ոչ ոք մեզնից չի վախենում։

– Եվ դեպի ո՞ւր եք թռչում։

– Դեպի Բորտ մոլորակ։ Մեզ ասել են, որ այնտեղ մարդիկ կան, ում կարելի է վախեցնել։

– Դժբախտնե՛ր։ Իմացեք, որ մենք հենց այդ մոլորակից ենք հեռացել, քանի որ այնտեղ ուրվականներն այլևս անելու բան չունեն։

– Գրողը տանի, բա ի՞նչ անենք։

– Եկեք միավորվենք և փնտրենք մի այնպիսի մոլորակ, որտեղ վախկոտներ են ապրում։ Մի՞թե ամբողջ Տիեզերքում չի գտնվի գոնե մի այդպիսի մոլորակ...

– Իհարկե, հենց այդպես էլ պետք է անել...

Այդպես էլ արեցին։ Բորտացի և երկրացի ուրվականները միավորվեցին, մի փոքր շեղեցին ճանապարհը և անհետացան Տիեզերքի խորքերում։

ՀԱՉԵԼ ՉԻՄԱՑՈՂ ՇՈՒՆԸ

Կար-չկար մի շուն, որը չէր կարողանում հաչել։ Ո՛չ հաչել, ո՛չ մլավել, ո՛չ բառաչել, ո՛չ խրխնջալ, ոչ մի կերպ չէր կարողանում խոսել։ Դա շատ սովորական փոքրիկ շուն էր։ Եվ ոչ ոք չգիտեր, թե որտեղից էր նա հայտնվել այդ գյուղում, որտեղ ոչ մեկը դեռևս ոչ մի շուն չէր տեսել։ Եվ իհարկե հասկանալի է, որ ինքը նույնիսկ չէր էլ կասկածում, որ հաչել չգիտի։ Բայց մի անգամ ինչ-որ մեկը հարցրեց նրան.

– Հետաքրքիր է, իսկ ինչո՞ւ, դու երբեք չես հաչում։

– Հաչե՞լ։ Իսկ դա ի՞նչ է։ Ես տեղացի չեմ, չեմ կարող։

– Այ քեզ տարօրինակ արարած։ Ի՞նչ է, չգիտե՞ս, որը բոլոր շները հաչում են։

– Ինչի՞ համար։

– Ոչ թե ինչի՞ համար, այլ՝ ինչո՞ւ։ Որովհետև նրանք շներ են։ Հաչում են անցորդների, կասկածելի կատուների, լուսնի վրա։ Հաչում են, երբ գոհ են կյանքից, երբ նյարդայնանում են կամ զայրանում։ Հաչում են հիմնականում ցերեկը, բայց պատահում է նաև գիշերը։

– Շատ հնարավոր է, բայց ես...

– Իսկ դու էդ ի՞նչ առանձնահատուկ պտուղ ես։ Թե՞ ուզում ես, որ քո մասին գրեն թերթերում։

Շունը չգիտեր, թե ինչ պատասխանի։ Նա չէր կարողանում հաչել և չգիտեր էլ, թե ինչպես սովորի։

– Իսկ դու ինձ նման արա,- խղճահարությունից խորհուրդը տվեց ինչ-որ աքաղաղ։ Եվ նա մի քանի անգամ կանչեց իր զրնգուն ձայնով՝ «Ծուղ-ղու-ղո՜ւ»։

– Իմ կարծիքով դա ամենևին հեշտ չէ,- նկատեց շունը։

– Ի՜նչ ես ասում, նույնիսկ շա՜տ հեշտ է։ Նորից լսիր և ուշադրություն դարձրու իմ կտուցին։ Կարճ ասած՝ նայի՛ր և կրկնի՛ր;

Եվ աքլորը մի անգամ էլ երգեց՝ «Ծուղ-ղու-ղո՜ւ»։

Շունը փորձեց կրկնել, բայց հազիվ ինչ-որ խեղճ «ծուղ-խուղ» դուրս եկավ, և հավերը վախեցած ցրիվ եկան։

–Ոչի՛նչ,- շանը հանգստացրեց աքաղաղը,- առաջին անգամվա համար նույնիսկ վատ չէ։ Իսկ հիմա կրկնի՛ր, դե՛։

Շունը նորից փորձեց աքաղաղի նման ծուղրուղու կանչել, բայց նորից ոչինչ չստացվեց։ Ու նա սկսեց օր-օրի թաքուն վարժվել, երբեմն գնում էր անտառ, որտեղ ոչ ոք չէր խանգարում և կարող էր ուզածի չափ ծուղրուղու կանչել։

Եվ մի անգամ առավոտյան նա անտառում այնքան լավ, այնքան զնգուն ու գեղեցիկ ծուղրուղու կանչեց, որ աղվեսը, լսելով աքաղաղի ձայնը, մտածեց. «Վերջապես աքլորիկն ինձ այցելության եկավ։ Պետք է շտապ շնորհակալություն ասել այցելության համար...»։ Եվ շտապեց նրան ընդառաջ՝ չմոռանալով հետը վերցնել դանակ, պատառաքաղ և անձեռոցիկ, որովհետև աղվեսի համար չկա ավելի ախորժելի ճաշատեսակ, քան լավ աքլորը։ Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքան տխրեց աղվեսը, երբ աքլորի փոխարեն տեսավ շնիկին, որը նստել էր իր պոչին և բարձրաձայն ծուղրուղու էր կանչում։

– Ա՜խ,- բացականչեց աղվեսը,- այսպես կարելի է թակարդն էլ ընկնել։

– Թակա՞րդը։

– Դե, իհարկե։ Կարծում էի, թե դու քեզ անտառում մոլորված աքլորի տեղ ես դրել, որպեսզի բռնես ինձ։ Լավ է, որ ժամանակին տեսա քեզ։ Բայց սա անազնիվ որս է։ Շները սովորաբար հաչում են ու զգուշացնում, որ որսորդները մոտենում են։

– Հավատացնում եմ... Ես չէի պատրաստվում որս անել։ Ես եկել էի վարժվելու։

– Վարժվելո՞ւ։ Ինչո՞ւմ։

– Ես սովորում եմ հաչել: Եվ համարյա սովորել եմ: Լսի՛ր, թե ինչ լավ եմ հաչում: Եվ նա բարձրաձայն երգեց՝ «Ծուղ-ղու-ղո՛ւ»:

Աղվեսը ծիծաղից քիչ էր մնում պայթեր: Նա փորը բռնած թավալ էր գալիս գետնին և ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ: Մեր շնիկը շատ վիրավորվեց, որ իր վրա ծիծաղում են, չէ՞ որ այդքա՛ն չարչարվել էր: Պոչը քաշած և համարյա լաց լինելով գնաց տուն: Եվ ահա նրան հանդիպեց կկուն: Նայեց տխուր շնիկին և խղճաց նրան:

– Ի՞նչ է պատահել:

– Ոչի՛նչ...

– Ինչո՞ւ ես այդքան տխուր:

– Ա՛խ... այսպես ու այսպես... Պատճառն այն է, որ հաչել չեմ կարողանում: Եվ ոչ ոք չի կարողանում սովորեցնել ինձ:

– Դե, եթե խնդիրը միայն դա է, ես շատ արագ կսովորեցնեմ քեզ: Լավ լսի՛ր, թե ինչպես եմ երգում, և կրկնիր ինձ նման. «Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ»: Հասկացա՞ր:

- Ոնց որ այնքան էլ դժվար չէ...

- Շատ հեշտ է: Ես երեխա ժամանակից կարողանում եմ կուկու կանչել: Դու էլ փորձիր. «Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ»:

– Կու...,- փորձեց շունը,- կու...

Նա շատ անգամ կրկնեց այդ «կու-կու»-ն և՛ այդ օրը, և՛ մյուս օրերին: Իսկ մի շաբաթ անց արդեն կարողանում էր բավականին լավ կուկու կանչել: Նա շատ գոհ էր իրենից և մտածում էր. «Վերջապես, վերջապես ես սկսում եմ իսկապես հաչել: Հիմա էլ ոչ մեկը չի ծիծաղի ինձ վրա»:

Հենց այդ օրերին սկսվել էր որսի շրջանը: Անտառում շատ որսորդներ էին հայտնվել, այդ թվում նաև այնպիսիները, որոնք կրակում էին որտեղ պատահի և ում պատահի: Կարող էին նույնիսկ սոխակի վրա կրակել, եթե լսեին նրա ձայնը:

Եվ ահա այդպիսի մի որսորդ անցնում էր անտառով և լսեց թփերի միջից՝ «Կո՛ւ-կո՛ւ.... կո՛ւ-կո՛ւ...»: Նա բարձրացրեց հրացանը, նշան բռնեց և կրակեց՝ թըխկ-թրըխկ:

Գնդակները բարեբախտաբար չկպան շնիկին: Սուլելով թռան ականջի մոտով, բայց շունը վախեցավ, և պո՛ւկ փախավ: Նա շատ զարմացավ: «Երևի այս որսորդը խելքը թռցրել է», եթե կրակում է հաչացող շան վրա...»

Իսկ որսորդն այդ ժամանակ իր որսն էր փնտրում: Նա վստահ էր, որ կպել է թիրախին: «Երևի թռչունին այն շունը գողացավ, որ հանկարծ դուրս թռավ ինչ-որ տեղից»,- մտածեց նա: Եվ հոգին թեթևացնելու համար կրակեց իր բնից գլուխը հանած մկնիկի վրա, բայց նրան էլ չկպավ:

Իսկ շնիկը փախչում էր ու փախչում...

Առաջին ավարտ

Վազեց, վազեց շնիկը և հայտնվեց մարգագետնում, որտեղ հանգիստ արածում էր կովը։

- Ո՞ւր ես այդպես շտապում։

- Ինքս էլ չգիտեմ...

- Դե, ուրեմն կանգ առ։ Այստեղ հրաշալի խոտ կա։

- Ա՜խ, եթե հոգսս խոտը լիներ...

- Դու ի՞նչ է, հիվա՞նդ ես։

- Ավելի վատ, ես հաչել չգիտեմ։

- Բայց դա աշխարհի ամենահեշտ բանն է։ Լսի՛ր ինձ. «Մո՜ւ-ո՜ւ, մո՜ւ-ո՜ւ,...»։ Գեղեցիկ է, չէ՞։

- Վատ չի։ Բայց ես համոզված չեմ, որ դա հենց այն է, ինչ պետք է ինձ։ Չէ՞ որ դու կով ես...

- Իհարկե կով եմ։

- Իսկ ես՝ ոչ։ Ես շուն եմ։

- Հասկանալի է, որ դու շուն ես։ Հետո՞ ինչ։ Քեզ ի՞նչն է խանգարում, որ իմ լեզուն սովորես։

- Գիտե՞ս, դա հետաքրքիր միտք է, հոյակապ գաղափար։

- Ի՞նչը։

- Այն, որ հենց նոր մտքովս անցավ։ Ես կսովորեմ բոլոր կենդանիների լեզուները, ելույթ կունենամ կրկեսում։ Բոլորը կծափահարեն ինձ, ես կհարստանամ և կամուսնանամ թագավորի տղայի հետ։

- Կեցցե՛ս, շատ լավ ես մտածել։ Դե, ուրեմն գործի՛ անցիր։ Ուշադիր լսիր. «Մո՜ւ-ո՜ւ, մո՜ւ-ո՜ւ, մո՜ւ-ո՜ւ ...»։

- Մո՜ւ-ո՜ւ,- բառաչեց շունը։

Այս շունը հաչել չգիտեր, դրա փոխարեն շատ ընդունակ էր լեզուներ սովորելու հարցում։

Երկրորդ ավարտ

Վազեց, վազեց շնիկը... և հանդիպեց գյուղացուն։

- Էդ ո՞ւր ես էդպես սլանում։

- Ինքս էլ չգիտեմ...

- Այդ դեպքում ինձ հետ արի։ Ինձ էլ հենց շուն է պետք հավանոցը հսկելու համար։

- Ես կգայի, բայց, ախր, հաչել չգիտեմ։

- Ավելի լավ։ Հաչող շները միայն օգնում են գողերին փախչել։ Իսկ քեզ նրանք չեն լսի, մոտ կգան, դու էլ նրանց կբռնես, մի լավ կկծես, որ խելքները տեղը գա։

- Համաձայն եմ,- պատասխանեց շունը։

Այդպես էլ պատահեց, որ հաչել չկարողացող շունը վերջապես իր համար գտավ զբաղմունք, վզակապ և ոսկորներով լի կերաման՝ ողջ կյանքի համար։

Երրորդ ավարտ

Վազեց, վազեց շնիկը... և հանկարծ կանգ առավ։ Ինչ-որ անսովոր ձայն լսեց։ «Հա՛ֆ-հա՛ֆ-հա՛ֆ,- ասում էր ինչ-որ մեկը,- հա՛ֆ»։ «Ինչ-որ հարազատ ու ծանոթ ձայն է,- մտածեց շունը,- թեև ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե ինչ կենդանի է խոսում։ Երևի ընձուղտ է։ Չէ՛, երևի կոկորդիլոս է։ Կոկորդիլոսը չար կենդանի է, հարկավոր է զգույշ լինել»։

Թփերի հետևում թաքնվելով՝ շունը շարժվեց դեպի այն կողմ, որտեղից այդ «հաֆ-հաֆ»-ն էր լսվում, և որից, աստված գիտե թե ինչու, նրա սիրտն ուժգին բաբախում էր։

- Հա՛ֆ-հա՛ֆ։

- Ա՛յ քեզ բան, շուն է։

Այո՛, այո՛։ Ընդ որում, դա հենց այն որսորդի շունն էր, որը կրակեց, երբ նա «կու-կու» էր կանչում։

- Բարև՛, շո՛ւն։

- Բարև՛, շո՛ւն։

- Այդ ի՞նչ ձայներ ես հանում։

- Ձայնե՞ր։ Իմացած լինես, որ սրանք պարզապես ձայներ չեն, սա հաչոց է։

- Հաչո՞ց, դու հաչե՞լ գիտես։

- Միանգամայն բնական է։ Ես հո փղի պես չեմ կանչելու, կամ առյուծի պես մռնչամ։

- Ինձ էլ սովորեցրու։

- Իսկ դու մի՞թե հաչել չգիտես։

- Ոչ...

- Ուշադիր լսիր։ Այսպես են հաչում. «Հա՛ֆ-հա՛ֆ»։

- Հա՛ֆ-հա՛ֆ,- իսկույն հաչեց շունը։ Եվ ուրախ ու երջանիկ մտածեց. «Վերջապես լավ ուսուցիչ գտա»։

ՏՈՒՆԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Կար չկար մի ժամանակ մի շատ հարուստ սինյոր կար։ Նա նույնիսկ ամենահարուստ ամերիկացի միլիարդատիրոջից էլ հարուստ էր։ Մի խոսքով՝ շա՛տ-շատ հարուստ։ Իր փողերը նա պահում էր հսկայական պահեստներում, որոնք մինչև առաստաղը լեփ-լեցուն էին ոսկե,

արծաթե, նիկելե դրամներով։ Այստեղ կային իտալական լիրեր, շվեյցարական ֆրանկներ, անգլիական ֆունտ-ստերլինգներ, ամերիկյան դոլարներ, ռուսական ռուբլիներ, լեհական զլոտիներ, հարավսլա-վական դինարներ։ Աշխարհի բոլոր երկրների և բոլոր ազգերի դրամներ՝ ցենտներներներով ու տոննաներով։ Նա նաև անհամար քանակությամբ թղթադրամներ ուներ. հազարավոր բերնեբերան լցված և զմռսված ու կնքված պարկերով։ Նրա անունը սինյոր Մոնետտի էր։

Եվ ահա մի անգամ նա ցանկացավ իր համար տուն կառուցել։

- Անապատում կկառուցեմ տունս,- որոշեց նա,- մարդկանցից հեռու։

Բայց անապատում շինարարության համար ո՛չ քար կար, ոչ՛ աղյուս, ո՛չ կիր, ո՛չ տախտակներ, ո՛չ մարմար... Ոչինչ չկա, միայն ավազ։

- Կարևոր չէ,- ինքն իրեն ասաց սինյոր Մոնետտին,- իմ փողերով տուն կկառուցեմ։ Քարերի, աղյուսների, տախտակների ու մարմարի փոխարեն դրամներ կօգտագործեմ։

Նա կանչեց ճարտարապետին և հանձնարարեց տունը նախագծել։

- Թող այնտեղ 365 սենյակ լինի,- հրահանգեց սինյոր Մոնետին,- մի-մի սենյակ՝ տարվա յուրաքանչյուր օրվա համար։ Եվ տասներկու հարկ՝ մեկական՝ տարվա յուրաքանչյուր ամսվա համար։ Եվ թող հիսուներկու սանդուղք լինի տան մեջ՝ մեկական՝ տարվա յուրաքանչյուր շաբաթվա համար։ Եվ այդ բոլորը թող փողերից պատրաստվի, պա՞րզ է։

- Իսկ մեխե՞րը... Առանց մեխ ոչինչ հնարավոր չէ անել... Դրանք ստիպված կլինենք բերել։

- Ոչ մի դեպքում։ Մեխե՞ր են անհրաժեշտ, վերցրեք իմ ոսկեդրամները և դրանցից ոսկե մեխեր ձուլեք։

- Իսկ տանիքի համար կղմինդրներ են անհրաժեշտ...

- Ոչ մի կղմինդր։ Վերցրեք իմ արծաթե դրամները, դրանցից տանիքի շատ լավ ծածկ կստածվի։

Եվ ճարտարապետը նախագծեց տունը։ Որպեսզի անապատ բերեն տան համար անհրաժեշտ բոլոր դրամները, երեք հազար հինգ հարյուր ավտոքարշակ պետք եղավ։ Իսկ շինարար բանվորներին տեղավորելու համար չորս հարյուր վրան խփեցին։ Եվ աշխատանքը եռաց։ Սկզբում տան հիմքի համար մի մեծ փոս՝ խանդակ փորեցին, բայց այնտեղ երկաթբետոնե սյուներ չտնկեցին և սալեր չշարեցին, այլ լցրեցին մետաղադրամներով։ Մեկը մյուսի հետևից մոտենում էին բերնեբերան մետաղադրամներով լեցուն բեռնատար մեքենաները և խանդակի մեջ էին լցնում իրենց թանկարժեք բեռը։ Հետո սկսեցին պատերը շարել. մեկ առ մեկ սկսեցին դնել դրամը դրամի վրա։ Սկզբում մի շերտ մետաղադրամ, հետո՝ մի քիչ շաղախ, դրա վրա՝ էլի

դրամներ... Առաջին հարկն ամբոջովին շարեցին իտալական 500 լիրանոց արծաթե դրամներով, երկրորդ հարկը՝ ամբողջովին դոլարներով... Դռները նույնպես դրամներով պատրաստեցին՝ ջանասիրաբար իրար սոսնձելով մետաղադրամները: Հետո պատուհանները սարքեցին, բայց ապակի պետք չեկավ, դրանք փոխարինեցին թղթադրամներով. ավստրիական շիլլինգները միացրեցին գերմանական մարկերի հետ, իսկ ներսից՝ սենյակների կողմից վարագույրների նման ծածկեցին թուրքական և շվեդական թղթադրամներով:

Տանիքը, խողովակները և բուխարիները նույնպես մետաղադրամներից շարեցին: Կահույքը, լոգարանները, ծորակները, գորգերը, աստիճանները, նկուղի պատուհանների վանդա-կաճաղերը, զուգարանները, ամեն ինչ մետաղադրամներից պատրաստեցին: Դրամներ, դրամներ, ամենուրեք դրամներ, միայն դրամներ… Իսկ երեկոյան պարոն Մոնետին անպայման ստուգում էր շինարարությունից հեռացող աշխատողներին. հանկարծ ինչ-որ մեկը գրպանում կամ կոշիկի մեջ մի քանի սոլդո կտաներ: Նա ստիպում էր անգամ լեզուն ցույց տալ, որովհետև ցանկության դեպքում կարելի էր և բերանում ռուփի, պիաստր կամ պեսետ պահել:

Երբ շինարարությունն ավարտեցին, դեռ մետղադրամների մի ամբողջ սար էլ մնացել էր: Սինյոր Մոնետին պատվիրեց դրանք լցնել նկուղները, դասավորել ձեղնահարկում և դրանցով լցնել գրեթե բոլոր սենյակները՝դրամի կույտերի մեջ թողնելով միայն նեղ անցումներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավոր լիներ հասնել դրանց և հաշվել:

Հետո բոլորը գնացին. ճարտարապետը, աշխղեկը, բանվորները, բեռնատար մեքենաների վարորդները: Եվ պարոն Մոնետին մենակ մնաց իր մեծ տանը, անապատի մեջ գտնվող այդ փողե պալատում: Ամենուրեք, որ կողմ էլ նայեիր՝ հատակին, առաստաղին, աջ, ձախ, առաջ, հետ, որ կողմ էլ պտտվեիր, ամենուրեք տեսնում էիր միայն փող, փող, փող: Քանի որ նույնիսկ հարյուրավոր թանկարժեք նկարները, որոնք կախված էին պատերին, փողից էին պատրաստված: Եվ սրահներում դրված հարյուրավոր արձանները նույնպես ձուլված էին բրոնզե, պղնձե կամ նիկելե դրամներից:

Պարոն Մոնետիի տան շուրջը ձգվում էր անսահման անապատը: Այն տարածվում էր հեռու՝ բոլոր ուղղություններով: Պատահում էր, հյուսիսից կամ հարավից ուժեղ քամի էր փչում, այդ ժամանակ պատուհանների փեղկերն ու դռները զնգզնգում էին՝ անսովոր ձայներ արձակելով, որ նման էր մեղմ երաժշտական համազանգի: Եվ սինյոր Մոնետին իր նուրբ լսողությամբ կարողանում էր տարբերակել տարբեր երկրների դրամների ձայնը: «Այսպիսի «զըրընգոց»,- նկատում էր նա,- միայն դանիական կրոններն են արձակում: Այս «զնգոցը»

հոլանդական ֆլորիններինն է… Իսկ հիմա լսվում են Բրազիլիայի, Զամբիայի, Գվատեմալայի ձայները…»

Երբ սինյոր Մոնետին բարձրանում էր աստիճաններով, առանց նայելու էլ, կրունկների տակ հնչող ոտնաձայնից ճանաչում էր այն մետաղադրամները, որոնց վրայով քայլում էր (նրա ոտքերը շատ զգայուն էին): Բարձրանալիս նա փակ աչքերով մրմնջում էր. «Ռումինիա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իսլանդիա, Գանա, Ճապոնիա, Հարաֆային Աֆրիկա…»

Պարոն Մոնետին քնում էր մահճակալին, որն, իհարկե, նույնպես մետաղադրամներից էր պատրաստված: Մահճակալի գլխամասը հին ոսկեդրամներից՝ մարենգներից էր պատրաստված, իսկ սավանները կարված էին հարյուր հազարանոց լիրերով: Սավանները նա փոխում էր ամեն օր, որովհետև չափազանց մաքրասեր էր: Օգտագործված սավանները պահում էր մետաղյա գանձապահարանում: Քնելուց առաջ նա սովորաբար ինչ-որ գիրք էր կարդում իր գրադարանից: Գրքերի հատորները հինգ մայրցամաքների երկրների թղթադրամներ էին, որոնք խնամքով կազմված էին իրար հետ: Սինյոր Մոնետին երբեք չէր հոգնում այդ գրքերը կարդալուց, քանի որ շատ կրթված մարդ էր: Մի օր գիշերը, երբ կարդում էր Ավստրալիական պետական բանկի թղթադրամներից կազմված գիրքը...

Առաջին ավարտ

Մի օր գիշերը պարոն Մոնետին հանկարծ լսեց, որ ինչ-որ մեկը թակում է դուռը: Նա իսկույն անսխալ կռահեց. «Թակում են ավստրիացի կայսրուհի Մարիա Թերեզայի ժամանակի հին թալերներով պատրաստված դուռը»: Նա գնաց նայելու և համոզվեց, որ չի սխալվել: Թակողներն ավազակներ էին:

- Քսա՛կդ կամ կամ կյա՛նքդ:

- Խնդրե՛մ, պարոններ, մտե՛ք և կհամոզվեք. ես դրամապանակ չունեմ:

Ավազակները մտան տուն, բայց չմտածեցին անգամ նայել պատերին, դռներին, պատուհաններին, կահույքին, միանգամից սկսեցին գանձապահարանը փնտրել: Գտան, բայց այնտեղ միայն սավաններ կային: Ավազակները հո չէի՞ն հետազոտելու, թե դրանք ինչից են կարված՝ վուշի՞ց, թե՞ ջրանիշերով թղթերից:

Ամբողջ շենքում՝ առաջինից մինչև տասներկուերորդ հարկը իրոք չկար ոչ մի քսակ, դրամապանակ, ոչ մի պայուսակ կամ պարկ: Ամենուրեք սենյակներում ինչ-որ իրերի կույտեր էին, նկուղներում և ձեղնահարկում նույնպես, բայց մթության մեջ հնարավոր չէր տեսնել, թե ինչ է դա: Բացի այդ, ավազակներն իրենք էլ շատ լավ գիտեին, թե իրենց ինչ է պետք. դրամապանակ: Իսկ սինյոր Մոնետին դրամապանակ չուներ:

Ավազակները սկզբում ջղայնացան, իսկ հետո նույնիսկ լաց եղան բարկությունից: Չէ՞ որ այդքան ճանապարհ էին կտրել անապատի միջով հանուն այս թալանի, և հիմա ստիպված էին դատարկաձեռն վերադառնալ: Սինյոր Մոնետին նրանց հանգստացնելու համար սառույցով լիմոնադ առաջարկեց: Ավազակները հագեցրին ծարավը և հեռացան գիշերային մթության մեջ՝ դառն արցունքներ թափելով ավազների մեջ:

Երկրորդ ավարտ

Մի օր գիշերը սինյոր Մոնետին հանկարծ լսեց, որ ինչ-որ մեկը թակում է դուռը: Նա իսկույն անսխալ կռահեց. «Թակում են հնագույն եթովպիական թալերներով պատրաստված դուռը»: Նա իջավ ներքև և բացեց այդ դուռը: Նրա առջև կանգնած էին անապատում կորած երկու երեխա: Նրանք քաղցած ու մրսած էին և դառնորեն լաց էին լինում:

- Օգնեցե՛ք մեզ, խնդրո՛ւմ ենք…

Սինյոր Մոնետին բարկացած դուռը փակեց նրանց երեսին: Բայց երեխաները շարունակում էին թակել և շատ երկար թակեցին: Վերջապես պարոն Մոնետին խղճաց նրանց:

- Ահա թե ինչ, վերցրե՛ք այս դուռը:

Երեխաները վերցրեցին դուռը: Այն շատ ծանր էր, քանի որ ամբողջովին պատրաստված էր ոսկուց: Բայց, եթե նրանք դա տուն հասցնեին, կարող էին գնել հաց ու կաթ և նույնիսկ մի քիչ սուրճ:

Մի քանի օր անց պարոն Մոնետիի մոտ էլի երկու աղքատ երեխաներ եկան, և նա մեկ ուրիշ դուռ նվիրեց նրանց: Հետո, երբ բոլորն իմացան,որ նա դարձել է բարի ու առատաձեռն, աշխարհի բոլոր ծայրերից աղքատները շտապեցին նրա մոտ: Ոչ-ոք դատարկաձեռն չէր հեռանում: Մեկին պատուհան էր նվիրում,մյուսին՝ աթոռ, որ պատրաստված էր չենտեզիմոյանոց[1] մանրադրամներից և այդպես շարունակ: Մեկ տարի անց հերթը հասավ տանիքին և վերջին հարկին:

Իսկ աղքատները աշխարհի բոլոր ծայրերից դեռ գալիս ու գալիս էին նրա մոտ և երկար հերթի էին կանգնում: «Ես չգիտեի, որ նրանք այսքան շատ են»,- զարմանում էր պարոն Մոնետին:

Եվ նա օգնում էր նրանց տարին տարվա ետևից՝ կամաց-կամաց քանդելով իր պալատը: Իսկ երբ պալատից ոչինչ չմնաց, նա տեղափոխվեց վրանի մեջ ինչպես արաբ թափառական բեդվին կամ զբոսաշրջիկ: Եվ նրա հոգին շատ էր թեթևացել, ու նա շատ ուրախ էր:

Երրորդ ավարտ

[1] Չենտեզիմո - իտալական հին մանրադրամ, 1 լիրը հավասար էր 100 չենտեզիմոյի:

Մի օր գիշերը,երբ պարոն Մոնետին քնից առաջ թերթում էր թղթադրամներից պատրաստված գիրքը, հանկարծ դրանց մեջ մի կեղծ թղթադրամ նկատեց: Ինչպե՞ս է այն այստեղ հայտնվել: Եվ գուցե միայն այս մե՞կը չէ, որ կեղծ է: Նա հուզմունքով սկսեց մեկը մյուսի հետևից թերթել իր բոլոր գրքերը և գտավ ևս տասներկու կեղծ թղթադրամներ:

- Իսկ պատահաբար իմ տանը չկա՞ն կեղծ մետաղադրամներ: Պետք է ստուգել:

Իսկ նա, ինչպես գիտեք, շատ նրբազգաց էր: Եվ այն միտքը, որ ինչ-որ տեղ, իր պալատի ինչ-որ անկյունում՝ տանիքում, մանրահատակի, դռների կամ պատի մեջ կարող էր կեղծ դրամ լինել, հանգիստ չէր տալիս նրան, պարզապես զրկել էր քնից:

Եվ նա, կեղծ դրամներ փնտրելով, սկսեց քանդել իր պալատը: Սկսեց տանիքից և հարկ առ հարկ իջավ ներքև: Եթե կեղծ դրամ էր գտնում, շատ էր ուրախանում:

- Ճանաչում եմ. այս դրամն ինձ այսինչ խարդախն է տվել:

Նա հինգ մատի պես ճանաչում էր իր բոլոր դրամները: Եվ դրանց մեջ ընդամենը մի քանի կեղծ դրամներ կային, քանի որ նա միշտ շատ զգույշ և ուշադիր էր լինում, երբ գործ էր ունենում փողերի հետ: Բայց ինչ-որ պահի, հասկանալի է, ամեն մարդ էլ կարող է ուշադրությունը շեղել:

Ի վերջո սինյոր Մոնետին ամբողջ տունը մաս-մաս արեց և հայտնվեց ոսկե ու արծաթե բեկորների կույտի վրա նստած: Նա չէր ուզում տունը նորից կառուցել, պարզապես այլևս հետաքրքիր չէր: Իսկ փողերի կույտն ափսոս էր: Եվ այդպես էլ նստած մնաց այդ կույտի վրա՝ չարությունից չիմանալով, թե ինչ անի: Իսկ հետո ոչ այն է՝ չարությունից, ոչ այն է՝ փողերի կույտի վրա այդքան երկար նստելուց, սկսեց փոքրանալ: Գնալով նա ավելի ու ավելի էր փոքրանում և վերջապես դարձավ մետաղադրամ: Կեղծ մետաղադրամ: Եվ մարդիկ, որոնք հետո վերցրեցին նրա փողերը, այդ մետաղադրամը պարզապես դեն նետեցին ավազների մեջ:

ՍՐՆԳԱՀԱՐԸ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Կար-չկար մի հրաշագործ սրնգահար կար: Սակայն դա հին հեքիաթ է, և բոլորն այն գիտեն: Հեքիաթ այն մասին, թե ինչպես էր քաղաքը լցվել մկներով, և մի տղա կախարդական սրնգի օգնությամբ նրանց դուրս հանեց քաղաքից, լցրեց գետը, և նրանք խեղդվեցին: Քաղաքապետը չցանկացավ շնորհակալություն հայտնել սրնգահարին, իսկ նա քաղաքից տարավ բոլոր երեխաներին...

Իմ հեքիաթը նույնպես սրնգահարի մասին է: Գուցե նույնիսկ հենց նույն սրնգահարի մասին է, իսկ գուցե և՝ ոչ: Այս անգամ քաղաքը գրավել էին... մեքենաները: Նրանք հեղեղել էին բոլոր փողոցները, բոլոր մայթերն ու հրապարակները, փակել էին բոլոր դարպասամուտքերը:

Ամենուրեք, որտեղ նայեիր, կանգնած էին ամենատարբեր մեքենաներ. մարդատար, բեռնատար, արկղիկների պես փոքր և շոգենավի պես երկար, ավտոբուսներ, բեռնատարներ, ինքնաթափեր, ավտոգնացքներ, բեռնաքարշեր ու բեռնաքարշիկներ... Դրանցից շատերը դժվարությամբ էին շարժվում. հրմշտելով, դղրդացնելով թափարգելները, ճզմելով կողերը: Բայց, թերևս, ավելի շատ էին այն մեքենաները, որոնք այլևս չէին կարողանում շարժվել, որովհետև տեղ չկար: Եվ նրանք ստիպված կանգ էին առել: Այնպես որ, մարդիկ ճարահատ ոտքով էին քայլում: Բայց դա այնքան էլ հեշտ չէր, քանի որ մեքենաները զբաղեցրել էին ամբողջ ազատ տարածքը: Եվ մարդիկ ստիպված շրջանցում էին մեքենաները, մագլցում նրանց վրայով և նույնիսկ սողում նրանց տակով: Առավոտից իրիկուն այսուայնտեղ հնչում էր.

- Ա՜խ,- դա ինչ-որ անցորդ էր, որ բախվել էր մեքենայի ծածկոցին:

- Վա՜խ,- սրանք էլ երկու անցորդներ էին, որ ճակատ-ճակատի տվեցին՝ բեռնատարի տակով սողալիս:

Մարդիկ, հասկանալի է, բարկությունից կորցնում էին համբերությունը:

- Հարկավոր է վե՛րջ տալ այս խայտառակությանը:

- Պետք է ինչ-որ բան ձեռնարկել:

- Ինչո՞ւ քաղաքապետը չի մտածում այս մասին:

Քաղաքապետը լսում էր այս խոսակցությունները և քրթմնջում. «Մտածելը մտածում եմ: Գիշեր-ցերեկ մտածում եմ: Նույնիսկ ամբողջ հանգստյան օրն եմ մտածել: Բայց, դժբախտաբար, ոչ մի ելք չեմ կարողանում գտնել: Պարզապես չգիտեմ ի՞նչ անել, և ընդհանրապես ինչի՞ց սկսեմ: Բայց չէ՞ որ իմ գլուխը ոչ մեկի գլխից հիմար չէ»:

Մի անգամ քաղաքապետի մոտ մի տարօրինակ տղա եկավ: Նա ոչխարի մորթուց կարված բաճկոնով էր, փայտե կոշիկներով, իսկ գլխին կապույտ ժապավենով զարդարված թասակ ուներ, այնպես որ շատ նման էր գյուղական պարկապզուկ նվագողի: Բայց պարկապզուկ չուներ: Տղան խնդրեց իրեն քաղաքապետի մոտ թողնել, բայց պահակը շատ խիստ հայտարարեց.

- Հանգիստ թող քաղաքապետին: Նա հիմա քո պարկապզուկի ժամանակը չունի:

- Բայց ես պարկապզուկ չունեմ էլ:

- Ավելի վատ: Չունես, ուրեմն նրա ինչի՞ն ես պետք:

- Ասացե՛ք նրան, որ ես գիտեմ, թե ինչպես ազատել քաղաքը մեքենաներից:

- Ի՞նչ, ի՞նչ: Լսի՛ր հեռացի՛ր այստեղից, քանի դեռ գլուխդ վրադ է, թե չէ այդպիսի կատակների համար կարելի է վզակոթին հարված էլ ստանալ:

- Բայց դուք, այնուամենայնիվ, ասացե՛ք քաղաքապետին իմ մասին: Խոստանում եմ, չեք փոշմանի:

Նա այնպես էր պնդում և խնդրում, որ պահակը, վերջիվերջո, խղճաց ու ներս թողեց նրան:

- Բարի օր, պարոն քաղաքապետ:

- Ում համար բարի է, ում համար՝ ոչ: Ինձ համար իսկապես բարի կլինի, այն ժամանակ…

- ... երբ քաղաքը ազատված կլինի մեքենաներից: Եվ ես գիտեմ դա ինչպե՞ս անել:

- Դո՞ւ: Իսկ քեզ ո՞վ է սովորեցրել: Գուցե պոզավոր ա՞յծը:

- Կարևոր չէ, թե ով: Եկեք փորձենք: Չէ՞ որ ոչինչ չեք կորցնում: Իսկ եթե ինչ-որ բան խոստանաք ինձ, արդեն վաղը մեքենաների հետ կապված ոչ մի խնդիր չեք ունենա:

- Հետաքրքիր է, իսկ ի՞նչ պիտի խոստանամ:

- Որ վաղվանից երեխաները միշտ կարող են խաղալ քաղաքի գլխավոր հրապարակում, և որ այնտեղ նրանց համար կդրվեն կարուսելներ, ճոճանակներ, սղարաններ և այլ զվարճանքներ:

- Գլխավոր հրապարակո՞ւմ:

- Գլխավոր հրապարակում:

- Ուրիշ ոչինչ չե՞ս ուզում:

- Ոչի՛նչ:

- Ուրեմն պայմանավորվեցինք: Խոստանում եմ: Ե՞րբ կսկսես:

- Հենց հիմա, պարոն քաղաքապետ...

- Դե՛, սկսի՛ր: Ժամանակ մի՛ կորցրու:

Տարօրինակ տղան ոչ մի վայրկյան չկորցրեց: Գրպանից հանեց հասմիկի թփի ճյուղից պատրաստված փոքրիկ սրինգը և հենց քաղաքապետի առանձնասենյակում մի ուրախ երգ նվագեց, հետո դուրս եկավ փողոց և, շարունակելով նվագել, գնաց դեպի գետը: Եվ այդ ժամանակ...

- Տեսե՛ք, ի՞նչ պատահեց այս ավտոմեքենային: Այն ինքն իրեն միացավ:

- Այս մեկը նույնպես:

- Վա՛յ, բայց չէ՞ որ դա ի՛մն է: Ինչ-որ մեկն ուզում է գողանալ իմ մեքենան: Բռնե՛ք գողին: Բռնե՛ք գողին:

- Այստեղ ոչ մի գող էլ չկա, չե՞ք տեսնում, ինչ է: Մեքենաներն իրենք իրենց են միացել…

- Արագացնում են ընթացքը... Հեռանո՛ւմ են:

- Ո՞ւր են այսպես շտապում :

- Իմ մեքենան է: Կանգնի՛ր, կանգնի՛ր ասում եմ: Վերադարձի՛ր ինձ մոտ:

Քաղաքի բոլոր մեքենաները հանկարծ սլացան մի ուղղությամբ՝ անհավանական ու չլսված աղմուկ բարձրացնելով իրենց շարժիչների հոնդոցով, շչակների ու սուլիչների ազդանշաններով … Եվ բոլորը շարժվում էին ինքնուրույն, առանց վարորդների:

Բայց այդ հրեշավոր աղմուկի մեջ, որ տարածվում էր քաղաքի վրա, ուշադիր լսելու դեպքում կարելի էր զանազանել զրնգուն և ուրախ այն մեղեդին, որը տղան նվագում էր սրինգով…

Առաջին ավարտ

Մեքենաները սլանում էին դեպի գետը: Իսկ սրնգահարը կանգնել էր կամրջի մոտ և անդադար նվագում էր… Երբ կամրջի վրա բարձրացավ առաջին մեքենան, որը զուտ պատահականությամբ քաղաքապետինն էր, տղան մի փոքր փոխեց երաժշտությունը և բարձր նոտա նվագեց: Կարծես ազդանշանով կամուրջը փլվեց: Մեքենան ընկավ գետը, և հոսանքը միանգամից տարավ այն: Նույն կերպ երկրորդ մեքենան ընկավ ջուրը, հետո՝ երրորդը: Բոլոր մեքենաները, մեկը մյուսի հետևից, երբեմն էլ մի քանիսը միասին, ընկան ցած՝ հոնդացնելով շարժիչները և հրաժեշտի ազդանշան տալով: Եվ հոսանքը նրանց տարավ հեռու:

Իսկ մեքենաներից ազատված փողոցներն արդեն լցվել էին երեխաներով: Նրանք ուրախ ու զոհ վազվզում էին և գնդակ խաղում: Աղջիկները զբոսնում էին խաղալիք սալյակների մեջ դրված իրենց տիկնիկներով, իսկ տղաները հեծանիվ էին քշում…

Բայց մեծերը սարսափի մեջ էին: Նրանք գլուխները բռնած զանգահարում էին հրշեջ ծառայություն, ոստիկանություն և պահանջում էին կարգ ու կանոն հաստատել :

- Ինչո՞ւ ոչ մեկ չի կանգնեցնում այդ խելագարին: Բռնե՛ք նրան վերջապես, գրողը տանի: Թող լռի՛ այդ անիծված սրնգահարը:

- Պետք է հենց իրեն, այդ սրինգի հետ միասին, գցել ջուրը:

- Քաղաքապետը նույնպես խելքը գցել է. ոչնչացնե՛լ մեր հիանալի մեքենաները...

- Նրանք այնքա՛ն թանկ արժեն:

- Կարագը նույնպես էժան չէ:

- Կորչի՛ քաղաքապետը: Նրան թոշակի՛ ուղարկեք:

- Հեռացրե՛ք սրնգահարին:

- Վերադարձրե՛ք ինձ իմ մեքենան:

Ամենահամարձակները նետվեցին, որ բռնեն սրնգահարին, բայց չկարողացան նույնիսկ դիպչել նրան: Տղայի և ամբոխի միջև կարծես մի անտեսանելի պատ էր բարձրացել, որ պաշտպանում էր նրան: Եվ մարդիկ իզուր էին բռունցքներով և ոտքերով հարվածում պատին:

Սրնգահարը սպասեց այնքան, մինչև ջրում անհետացավ վերջին մեքենան, իսկ հետո թռավ ջուրը, լողաց մյուս ափը, խոնարհվեց բոլորին և անհետացավ անտառում:

Երկրորդ ավարտ

Մեքենաները սլացան դեպի գետը և մեկը մյուսի հետևից, հրաժեշտի ազդանշան տալով, սուզվեցին հատակ: Վերջինը քաղաքապետի մեքենան էր, որն անհետացավ գետում: Այդ ժամանակ գլխավոր հրապարակն արդեն լցվել էր երջանիկ երեխաներով: Երեխաների զրնգուն, ուրախ ձայները խլացնում էին քաղաքացիների բողոքները, որոնք քիչ էր մնում լաց լինեին՝ տեսնելով, թե ինչպես են անհետանում իրենց մեքենաները: Վերջապես սրնգահարը դադարեց նվագել, բարձրացրեց աչքերը և տեսավ, որ դեպի իրեն է գալիս սպանալից ամբոխը՝ քաղաքապետի գլխավորությամբ:

- Դե ինչ, գո՞հ եք, պարոն քաղաքապետ,- հարցրեց նա:

- Ես հիմա քեզ ցո՛ւյց կտամ, թե որքան եմ գոհ: Եվ դու կարծում ես, որ դա հաջո՞ղ մտահղացում էր: Մի՞թե չգիտես, թե որքան աշխատանք ու գումարներ են ներդրված յուրաքանչյուր մեքենայի վրա: Սրա՛ն տեսեք, քաղաքն ազատագրելու միջոց գտավ…

- Բայց ես… Բայց դուք…

- Դու սրիկա՛ ես, ա՛յ թե ով ես դու: Եվ եթե չես ուզում կյանքիդ մնացած մասը բանտում անցկացնել, վերցրու սրինգդ և դուրս հանիր գետից բոլոր մեքենաները: Եվ որ բոլորը, մեկ առ մեկ, ետ վերադառնան:

- Բռա՛վո: Հրաշալի՛ է: Կեցցե՛ պարոն քաղաքապետը:

Եվ տղան արեց այնպես, ինչպես խնդրել էին: Ենթարկվելով սրնգի կախարդական հնչյուններին՝ մեքենաները վերադարձան ափ, նորից շարժվեցին ճանապարհներով և հրապարակներով, նորից զբաղեցրին իրենց նախկին տեղերը՝ վռնդելով գնդակներով և հեծանիվներով երեխաներին: Մի խոսքով, ամեն ինչ նորից դարձավ առաջվա պես:

Իսկ սրնգահարը լուռ հեռացավ ինչ-որ տեղ: Շատ տխուր հեռացավ: Եվ ոչ մեկն այլևս երբեք ոչինչ չլսեց նրա մասին:

Երրորդ ավարտ

Եվ մեքենաները, հնազանդվելով սրնգի հրամանին, գնացին... Եվ մոտեցան գետին, ինչպես Գամելինի մկները: Բայց ո՛չ, իհա՛րկե ոչ: Մեքենաները գնացին, գնացին... և ահա արդեն քաղաքում ոչ մի մեքենա չմնաց, նույնիսկ ամենափոքր մեքենան: Դատարկվեց գլխավոր հրապարակը, դատարկվեցին փողոցները, ազատվեցին նրբանցքներն ու մայթերը: Իսկ ո՞ւր անհետացան մեքենաները:

Եթե ուշադիր լսեք, կհասկանաք՝ ինչն ինչոց է: Հիմա մեքենաները սլանում են գետնի տակով: Կախարդական սրնգի օգնությամբ այդ զվարճալի տղան փողոցների և հրապարակների տակ ճանապարհներ անցկացրեց: Ահա դրանցով էլ սլանում էին մեքենաները: Կանգ էին առնում, վերցնում էին իրենց տերերին և շարունակում էին սլանալ: Հիմա արդեն բոլորի համար տեղ կար. գետնի տակ՝ մեքենաների, գետնի վրա՝ մարդկանց համար, ովքեր ուզում էին անհոգ թափառել քաղաքում և հանգիստ, առանց մեքենաներից մի կողմ փախչելու, զրուցել տարբեր բաների մասին. քաղաքականության, ֆուտբոլի, Լուսնի… Հիմա տեղը բավարարում էր նաև երեխաներին, որոնք ուզում էին վազել ու խաղալ, և կանանց, որոնք շտապում էին խանութներ:

- Ի՜նչ հիմարն էի,- հիացած բացականչեց քաղաքապետը:- Ի՜նչ հիմարն էի, որ այդ մասին գլխի չէի ընկել առաջ:

Իսկ սրնգահարին հուշարձան կանգնեցրին: Նույնիսկ երկու հուշարձան: Մեկը՝ գլխավոր հրապարակում, մյուսը՝ դարձյալ գլխավոր հրապարակում, միայն թե գետնի տակ: Եվ նա կանգնած է այնտեղ, մեքենաների կողքին, որոնք սլանում են իրենց ստորգետնյա մայրուղիներով:

ՇՐՋԱՊՏՈՒՅՏ՝ ՔԱՂԱՔՈՒՄ

Պաոլոն շատ գործունյա երեխա էր: Նա ոչ մի րոպե չէր կարող մնալ առանց ինչ-որ հետաքրքիր և օգտակար գործ անելու: Նա երբեք չէր ձանձրանում, քանի որ միշտ կարողանում էր իր համար հետաքրքիր խաղ, աշխատանք, զբաղմունք հորինել: Ու բացի այդ, նա շատ համառ մարդ էր. եթե մի անգամ ինչ-որ բան որոշեր, չէր նահանջում, գործը կիսատ չէր թողնում, քանի դեռ մինչև վերջ չէր հասցրել:

Մի անգամ արձակուրդի ժամանակ Պաոլոն սեղանին փռեց քաղաքի մեծ քարտեզը և սկսեց ուշադիր զննել փողոցների բարդ ցանցը. կենտրոնում՝ առաձպես խճճված, իսկ ծայրամասերում՝ մի քիչ ավելի պարզ:

Պաոլոն կողմնացույցը դրեց քարտեզի վրա և մատիտով շրջագծեց: Թե ինչու այդպես վարվարեց, ինքն էլ չգիտեր: Իսկ երբ կողմնացույցը մի կողմ տարավ և տեսավ, թե ինչ ուղիղ շրջան ստացվեց, մտածեց, որ շատ հետաքրքիր կլիներ... Ինչ խոսք, դա շատ տարօրինակ միտք էր, բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ չփորձել: Եվ նա տեղնուտեղը որոշեց քաղաքում նույնպիսի մի պտույտ կատարել, ինչպիսի շրջանագիծ ստացվել էր կողմնացույցի օգնությամբ:

Ընդհանրապես քաղաքի փողոցները հազվադեպ են սլաքի պես ուղիղ լինում: Ավելի հաճախ դրանք ինչ- որ տեղ են թեքվում, շրջվում են մերթ աջ, մերթ ձախ՝ անընդհատ փոխելով

ուղղությունը: Նույնիսկ օղակաձև զբոսայգիներն ու ճեմուղիները շատ պայմանական շրջաններ են: Դրանք ոչ մեկը կողմնացույցի օգնությամբ չի գծել: Իսկ Պաոլոն մտածեց շրջել քաղաքում ճիշտ այն շրջանով, որը գծել էր քարտեզի վրա կողմնացույցի օգնությամբ՝ մի քայլ անգամ չշեղվելով շրջանագծից, որը բարակ էր, ինչպես պարզ և հստակ միտքը:

Միանգամայն պատահաբար շրջանագիծն անցնում էր հենց նույն փողոցով, որտեղ ապրում էր Պաոլոն: Տղան ծալեց քարտեզը և դրեց գրպանը: Մյուս գրպանը կարկանդակ դրեց, եթե ճանապարհին ուտել ուզենար, և առանց երկար մտածելու ճանապարհ ընկավ:

Դուրս գալով տանից՝ նա որոշեց գնալ դեպի ձախ: Որոշ ժամանակ շրջանը նրան տանում էր ուղիղ, իսկ հետո հանկարծ հատեց փողոցը հենց երթևեկելի մասում, այնտեղ, որտեղ հետիոտների համար սպիտակ նշագծեր չկային: Բայց Պաոլոն չնահանջեց իր մտադրությունից: Շրջանագծին հետևելով՝ նա նույնպես հատեց փողոցը և կանգ առավ ինչ-որ դարպասի դիմաց: Փողոցն ուղիղ էր գնում, իսկ շրջանի եզրագիծը թեքվում էր դեպի այս դարպասը: Իսկ դրանից հետո, կարծես թե հասնում էր հեռվում երևացող տների խմբին, հետո՝ ավելի ձախ գտնվող փոքր հրապարակին:

Պաոլոն մեկ անգամ ևս նայեց քարտեզին, անցավ դարպասը և հայտնվեց բակում: Բակը կտրել-անցնելը դժվար չէր: Իսկ հետո՞ ինչ կա: Դրանից հետո շքամուտքն էր, ներսում՝ աստիճանները: Բարձրանա՞լ: Իսկ հետո ի՞նչ պիտի անի: Դե՛, ասենք, կհասնի վերջին հարկ, ենթադրենք դուրս կգա տանիք… Բայց չի կարողանա անցնել հարևան շենքի տանիք: Էդ մատիտով է հեշտ թռչել մի շենքից մյուսը, իսկ ոտքով և առանց թևերի այնքան էլ հեշտ չէ:

Բարեբախտաբար, աստիճանահարթակում պատուհան կար: Ճիշտ է, բարձր էր ու շատ նեղ: Պաոլոն նորից նայեց քարտեզին. կասկած չկար. որպեսզի առաջ շարժվեր, հարկավոր էր հենց այստեղից անցնել: Մնում էր միայն պատուհանից դուրս խցկվել:

Երբ նա արդեն բռնվել էր փեղկից և ցանկանում էր վեր ձգվել, ինչ-որ մեկը հանկարծ ձայն տվեց: Պաոլոն քարացավ, կարծես վախեցած սարդ լիներ պատի վրա:

- Ա՛յ տղա, այդ ո՞ւր էս խցկվում: Այդ ի՞նչ է խելքիդ փչել: Հենց հիմա իջի՛ր այդտեղից,- հրամայեց նրան աստիճաններով իջնող մի մարդ:

- Այդ ի՞նձ եք ասում:

- Բա էլ ու՞մ: Խոստովանի՛ր տեսնեմ, գուցե գո՞ղ ես: Դե չէ՛, գողի նման չես: Ուրեմն ի՞նչ ես անում այստեղ: Իսկ գուցե մանրամարգությա՞մբ ես զբաղվում:

- Ճիշտն ասած, պարո՛ն... ես միայն ուզում եմ անցնել ա՛յ, այն բակը…

- Բայց դրա համար պետք է դուրս գալ շքամուտքից, շրջանցել տունը և մյուս դարպասից մտնել բակ:

- Ո՛չ-ո՛չ, չեմ կարող…

-Հասկանում եմ: Երևի, ինչ-որ վատ բան ես արել և վախենում ես, որ կպատժեն:

-Ո՛չ, հավատացնում եմ, ոչինչ չեմ արել:

Պաուլոն ուշադիր նայեց իրեն բռնող մարդուն: Կարծես թե բարի էր: Ձեռքին ձեռնափայտ կար, բայց դրանով ոչ թե սպառնում էր, այլ միայն հենվել էր վրան: Բացի այդ, նա ժպտում էր: Եվ Պաուլոն որոշեց վստահել նրան ու պատմել իր ծրագրի մասին:

- Պտույտ քաղաքո՞վ,- կրկնեց պարոնը,- հետևելով քարտեզի գրա գծված շրջանագծի՞ն: Հենց դա՞ ես ուզում անել:

-Այո՛, պարոն:

- Տղա՛ս, դա անհնար է: Իսկ ի՞նչ կանես, եթե հայտնվես մի պատի մոտ, որը պատուհան չունի:

- Կմագլցեմ-կանցնեմ պատի վրայով:

- Իսկ եթե պատը շատ բարձր լինի և չկարողանա՞ս մագլցել:

-Անցք կբացեմ և կանցնեմ:

- Իսկ ի՞նչ կանես, երբ հայտնվես գետի մոտ: Տե՛ս, քո քարտեզի վրայի շրջանագիծն անցնում է գետի ամենալայն մասով, իսկ այնտեղ կամուրջ չկա:

- Բայց ես կարողանում եմ լողալ:

- Հասկանում եմ, հասկանում: Դու նրանցից չես, ովքեր հեշտությամբ են նահանջում, այնպես չէ՞:

- Դե՜, այո՛:

- Քո գլխում հստակ ծրագիր կա, ինչպես քարտեզիդ վրայի շրջանագիծը... Դե՛, ի՞նչ ասեմ, փորձի՛ր:

- Որեմն թույլ կտա՞ք դուրս գամ այս պատուհանով:

- Իհա՛րկե: Եվ նույնիսկ կօգնեմ քեզ: Դե՛, դիր ոտքդ ձեռքիս, հետո՝ այստեղ, բարձրացի՛ր... Զգո՛ւյշ, չընկնես...

- Շնորհակալ եմ, պարո՛ն: Ցտեսությո՛ւն:

Պաուլոն շարժվեց առաջ: Նա գնում էր ճիշտ շրջանով, ոչ մի քայլ չշեղվելով այն շրջանանագծից, որը նկարել էր քարտեզի վրա կողմնացույցի օգնությամբ: Եվ ահա հայտնվեց հրապարակում, ձիավոր արձանի մոտ: Բրոնզե ձին իր հավերժական շարժման մեջ քարացել էր

մարմարե պատվանդանին։ Հերոսը, որի անունը Պաուլոն չգիտեր, մի ձեռքով պինդ բռնել էր ձիու սանձափոկը, իսկ մյուսով մատնացույց էր անում հեռուն։ Թերևս հենց այն կողմ, ուր Պաուլոյին տանում էր իր շրջանագիծը։ Ի՞նչ անել։ Սողա՞լ ձիու ոտքերի արանքով, բարձրանալ հերոսի գլխի՞ն, թե՞ պարզապես շրջանցել հուշարձանը։

Առաջին ավարտ

Պաուլոն մտածում էր, թե ինչ անել, երբ հանկարծ նրան թվաց, որ ձիու վրա նստած մարդը գլխով արեց իրեն, և նույնիսկ շատ աննկատ, բայց աչքով արեց։

- Արդեն աչքիս տարբեր հրաշքներ են երևում,- վախեցավ Պաուլոն։

Բայց բրոնզե հերոսը պնդում էր։ Այժմ նա նույնիսկ իջեցրել էր այն ձեռքը, որն առաջ ինչ-որ տեղ էր ցույց տալիս և ձեռքի շարժումով հրավիրում էր տղային։

- Դե՛,- ասաց նա,- բարձրացի՛ր։ Այս ձիու վրա երկուսիս համար էլ տեղ կլինի։

- Բայց ես, գիտեք, թե ինչ...

-Դե՛, հերի՛ք է իմ համբերությունը փորձես։ Կարծում ես՝ չե՞մ կարողանա առանց կարկինի օգնության շրջանագծով գնալ։ Նստի՛ր։ Ես ինքս քեզ քո երկրաչափական ճանապարհորդությանը կտանեմ։ Դու դրան արժանի ես, քանի որ դժվարությունների առաջ կանգ չես առնում։

- Շնորհակա՛լ եմ։ Շա՛տ շնորհակալություն։ Բայց…

-Ո՛ֆ, ի՛նչ էլ շատ ես խոսում։ Բացի այդ, նաև գոռոզ ես, չես սիրում, երբ քեզ օգնում են։

- Հարցը դա չէ…

- Ուրեմն այն է, որ շատ ես սիրում անտեղի խոսել։ Բարձրացի՛ր, որ գնանք։ Դու ինձ դուր ես գալիս, քանի որ կարողանում ես հետաքրքիր գործեր հորինել և դժվարություններից չես վախենում։ Արագացրո՛ւ, ձին արդեն արթնանում է։ Ես չգիտեմ, թե ինչ հրաշքով, բայց դու հայտնվել ես այստեղ տարվա մեջ այն միակ օրը, երբ մեզ թույլատրվում է իջնել մեր պատվանդանից և արշավել հին օրերի պես։ Դե ի՞նչ, վերջապես գալի՞ս ես, թե՞ ոչ։

Եվ Պաուլոն որոշում կայացրեց։ Նա կառչեց հերոսի ձեռքից... Եվ ահա արդեն թամբին էր ու սլանում էր… և նրա ոտքերի տակ ամբողջ քաղաքն էր։ Իսկ քաղաքի վրա լուսավորվում էր ոսկեգույն շրջանակը՝ հրաշալի, փայլուն մի ճանապարհ, որ ուղիղ ու ճշգրիտ էր, ինչպես այն շրջանագիծը, որ նկարել էր քարտեզի վրա՝ կողմնացույցի օգնությամբ։

Երկրորդ ավարտ

Մտածելով, թե ինչ անել, Պաուլոն հայացք գցեց շուրջը՝ այն հրապարակին, որտեղ հուշարձանն էր կանգնած։ Շրջանագիծը հատում էր հրապարակը և գնում էր դեպի բարձր գմբեթով հնամյա տաճարը։ Գիծը դռների կարիք չուներ, իսկ ինքն ի՞նչ պիտի աներ։ Ինչպե՞ս

կարող էր անցնել բերդապարիսպի նման հաստ ու ամուր այդ պատի միջով: Շրջանագծից չշեղվելու համար անհրաժեշտ էր բարձրանալ գմբեթի վրա: , Հեշտ էր ասել: Առանց պարանի ու մեխերի նման բան չէր անի նույնիսկ ամենափորձառու ալպինիստը, ամենահամարձակ լեռնագնացը: Չէ՛, ոչինչ չի ստացվի: Ստիպված է նահանջել: Երազանքն անիրականանալի է, կյանքի ճանապարհները երբեք երկրաչափական պատկերների նման ուղիղ, հստակ ու անթերի չեն լինում:

Պաոլոն մի անգամ էլ նայեց հերոսին: Անշարժ ու խիստ նա շարունակում էր իր պատվանդանի բարձունքից ինչ-որ հեռու ու անհասանելի նպատակակետ ցույց տալ: Դանդաղաքայլ ու տխուր Պաոլոն գնաց տուն՝ ակամա հետևելով ծանոթ ճանապարհի արտասովոր ու անբացատրելի շրջադարձերին:

Երրորդ ավարտ

Հուշարձանի մոտ կանգնած Պաոլոն մտածում էր, թե ինչ անի, երբ հանկարծ զգաց, որ ինչ-որ մեկի փոքրիկ, տաք ձեռքը դիպավ իրեն:

- Տուն եմ ուզում գնալ,- լսեց նա մանկական մի ձայն: Դա փոքրիկ մի տղա էր, մոտ երեք տարեկան: Նրա աչքերում արցունքներ կային և նա հավատով նայում էր Պաոլոյին:

- Որտե՞ղ ես ապրում:

Տղան անորոշ ինչ-որ տեղ ցույց տվեց:

- Մայրիկի՛ս եմ ուզում:

- Իսկ որտե՞ղ է նա:

- Այնտեղ:

Այդ «այնտեղը» նույնպես երեխան անորոշ ինչ-որ կողմ ցույց տվեց: Պարզ էր միայն մի բան. երեխան կորել էր և չգիտեր տուն տանող ճանապարհը: Նա բռնեց Պաոլոյի ձեռքը և բաց չէր թողնում:

- Ինձ մայրիկիս մոտ տար:

Պաոլոն ուզում էր ասել, որ չի կարող, որ ավելի կարևոր գործեր ունի, բայց տղան այնպիսի հույսով էր նայում նրան... Լա՛վ շրջանը կսպասի… Մի ուրիշ անգամ...

- Գնա՛նք,- ասաց Պաոլոն,- գնանք փնտրենք քո մայրիկին:

ԳԼԽԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՐԵՎ ՄԻԼԱՆՈՒՄ

Մի անգամ առավոտյան, Միլանում, հաշվետար Բյանկինին բանկից գնում էր իր առևտրային ընկերությունը: Հրաշալի օր էր: Երկնքում ոչ մի ամպ չկար: Երկինքը փայլում էր մաքրությունից, կապույտ երկնակամարում վառ փայլում էր արևը, ինչն անսովոր էր նոյեմբերի համար: Հաշվետար Բյանկինին հրաշալի տրամադրություն ուներ: Առույգ քայլելով նա ուրախ երգում էր քթի տակ. «Ի՜նչ լավ օր է, ի՜նչ լավ օր, ժպիտներ են շուրջ բոլոր…»: Բայց ահա նա պատահմամբ նայեց երկնքին և սառեց տեղում՝ զարմանքից բացելով բերանը: Ինչ-որ անցորդ բախվեց նրան և առիթը բաց չթողեց փնթփնթալ.

-Հե՜յ, ուշքդ վրադ պահիր: Նայի՛ր, թե ուր էս գնում:

- Բայց ես չեմ գնում, ես կանգնած եմ... նայե՛ք:

- Էլ ո՞ւր «նայեմ»: Ես ժամանակ չունեմ: Վա՜յ, ի՞նչ է սա: Ա՜յ... Վա՜յ... Հե՜յ:

- Ահա՜, Դուք էլ տեսաք: Եվ ի՞նչ կասեք այս մասին:

- Բայց չէ՞ որ սրանք… գլխարկներ են...

Եվ իրոք, երկնագույն անամպ երկնքից հանկարծ գլխարկների անձրև էր թափվում: Ոչ թե մի գլխարկ էր թռչում, որ կարող էր ինչ-որ անցորդի գլխից քամին թռցրած լինել և տանել օդով: Եվ ոչ էլ երկու գլխարկ էին թռչում, որոնք կարող էին պարզապես ընկած լինել ինչ-որ մեկի լուսամուտագոգից: Երկնքից թափվում, ավելի շուտ լողալով իջնում էին հարյուրավոր, հազարավոր, տասնյակ հազարավոր գլխարկներ: Դրանք տղամարդու և կանացի գլխարկներ էին, փետրավոր, ծաղկավոր, հովհարավոր և անհովհար գլխարկներ, ձիավարության գլխարկներ, ականջավոր մորթե գլխարկներ, փափախներ, բերետներ, դահուկորդի՝ հյուսածո գլխարկներ...

Հաշվետար Բյանկինիի և նրան բախած պարոնի կողքին ուրիշ շատ անցորդներ կանգ առան: Բոլորը գլուխները բարձրացրած նայում էին երկնքին. և՛ հացաբուլկեղենի խանութի տղան, և՛ երթևեկությունը կարգավորող ոստիկանը, որը կանգնում էր Մանձոնի և Մոնտենապոլեոնե փողոցների խաչմերուկում, և՛ տասնութ համարի տրամվայի վարորդը, և՛ տասնվեց համարի տրամվայի վարորդը, և՛ նույնիսկ առաջին համարինը... Վագոնավարները դուրս էին եկել և նույնպես նայում էին երկինք, ուղևորներն էլ դուրս եկան և բոլորը սկսեցին խոսել իրենց տպավորությունների մասին:

– Ա՜յ քեզ հրաշք:

– Չլսվա՜ծ բան է:

– Իսկ ի՞նչ տարօրինակ բան կա: Հավանաբար էլի թխվածք են գովազդում:

– Բայց ի՞նչ կապ ունի թխվածքը:

– Դե, ուրեմն, պանիր են գովազդում:

– Դե, վերջ տվեք: Ձեր մտքում միայն ուտելիք է: Իսկ գլխարկները, որքան գիտեմ, դեռևս ուտելի չեն:

– Ինչ է, սրանք իսկապե՞ս գլխարկներ են:

– Ոչ, հեծանիվի զանգեր են: Մի՞թե չեք տեսնում՝ ինչ են:

– Ոնց որ թե գլխարկներ են: Գլխարկներ, որ գլխին են դնում:

– Իսկ դուք, հետաքրքիր է, որտե՞ղ եք դնում ձեր գլխարկը, քթի՞ն:

Շուտով քննարկումներն ավարտվեցին: Գլխարկները վայրէջք կատարեցին մայթերին, փողոցներին, ավտոմեքենաների վրա, մի քանիսը տրամվայների պատուհաններից ներս թռան, մյուսներն ընկան ուղիղ խանութ: Մարդիկ վերցնում էին դրանք ու փորձում:

– Սա մեծ է:

– Փորձեք սա, սինյոր Բյանկինի:

– Բայց սա կանացի գլխարկ է:

– Իսկ դուք ձեր կնոջ համար տարեք:

– Հետո դիմակահանդեսի ժամանակ կդնեք:

– Ճիշտ եք ասում, կանացի գլխարկով հո գրասենյակ չե՞մ գնա...

– Ինձ կտա՞ք այն մեկը, խնդրում եմ, դա տատիկիս կսազի:

– Իմ զարմիկի քրոջն էլ լավ կլինի:

– Բայց ես առաջինն եմ վերցրել:

– Ո՛չ, ե՛ս եմ առաջինը վերցրել:

Ոմանք միանգամից երեք-չորս գլխարկ էին վերցրել՝ ողջ ընտանիքի համար:

Եվ որքան շատ էին մարդիկ գլխարկներ հավաքում, այնքան ավելի շատ էր թափվում երկնքից: Գլխարկները ծածկել էին փողոցներն ու մայթերը, լցվել էին պատշգամբներն ու ծածկել տանիքները: Կլոր գլխարկներ, բերետներ, լայնեզր գլխարկներ, սոմբրերոներ, կովբոյական, սրածայր, կլոր, ժապավենավոր, անժապավեն... Հաշվետար Բյանկինիի ձեռքին արդեն տասնյոթ գլխարկ կար, բայց դեռ չէր կողմնորոշվում. հեռանա՞, թե՞ ոչ:

– Ախր, գլխարկների անձրև հո ամեն օր չի՞ գա,- մտածում էր նա:- Պետք է օգտվել առիթից: Կարելի է պահել ամբողջ կյանքի համար, մանավանդ որ գլուխս այլևս չի մեծանալու…

–Հա, բայց կարող է փոքրանալ:

– Ինչպե՞ս թե փոքրանալ, ի՞նչ եք ակնարկում: Խե՞լքս է պակասելու, ի՞նչ է:

– Դե լավ, մի՛ նեղացեք: Ավելի լավ է վերցրեք այս գեղեցիկ անհովհար գլխարկը:

Իսկ գլխարկներն անվերջ թափվում էին երկնքից… Մեկն ուղիղ իջավ երթևեկությունը կարգավորող ոստիկանի գլխին: Նա արդեն չէր էլ կարգավորում փողոցային երթևեկությունը, քանի որ գլխարկներն իջնում էին ուր ասես: Այս մեկը գեներալական գլխարկ էր, և բոլորը մտածեցին, որ սա բարի կանխանշան է, և որ ոստիկանի պաշտոնը շուտով կբարձրացնեն:

Իսկ հետո՞:

Առաջին ավարտ

Մի քանի ժամ անց, Մայնի Ֆրանկֆուրտի օդանավակայանում վայրէջք կատարեց իտալական «Ալիտալիա» ընկերության մի հսկա օդանավ: Նա շուրջերկրյա ճանապարհորդություն էր կատարել, որպեսզի գլխարկների ամենատարբեր տեսակներ հավաքի արտասովոր միջազգային ցուցահանդեսի համար, որը տեղի էր ունենալու այստեղ:

Թանկարժեք բեռը դիմավորելու էր եկել անձամբ քաղաքապետը: Քաղաքի նվագախումբը նվագեց հիմնը՝ «Օ՜ գլխարկ, գլխարկ, դու գլխի զարդ», որը հատուկ այս հանդիսության համար գրել էր Յոհան Սեբաստիան Լյուդովիկ Բախլեյնը:

Չէին հասցրել մինչև վերջ նվագել հիմնը, երբ պարզվեց, որ օդանավը բերել էր միայն... ինքնաթիռի հրամանատարի և անձնակազմի անդամների գլխարկները:

Պարզվեց, որ օդաչուն սխալմամբ գովազդային թռուցիկների և պաստառների փոխարեն գլխարկներն էր նետել Միլանի վրա: Հենց դա էր Լոմբարդիի մայրաքաղաքի վրա գլխարկների տեղատարափի պատճառը: Իսկ նման անփութություն թույլ տված օդաչուն խստորեն պատժվեց. նրան պարտադրեցին ամբողջ կես տարի օդանավն առանց գլխարկի վարել:

Երկրորդ ավարտ

Այդ օրը երկնքից գլխարկներ թափվեցին:

Հաջորդ օրը՝ անձրևանոցներ:

Իսկ երրորդ օրը՝ շոկոլադե կոնֆետների տուփեր: Հետո թափվեցին սառնարաններ, լվացքի մեքենաներ, նվագարկիչներ, արգանակի խորհանարդիկների տուփեր՝ ամենքում հարյուր հատ, փողկապներ, խմորեղեններ, լցոնած հնդկահավեր: Ի վերջո թափվեցին ամանորյա տոնածառեր՝ զանազան նվերներով… Քաղաքը պարզապես ծածկվել էր ամենատարբեր իրերով: Տները մինչև առաստաղ լեփ-լեցուն էին դրանցով: Իսկ առևտրականների գործերն էլ վատ էին, քանի որ խափանվում էին գրպանները լցնելու նրանց պլանները:

Երրորդ ավարտ

Գլխարկների անձրևը տևեց մինչև ժամը չորսը: Այդ ընթացքում Միլանի նշանավոր տաճարի հրապարակում գլխարկների բլուրը հուշարձանից վեր էր բարձրացել: Ցուցասրահի

մուտքը փակել էր ծղոտե գլխարկների պատը: Իսկ հետո, ժամը ուղիղ չորսն անց մեկ րոպե ուժեղ քամի բարձրացավ, և գլխարկները սկսեցին գլորվել քաղաքի փողոցներով: Գնալով ավելի ու ավելի արագ էին գլորվում գլխարկները, հետո վեր բարձրացան, մի քանիսը նույնիսկ խճճվեցին տրամվայի էլեկտրական լարերի մեջ:

– Թռչո՛ւմ են, թռչո՛ւմ են,- բղավում էին մարդիկ,- բայց ինչո՞ւ:

– Հավանաբար հիմա էլ Հռո՞մ կթռչեն:

– Ի՞նչ գիտեք, չլինի՞ գլխարկներն իրենք ձեզ ասացին:

– Ի՞նչ Հռոմ, տեսե՛ք, Կոմո լճի կողմն են թռչում:

Գլխարկները ծիծեռնակների հսկա երամի նման բարձրացան անցորդների գլխներից վեր, տների տանիքներից վեր և թռան, հեռացան: Եվ ոչ մեկն այդպես էլ չիմացավ, թե նրանք ուր գնացին, քանի որ նրանք չընկան ո՛չ Կոմոյի, ո՛չ էլ Բուստո Արիսիցիոյի վրա: Իսկ միլանցի գլխարկավաճառները թեթևացած շունչ քաշեցին, քանի որ դա իրենց համար սև օր էր:

ԻՆՉՈՎ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԻՐԱՐ ՆՄԱՆ

Մի փոքրիկ տղա երեկոյան դասավորում էր իր խաղալիքները: Ահա տուփից հանեց մի սար, որը հայրիկն էր օգնել պատրաստել հին թերթերով և օսլայից պատրաստված սոսնձով: Սա էլ փոքր պլասմասե տոնածառ է, ապա՝ հայելու մի փոքր կտոր, որ փայլում է իսկական լճի նման, և վերջապես փայլփլուն աստղեր, որ տոնածառի զարդարանքներ էին եղել: Մյուս տուփից նա հանեց պլասմասե արձանիկներ. երկու հովիվ և մի քանի գառնուկներ, մի տատիկ՝ նստած շագանակներով լի թավայի մոտ, և մի բարի հրաշագործ, արևելյան գլխափաթթոցով…

Տղան հովիվներին ու գառնուկներին դրեց սարի լանջին, սարի գագաթին նստեցրեց հրաշագործին, իսկ ծեր կնոջը տեղավորեց լճի ափին: Քիչ են արձանիկները: Իսկ ի՞նչ կա պահարանի գլխին դրված այն տուփի մեջ: Ա՜, այնտեղ շատ հին, վաղուց մոռացված խաղալիքներն են: Արի այս տուփի մեջ էլ նայենք: Եվ նա տուփից հանեց կարմրամորթ հնդկացուն՝ ինչ որ ցեղի վերջին ներկայացուցչին, մի փոքրիկ ինքնաթիռ, որի խցիկում օդաչու կար նստած, և ինչ-որ մի աղջիկ՝ տաբատով ու կիթառը ձեռքին, որը պարզ չէ, թե ոնց էր հայտնվել այստեղ: Պարզ բան է՝ տղաները տիկնիկներով չեն խաղում… Բայց եթե ուշադիր նայենք, այս աղջիկն այնքան էլ վատը չի երևում: Եվ տղան նրան դրեց շագանակներ բովող ծեր կնոջ կողքին: Իսկ մարտական կացինն ուսին կարմրամորթ հնդկացուն դրեց գառնուկներից ոչ հեռու: Օդաչուավոր ինքնաթիռն ու աստղերն էլ կախեց տոնածառից: «Վատ չստացվեց,- մտածեց

տղան,- կարծես իսկական թատերական դեկորացիա լինի»: Բայց այդ պահին մայրիկը կանչեց, և նա գնաց: Քնելու ժամանակն էր: Շուտով տղան քնեց:

Եվ այդ ժամանակ արթնացան նրա խաղալիք-արձանիկները: Առաջինը աչքերը բացեց հովիվներից մեկը: Նա նայեց չորս կողմը և դժգոհ մնաց այն ամենից, ինչ կատարվում էր շուրջը: «Այս ո՞վ է կացինը ձեռքին գնում իմ հոտի հետևից»,- մտածեց նա:

- Է՛յ, դու ո՞վ ես: Ի՞նչ ես անում այստեղ: Գնա՛, թե չէ շներին քսի կտամ վրադ:

- Առֆ,- միայն պատասխանեց կարմրամորթ հնդկացին:

- Ի՞նչ: Պարզ խոսիր, հասկանանք: Ասենք՝ կարող ես և լռել, միայն թե շուտ կորիր այստեղից:

- Ես մնալ,- պատասխանեց կարմրամաշկը:- Առֆ:

- Իսկ կացինն ինչի՞դ է պետք: Հո գառնուկիս չե՞ս ուզում գողանալ:

- Կացին փայտ ջարդել: Գիշերը ցուրտ: Ես ուզել կրակ վառել:

Այդ պահին արթնացավ թավայի մոտ նստած տատիկը և տեսավ կիթառով աղջկան:

- Էս ձեռքինդ ի՞նչ է:

- Կիթառ:

-Կույր չեմ, ինքս էլ եմ տեսնում, որ կիթառ է: Բայց մեզ կիթառ պետք չէ, մենք ավելի շատ պարկապզուկ և սրինգ ենք սիրում:

- Բայց կիթառը հրաշալի ձայն ունի, լսե՛ք:

- Դե վերջացրու, Աստծու սիրուն, գժվե՞լ ես, ինչ է: Սարսափելի է: Վայ այս ժամանակակից երիտասարդները: Գիտես ինչ, շուտ հեռացիր այստեղից, քանի շագանակները չեմ շպրտել վրադ: Իսկ դրանք արդեն բովվել են ու շատ տաք են:

- Իսկ ես սիրում եմ շագանակ, ասաց աղջիկը:

- Դեռ ծիծաղո՞ւմ ես: Ուզում ես շագանակներս խլե՞լ: Անամոթի մեկը, գո՛ղ: Հիմա քեզ ցույց կտամ… Օգնեցե՛ք, բռնե՛ք գողին:

Բայց ծեր կնոջը ոչ ոք չլսեց, որովհետև հենց այդ պահին արթնացած օդաչուն միացրեց ինքնաթիռի շարժիչը: Նա երեք անգամ պտտվեց լճի և սարի վրայով, սիրալիր ձեռքով արեց բոլորին և վայրէջք կատարեց կարմրամորթ հնդկացու կողքին: Դժգոհ հովիվներն իսկույն մոտեցան նրան:

- Ինչո՞ւ ես թռել-եկել: Ուզում եմ վախեցնե՞լ մեր ոչխարներին:

- Թե՞ քանդե՞ս մեր տնակները քո ռումբերով:

- Բայց ինձ մոտ ոչ մի ռումբ չկա,- պատասխանեց օդաչուն,- սա սպորտային ինքնաթիռ է, ուզո՞ւմ եք, նստեք՝ զբոսանքի տանեմ:

- Ի՛նքդ քեզ ման տուր, և լավ կլինի էստեղից հեռու, որ քեզ այլևս չտեսնենք:

- Հա՛, հա՛,- բղավեց ծեր կինը,- ու հետդ էլ տար էս աղջկան, որն ուզում է շագանակներս խլել:

- Տատի՛կ,- ասաց աղջիկը, սուտ մի՛ խոսիր: Շագանակներիդ համար, եթե իհարկե տաս ինձ, կվճարեմ:

- Տարե՛ք նրան իր անիծյալ կիթառի հետ:

- Դու էլ, կարմրամռութ,- ասաց հովիվներից մեկը՝ դիմելով կարմրամորթ հնդկացուն,- դու էլ չքվիր: Մեզ էստեղ ավազակներ պետք չեն:

- Ո՛չ ավազակներ, ո՛չ էլ՝ կիթառ,- ավելացրեց ծեր կինը:

- Կիթառ. ամենասիրուն երաժշտություն,- պատասխանեց կարմրամորթը:

- Լսեցի՞ք, ես նրա հետ համամիտ եմ:

- Տատի՛կ,- խոսակցությանը խառնվեց օդաչուն,- ինչո՞ւ եք բարկանում: Ավելի լավ է խնդրեք օրիորդին, որ մեզ համար մի բան նվագի, և մենք իսկույն ավելի բարի կդառնանք:

- Լա՛վ, վերջացրեք,- ասաց հովիվներից մեկը,- կամ հենց հիմա երեքդ էլ այստեղից կգնաք, քանի դեռ ողջ եք, կա՛մ բոլորովին այլ երաժշտություն կլսեք:

- Ես մնալ այստեղ: Ես ասացի:

- Ես էլ եմ մնում, իմ ընկեր Կատաղի ցուլի հետ,- նրան միացավ աղջիկը: Ես էլ ասացի:

-Իսկ ես,- ավելացրեց օդաչուն,- շատ հեռվից եմ եկել: Եվ, իհարկե, չեմ ուզում գնալ: Դե՛, աղջիկ, մեզ համար ինչ-որ բան նվագիր, տեսնենք քո երաժշտությունը չի՞ փոխի տրամադրությունը:

Աղջիկը չստիպեց, որ իրեն երկար համոզեն, և մատներով դիպավ կիթառի լարերին…

Առաջին ավարտ

Եվ հովիվները նույն պահին թափահարեցին իրենց փայտերը և կանչեցին շներին:

- Չքվե՛ք այստեղից, չքվե՛ք: Բռնի՛ր, Հավատարի՛մ, կծի՛ր, Գա՛յլ:

- Քշե՛նք սրանց այստեղից:

Կարմրամորթ հնդկացին տեղից չշարժվեց: Միայն բարձրացրեց մարտական կացինը:

- Ես կանգնելու եմ,-ասաց նա:- Առ՛ւֆ:

Բայց օդաչուն ուրիշ բան որոշեց:

-Եղավ, հո կռիվ չե՞նք սարքելու այստեղ,-ասաց նա,- բարձրացի՛ր ինքնաթիռ, աղջի՛կ: Դու էլ, Կատաղի ցուլ: Շարժիչը միացված է, դե՛, բոլորդ մտա՞ք, թռա՛նք:

Եվ ինքնաթիռը, հռնդացնելով շարժիչը, բարձրացավ լճից ու սարից վեր և սկսեց պտտվել սենյակում:

- Իսկ ու՞ր ենք թռչում,-հարցրեց աղջիկը, իրեն սեղմելով կիթառը, որ քամին չքշի:

-Ես մի լավ, մեծ տուփ գիտեմ, որտեղ ժամանակին վատ չէի ապրում:

- Ես էլ գիտեմ:

- Ես էլ իմանալ: Առֆ:

- Ուրեմն, առֆ, թռչում ենք դեպի այդ տուփը: Ահա, ներքևում է, և փառք Աստծո, դեռ փակ չէ: Վայրէջք ենք կատարում:

- Առ՛ֆ,- ասաց կարմրամորթ հնդկացին: Բայց ինքը, կարծես թե, այնքան էլ ուրախ չէր:

Երկրորդ ավարտ

Հազիվ էր աղջիկը սկսել նվագել, հովիվները սպառնալից բարձրացրին իրենց փայտերը:

-Լավ, լավ,- հոգոց հանեց աղջիկը:- Եթե ձեզ դուր չի գալիս կիթառը, ես կջարդեմ այն, միայն թե խնդրում եմ, շներին մի կողմ տարեք, այլապես նրանք տաբատս կպատառոտեն:

- Այ, սա ուրիշ բան,- ասաց տատիկը:- Արի՛ քեզ տամ շագանակ կտամ:

- Բայց նախ ինձ մի քիչ ալյուր տվեք,-խնդրեց աղջիկը,- մենք կներկենք Կատաղի Ցուլին, այդ դեպքում հովիվները, նրան նայելով, չեն նյարդայնանա:

- Լավ ես մտածել,- ասացին հովիվները:- Իսկ դու, կարմրամորթ անճոռնի, համաձա՞յն ես:

- Առ՛ֆ,- պատասխանեց կարմրամորթը, և հանգիստ թույլ տվեց, որ իրեն ներկեն սպիտակ ալյուրով:

- Իսկ ինքնաթի՞ռը,-հարցրին հովիվները:

- Իսկ ինքնաթիռը,- պատասխանեց օդաչուն,- ահա թե ինչ կանենք. կայրենք այն, խարույկ կսարքենք և կտաքանանք:

- Դա էլ է ճիշտ, մանավանդ, որ այսպիսի ցուրտ գիշեր է:

Եվ խարույկը վերջապես խաղաղություն բերեց այս բոլոր մարդկանց: Իսկ հովիվները նույնիսկ տարանտելլա պարեցին կրակի շուրջը իրենց սրինգների նվագակցությամբ:

Երրորդ ավարտ

Հազիվ էր աղջիկը սկսել նվագել, հովիվները հարձակվեցին անկոչ հյուրերի վրա: Բայց ինչ-որ մեկի ձայնը կանգնեցրեց նրանց:

- Վերջացրե՛ք:

- Ո՞վ է:

- Հրաշագործը: Նա սարից իջել է ու գալիս է մեզ մոտ: Ինչպիսի՜ պատիվ է մեզ համար, Ձերդ ողորմածություն:

- Իմ անունը Գասպարե է, ոչ թե «Ձերդ ողորմածություն»:

- Բարև, Գասպարե,- ասաց աղջիկը:

- Բարի երեկո, աղջի՛կս, ես լսեցի քո երաժշտությունը և այն ինձ շատ դուր եկավ:

- Առ՛ւֆ,- ավելացրեց կարմրամորթ հնդկացին:

- Բարև և քեզ, Կատաղի Ցուլ, Սև Արծիվ, Որոտացող Ամպ, կամ ինչպես ես ուզում, որ կոչենք քեզ: Ողջունում եմ քեզ, օդաչու, ձեզ էլ, հովիվներ, քեզ էլ, տատիկ: Բովված շագանակի հոտ եմ առնում:

- Այս աղջիկն ուզում էր խլել դրանք ինձնից:

- Չէ, քեզ միայն թվացել է: Նա գողի նման չի:

- Իսկ կացինը ձեռքին այս տի՞պը,- գոռացին հովիվները,- ինչո՞ւ է եկել այստեղ:

- Իսկ դուք իրեն հարցրե՞լ եք:

- Ինչի՞ համար, առանց հարցնելու էլ երևում է, որ ուզում էր մորթել մեր ոչխարներին:

- Ես խաղաղություն ուզել,-ասաց հնդիկը:- Ես սիրել խաղաղությունը:

- Դե ի՞նչ, լսեցի՞ք,-ասաց Գասպարեն:- Խաղաղությունը բոլորին է պետք: Ե՛վ սպիտակամորթերին, և՛ կարմրամորթերին, և՛ նրանց, ովքեր ոտքով են ման գալիս, և՛ նրանց, ովքեր թռչում են ինքնաթիռով, և՛ պարկապզուկ նվագողներին, և՛ կիթառ նվագողներին: Մարդիկ շատ տարբեր են և բոլորովին նման չեն իրար: Բայց մի բան կա, որը նրանց միատեսակ է դարձնում. նրանք բոլորն էլ խաղաղություն են ուզում:

Հովիվներն ամոթահար լռեցին, իսկ հետո լսեցին, թե ինչպես է տատիկն աղջկան ասում.

- Լսի՛ր, դու իսկապե՞ս սիրում ես շագանակ: Վերցրո՛ւ, ես քեզ հյուրասիրում եմ, ոչ թե վաճառում: Իսկ դո՞ւք, օդաչու, չե՞ք ուզում: Իսկ Դո՞ւք, սինյոր Սիրելի Ցուլ… կներե՛ք, Ձեր անունը լավ չլսեցի… Դուք շագանակներ չե՞ք սիրում:

- Առ՛ւֆ,- ասաց կարմրամորթ հնդկացին:

ՊՐՈՖԵՍՈՐ ԶԱՐՀՈՒՐԵԼԻՆ

Պրոֆեսոր Զարհուրելին իր օգնականի՝ Սատանուսի հետ միասին վաղուց ի վեր թաքուն աշխատում էր մի շատ վտանգավոր հայտնագործության վրա: Ինչպես դժվար չէ գլխի ընկնել ազգանունից, նա շատ սարսափելի գիտնական էր, ոչ միայն բացառիկ տաղանդավոր էր, այլ նաև անասելի չար: Իր ողջ գիտելիքներն ու անսովոր կարողություններն օգտագործում էր իսկապես հրեշավոր գաղափարներ իրագործելու համար:

- Ա՛յ, կտեսնես, սիրելի Սատանուս,- ասում էր նա իր օգնականին,- մեր ատոմային գերամբարձիչը, որը գրեթե պատրաստ է, ողջ աշխարհը կցնցի:

- Կասկած չունեմ, թանկագին պրոֆեսոր: Պատկերացնում եմ, թե ինչպես կզարմանան մեր թանկագին հայրենակիցները, երբ այդ գերամբարձիչի օգնությամբ կբարձրացնեք Պիզայի աշտարակը և կդնեք Եվրոպայի ամենաբարձր լեռան՝ Մոնբլանի գագաթին:

- Պիզայի աշտարա՞կը,- քմծիծաղ տվեց Զարհուրելին,- Մոնբլանի գագաթի՞ն: Ի՞նչ հիմարություն ես ասում: Որտեղի՞ց հորինեցիր:

- Ինչպե՞ս, պրոֆեսոր, չէ՞ որ երբ մենք նախագծում էինք...

- Մե՞նք: Նախագծո՞ւմ էինք... Իսկ ի՞նչն ես դու ի՛նքդ նախագծել, մեծարգո սինյոր Սատանուս: Ի՞նչ ես անձամբ դո՛ւ հայտնագործել. շոկոլադի փաթեթավորո՞ւմ, անբռնակ անձրևանո՞ց, տաք ջո՞ւր:

- Սխալս կուղղեմ, պրոֆեսոր Զարհուրելի,- խոնարհաբար ասաց ամոթահար Սատանուսը:- Երբ Դուք, միայն ու միայն Դուք նախագծում էիք գերամբարձիչը, հիշում եմ, որ հիշատակեցիք Պիզայի աշտարակը և Ալպիական լեռների ամենաբարձր գագաթը...

- Այո՛, հրաշալի հիշում եմ, որ խոսել եմ այդ մասին: Բայց դա միայն նախազգուշական քայլ էր, իմ հրաշալի ու հարգելի Սատանուս: Հրաշալի իմանալով քո բերանբացությունը, բոլորի հետ շատախոսելու քո ահավոր բնավորությունը. կաթնավաճառի օգնականի և հացթուխի աշակերտի, դռնապանի և նրա զարմիկի քրոջ...

- Ես նրա հետ ծանոթ էլ չեմ: Երդվում եմ, սինյոր պրոֆեսոր, ես չեմ ճանաչում դռնապանի զարմիկի քրոջը և խոստանում եմ, որ երբեք նույնիսկ չեմ փորձի ծանոթանալ նրա հետ...

- Լավ, այդ դեպքում նրա մասին այլևս չենք խոսի: Ես միայն ցանկանում էի բացատրել քեզ, ամենասիրելի և ամենահիմար Սատանուս, որ ես չէի կարող հույսս քեզ վրա դնել, ուստի դիտմամբ հորինեցի Պիզայի աշտարակի մասին այդ պատմությունը, որ թաքցնեմ քեզանից իմ իսկական ծրագրերը: Դրանք պետք է միանգամայն գաղտնի մնային:

- Մինչև ե՞րբ, պրոֆեսոր։

- Մինչև երեկ, ամենահետաքրքրասերդ իմ, Սատանուս։ Իսկ այսօր արդեն դու կարող ես իմանալ իմ մտահղացումը։ Մի քանի ժամից մենք կավարտենք աշխատանքը և երեկոյան կմեկնենք։

- Կմեկնե՞նք։

- Այո՛։ Հենց նույն գերամբարձիչով, բնականաբար։

- Իսկ կարելի՞ իմանալ, թե ուր ենք մեկնելու։

- Տիեզերք, իմ թանկագին Սատանուս, որ հարցական նշանի սիրահար ես։

- Տիեզե՞րք։

- Ավելի ճիշտ՝ Լուսին։

- Լուսի՛ն։

- Տեսնում եմ՝ հարցական նշանից բացականչականի ես անցնում։ Բայց գործը պետք չէ ձգձգել։ Ուշադիր լսիր, թե ինչ եմ ասում։ Ահա՛ իմ ծրագիրը։ Ատոմային գերամբարձիչի օգնությամբ ես կբարձրացնեմ Լուսինը, կհանեմ իր ուղեծրից և կտանեմ տիեզերքի մի այլ վայր իմ հայեցողությամբ։

- Հրաշալի՛ է։

- Այնտեղից էլ, թանկագին Սատանուս, մենք կսկսենք մեր բանակցությունները Երկրի բնակիչների հետ։

- Ցնցո՛ղ է։

- Ուզո՞ւմ եք, որ Լուսինը վերադառնա իր տեղը։ Ուրեմն փրկագնել այն իր նոր տիրոջից՝ պրոֆեսոր Զարհուր Զարհուրելիից։ Որքա՞ն պետք է վճարեք։ Լուսնի քաշով մեկ ոսկի։

- Անհավանակա՛ն է։

- Քաշով մեկ ոսկի, հասկանո՞ւմ ես, սիրելիդ իմ Սատանուս, ո՛ս-կի՛։

- Գեր-անհավանակա՛ն է։

- Հիմա ըմբռնեցի՞ր իմաստը։

- Ըմբռնեցի, պրոֆեսոր։ Դա 20-»դ դարի ամենահանճարեղ գաղափարն է։

- Հույս ունեմ, որ նաև ամենադավադիրն ու նենգն է։ Ես որոշել եմ պատմության մեջ մնալ որպես բոլոր ժամանակների ու բոլոր ժողովուրդների ամենասատանայական ու ամենասարսափելի մարդը։ Իսկ հիմա, Սատանո՛ւս, գործի անցնենք...

Շուտով ատոմային գերամբարձիչը լիովին պատրաստ էր։ Այդ հատաքրքրական սարքը շատ նման էր այն սովորական ամբարձիչներին, որով մեքենաներն են բարձրացնում, երբ

անհրաժեշտ է լինում փոխել ծակված անվադողը։ Միայն թե մի քիչ ավելի մեծ էր և մինում էր տիեզերական խցիկի հետ, որի մեջ երկու մեծ թիկնաթոռ կար։ Այն ժամին, որն ընտրել էր պրոֆեսոր Զարհուրելին իր սատանայական մտահղացման իրագործման համար, այդ աթոռներին նստեցին գյուտարարն ու նրա օգնականը, որը դժվարությամբ էր թաքցնում իր տարօրինակ դողը։

- Հանգստացի՛ր, Սատանո՛ւս։

- Ա-այո.. սին-յո-որ պրո-ֆ-ֆե-սոր...

- Հերիք է կմկմաս։

- Ա-այո.. սին-յոր պրո-ֆեսոր...

- Վերցրո՛ւ, խմի՛ր այս դեղահաբը, և ամեն ինչ կանցնի։

- Շնորհակալ եմ, պրոֆեսոր Զարհուրելի, ես միանգամայն հանգիստ եմ։

- Հրաշալի է։ Հիմա հետհաշվարկ տուր, Սատանուս...

- Մինուս հինգ... մինուս վեց... մինուս յոթ...

- Քեզ ասացի՝ հետհաշվարկ, հե՛տ հաշվիր...

- Վա՛յ, ներեցե՛ք, խնդրում եմ։ Մինուս հինգ... մինուս չորս... մինուս երեք... մինուս երկու...

- Մեկնա՛րկ։

Առաջին ավարտ

Այդ երեկո Լուսինը երկնքում չերևաց։ Սկզբում մարդիկ մտածեցին, որ այն ամպերի հետևում է թաքնվել։ Բայց երկինքը մաքուր էր, աստղազարդ, իսկ Լուսինը փառահեղորեն բացակայում էր։ Երկար որոնումներից հետո աստղագետներն, այնուամենայնիվ գտան այն։ Փոքրիկ կետի նման այն երևում էր շատ հեռվում՝ Խեցգետնի համաստեղության կողմերում։

- Ա՛յ քեզ բան, տեսե՛ք որտեղ է թաքնվել։ Ո՞նց էլ կարողացել է...

Հենց այդ պահին պրոֆեսոր Զարհուրելիի ձայնը հնչեց աշխարհի բոլոր ռադիոընդունիչներից.

- Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն, խոսում է պրոֆեսոր Զարհուրելին։ Զարհուրելին դիմում է Երկիր մոլորակին։ Ինչպես արդեն համոզվեցիք, ես ձեզանից խլել եմ Լուսինը։ Եթե ուզում եք, որ այն նորից վերադառնա իր ուղեծիր, նրա համար ոսկով վճարեք։ Այնքան ոսկի, որքան կշռում է Լուսինը։ Աստղագետները լավ գիտեն նրա քաշը նույնիսկ գրամի ճշտությամբ։ Պատասխանին սպասում եմ միայն մեկ օր։ Եթե չընդունեք իմ պայմանները, ես կպայթեցնեմ Լուսինը, և դուք այլևս երբեք չեք տեսնի այն։ Դուք ինձ լա՞վ հասկացաք։ Երբե՛ք։ Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն։ Խոսում է պրոֆեսոր Զարհուրելին։

Եվ որպեսզի իրեն լավ հասկանան, սատանայական գիտնականը էլի երկու անգամ կրկնեց իր հայտարարությունը։ Նրա՝ բացառիկ տաղանդավոր մարդու համար, ինքներդ էլ հասկանում եք, ամենևին էլ դժվար չէր եթեր դուրս գալ միանգամից Երկրագնդի բոլոր ռադիոկայաններով։

Բայց նրա չար բախտից Երկրի վրա ոչ մեկը չէր տխրել լուսնի անհետացման համար։ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Սովետական Միությունը, Իտալիան, Ֆրանսիան, Չինաստանը, Ճապոնիան և շատ այլ խոշոր երկրներ տեղնուտեղը տիեզերք ուղարկեցին մեկը մյուսից պայծառ բազմաթիվ արհեստական Լուսիններ։ Այնպես որ լուսնի լույսը հանկարծ ավելի շատացավ, այնպես որ որոշ մարդիկ նույնիսկ դժգոհ էին, քանի որ լույսը նրանց խանգարում էր քնել։

Իսկ պրոֆեսոր Զարհուրելին ստիպված էր մնալ հին Լուսնի վրա և սրտնեղությունից եղունգները կրծել։

Երկրորդ ավարտ

Լուսնի անհետացումը շատ հուզեց մարդկանց աշխարհի բոլոր ծայրերում։

- Ինչպե՞ս պիտի հիմա հոգոց հանենք առանց Լուսնի լույսի,- հարցնում էին երազկոտները։

- Իսկ ես միշտ պառկում էի քնելու Լուսնի լույսի ներքո, ի՞նչ է, հիմա ստիպված եմ լո՞ւյս վառել,- տխրում էր մի ժլատ։

- Վերադարձրե՛ք մեր Լուսինը,- պահանջում էին թերթերը։

Իսկ մի խարդախ մարդ տնից տուն էր գնում՝ ասելով, թե հատուկ հանձնաժողովն իրեն հանձնարարել է Լուսնի փրկագնման համար ոսկի հավաքել։ Եվ գտնվեցին միամիտ դյուրահավատներ, որոնք հավատացին նրան և տվեցին իրենց մատանիները, ականջօղերը, մանյակներն ու շղթաները։ Մի քանի կիլոգրամ ոսկի հավաքելով՝ խարդախը փախավ Վենեսուելա, և ոչ ոք այլևս ոչինչ չլսեց նրա մասին։

Մարդկության և Լուսնի լույսի սիրահարների բախտից այդ ժամանակ Օրտա լճի մոտ Օմենյա քաղաքում ապրում էր մի գիտնական, որը պրոֆեսոր Զարհուրելիից պակաս տաղանդավոր և հնարամիտ չէր, բայց նրա նման նենգ ու չար չէր։ Նր անունը Մագնիտիուս էր։ Ընդամենը մի քանի ժամվա ընթացքում նա, ոչմեկին ոչինչ չասելով, նա ատոմային գերմագնիս պատրաստեց, և նրա միջոցով Լուսինը վերադարձրեց իր հին ուղեծիր։

Իզուր էր պրոֆեսոր Զարհուրելին գործի դրել իր գերամբարձիչի ողջ հրեշավոր ուժը։ Նա ոչինչ չկարողացավ անել Մագնիտիուսի գերմագնիսի դեմ։ Սրտնեղությունից Զարհուրելին հեռացավ Յուպիտեր մոլորակ։

Իսկ մարդիկ այդպես էլ երբեք չիմացան, թե ով և ինչպես Լուսինը վերադարձրեց իր տեղը, այն էլ՝ առանց ծախսերի։ Մագնիտիուսը փառքի չէր ձգտում և ոչ մեկին ոչինչ չասաց։ Մանավանդ, որ նա արդեն զբաղված էր մեկ այլ՝ բացառիկ կարևոր հայտնագործությամբ. հնարում էր կոճակներ, որոնք երբեք չեն պոկվում։ Եվ պատմությանմ եջ մտավ, ինչպես գիտեք, որպես հենց այդ կոճակների հորինող։

Երրորդ ավարտ

Պրոֆեսոր Զարհուրելիի հայտարարած «Մեկնա՛րկ» հրահանգից հետո այնպիսի բարձր ձայն լսվեց, որ հարևան տան բնակիչներին թվաց, թե դա ոստիկանական մեքենայի ազդանշան է։ Իսկ գյուտարարն ու նրա օգնականը մի քանի վայրկյան անց հայտնվեցին Լուսնի վրա ինչ-որ փոքրիկ մի խառնարանի մեջ։

- Ցնցո՛ղ է, սինյոր պրոֆեսոր,- հիացմունքից ձեռքերը շփեց Սատանուսը։- Գերցնցող է։

- Սո՛ւս մնա,- զայրացավ Զարհուրելին։- Լռի՛ր,- նորից բղավեց նա մի քիչ հետո, թեև Սատանուսը բերանն էլ չէր բացել։

Երբ պրոֆեսոր Զարհուրելին երրորդ անգամ հրամայեց՝ «Լռի՛ր», նույնիսկ Սատանուսը հասկացավ, որ ինչ-որ բան կարգին չէ։ Հսկա գերամբարձիչն իզուր էր անջատում իր ողջ սատանայական ուժը, Լուսինը մեկ միլիմետր անգամ չէր տեղաշարժվում իր հավերժական ուղեծրից։ Պետք է ասեմ, որ գիտության բոլոր ոլորտներում տաղանդավոր և հնարամիտ պրոֆեսոր Զարհուրելին վատ էր գլուխ հանում չափի ու կոի համակարգերից։ Լուսնի քաշը հաշվարկելիս նա սխալվել էր տոննաները ցենտներ դարձնելիս։ Եվ պարզվեց, որ գերամբարձիչը սարքել էր այնպիսի լուսնի համար, որը տասն անգամ թեթև էր մեր Լուսնից։ Պրոֆեսոր Զարհուրելին տնքաց սրտնեղությունից։ Հետո նստեց տիեզերանավ և սլացավ դեպի տեզերական հեռունե՝ իր խեղճ Սատանուսին թողնելով լուսնային խառնարանում առանց գոնե մեկ բաժակ ջրի, առանց կոնֆետի, որ նա կարողանար ուշքի գալ վախից։

ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ԼԱՑ Է ԼԻՆՈՒՄ

Եթե հիշում եք հին հեքիաթն այն արքայադստեր մասին, ով չէր կարողանում քնել ներքնակների կույտի վրա, որովհետև դրանց տակ սիսեռի հատիկ կար, ապա, անշուշտ, կհասկանաք նաև այս պատմությունը, որն ուզում եմ պատմել ձեզ, պատմություն մի ծեր, բարի, գուցե նաև աշխարհի ամենաբարի մարդու մասին:

Մի անգամ, երբ նա արդեն պառկել էր քնելու և ցանկանում էր անջատել լույսը, հանկարծ լսեց ինչ-որ մեկի լացը:

«Տարօրինակ է,- զարմացավ ծեր սինյորը,- ո՞վ կարող էր լինել: Գուցե տանը ինչ-որ մե՞կը կա»: Նա վեր կացավ, վրան գցեց խալաթը և շրջեց իր փոքրիկ բնակարանով, որտեղ ապրում էր մենակ, ամենուր միացրեց լույսերը, նայեց բոլոր անկյունները...

- Ո՛չ, ոչ –ոք չկա, երևի հարևանների մոտ է…

Նա նորից անկողին մտավ, բայց շուտով դարձյալ լսեց. ինչ-որ մեկը լաց էր լինում…

- Հիմա էլ թվում է, որ փողոցում է,- ինքն իրեն ասաց պարոնը:- Իհարկե այնտեղ է: Պետք է գնալ ու տեսնել, թե ինչ է պատահել:

Նա վեր կացավ, տաք հագնվեց, քանի որ գիշերը ցուրտ էր, և դուրս եկավ բակ:

- Ա՜յ քեզ բան: Թվում էր՝ շատ մոտ է, իսկ այստեղ ոչ-ոք չկա: Երևի հարևան փողոցում է...

Եվ նա գնաց դեպի այդ լացը. փողոցից փողոց, հրապարակից հրապարակ, մինչև հասավ քաղաքի ծայրամաս: Հենց այստեղ, մի դարպասի տակ՝բակամուտքում տեսավ մի ծեր մարդու: Նա պառկած էր մի կույտ փալասների վրա և դառնորեն տնքում էր:

– Ի՞նչ եք այստեղ անում,-զարմացավ ծեր պարոնը:- Դուք ձեզ վա՞տ եք զգում:

Լսելով, որ իրեն են դիմում, ծերուկը վախեցավ:

– Ո՞վ է, տան տե՞րը: Գնում եմ… հիմա, հիմա կգնամ…

– Բայց ո՞ւր եք գնալու:

–Ո՞ւր: Չգիտեմ… Տուն չունեմ, հարազատներ չունեմ: Դրա համար էլ այստեղ եմ պատսպարվել… Այսօր գիշերն այնքան ցուրտ է: Մի փորձեիք ինքներդ քնել այգում՝ նստարանի վրա, թերթերով ծածկված: Այդպես կարելի է ընդմիշտ քնել: Բայց դա ձեր գործը չէ, իհարկե: Գնում եմ, գնում եմ...

- Չէ, սպասե՛ք: Ես տան տերը չեմ…

- Այդ դեպքում ի՞նչ եք ուզում ինձանից: Հա՜, տե՞ղ տամ: Եկե՛ք, հարմարվե՛ք. ծածկոց չունեմ, բայց տեղը երկուսիս էլ կհերիքի:

- Ուզում էի ասել… իմ տանն ավելի տաք է, և բազմոց կա…

- Բազմո՞ց, տաքությո՞ւն։

- Դե՛, վե՛ր կացեք, գնանք։ Ու գիտեք, թե ինչ կանենք։ Քնելուց առաջ մի-մի գավաթ տաք կաթ կխմենք …

Ու նրանք ճանապարհ ընկան՝ ծեր պարոնը և անտուն ծերուկը։ Իսկ հաջորդ օրը տարեց պարոնը ծերուկին հիվանդանոց ուղարկեց, քանի որ այգում և բակամուտքերում անցկացրած գիշերներից հետո նա հիվանդացել էր. սուր բրոնխիտ ուներ։

Տարեց պարոնը վերադարձավ տուն, երբ արդեն երեկո էր։ Ուզում էր պառկել քնելու,երբ հանկարծ նորից լսեց, որ ինչ-որ մեկը լաց է լինում։

- Նորից,- հոգոց հանեց նա։- Տանն արդեն կարելի է չփնտրել։ Առանց փնտրելու էլ գիտեմ՝ ոչ-ոք չկա։ Ո՜նց եմ քնել ուզում... Բայց այս լացի ձայնն ականջիս մեջ մի՞թե կարող եմ քնել։ Պետք է գնալ տեսնել…

Նախորդ օրվա նման ծեր պարոնը դուրս եկավ տանից և գնաց դեպի լացը, որն այս անգամ թվում էր, թե հեռվից է լսվում։ Գնա՜ց, գնա՜ց, անցավ ամբողջ քաղաքով։ Հետո մի տարօրինակ բան կատարվեց. նա ինչ-որ մի հրաշքով հայտնվեց ուրիշ քաղաքում, հետո նույնքան անհասկանալի կերպով հայտնվեց երրորդում, բայց այստեղ էլ չկարողացավ հասկանալ՝ ո՞վ է լաց լինում։

Ահա արդեն անցավ իրենց ողջ մարզը և վերջապես հասավ բարձր լեռներում գտնվող մի փոքրիկ գյուղ։

Հենց այստեղ տեսավ մի խեղճ կնոջ, որը լաց էր լինում հիվանդ երեխայի անկողնու մոտ, քանի որ չկար մեկը, որ գնար բժշկի հետևից։

- Ես չեմ կարող երեխայիս մենակ թողնել, դուրս հանել էլ չի կարելի. այնքա՜ն շատ ձյուն է եկել։

Դրսում իրոք շուրջ բոլորը սպիտակել էր ձյունից։

- Պետք չէ լացել,- հանգստացրեց կնոջը ծեր պարոնը։ - Բացատրեք, թե որտեղ է ապրում բժիշկը, և ես կգնամ նրա հետևից։ Իսկ դուք առայժմ թաց լաթի կտոր դրեք երեխայի գլխին, կթեթևանա։

Ծեր պարոնն օգնեց կնոջը՝ ինչով կարող էր։ Վերջապես վերադարձավ տուն։ Ու հենց ուզում էր քնել, նորից լսեց, որ ինչ-որ մեկը լաց է լինում։ Լացն այնքան պարզորոշ էր լսվում, ասես շատ մոտ լիներ՝ հենց խոհանոցում։ Չի կարելի թույլ տալ, որ որևէ մարդ լաց լինի։ Ծեր պարոնը հոգոց հանեց, հագնվեց, դուրս եկավ բակ և գնաց դեպի այդ կանչը։ Ու նորից նրա հետ ինչ-որ տարօրինակ բան կատարվեց։ Որովհետև նույնքան անհասկանալի կերպով նա հայտնվեց

ուրիշ երկրում՝ ծովից այն կողմ: Այնտեղ պատերազմ էր, ու շատ մարդիկ առանց ծածկի էին մնացել, որովետև ռումբերը պայթեցրել էին նրանց տները:

- Արիացե՛ք, արիացե՛ք,- քաջալերում էր նրանց ծեր պարոնը և փորձում օգնել իր ուժերի չափով, իսկ նրա ուժերն այնքան էլ շատ չէին: Այնուամենայնիվ, մարդկանց հոգսը մի քիչ թեթևացավ, նրանք դադարեցին լաց լինել, ու նա վերադարձավ տուն: Իսկ այստեղ արդեն լույսը բացվել էր, ու քնելու ժամանակը չէր:

- Այսօր երեկոյան,- որոշեց ծեր պարոնը,- շուտ կպառկեմ:

Բայց չէ՞ որ աշխարհում միշտ ինչ-որ տեղ ինչ-որ մեկը լաց է լինում, միշտ որևէ մեկն ինչ-որ տեղ իրեն վատ է զգում. Եվրոպայում կամ Աֆրիկայում, Ասիայում կամ Ամերիկայում: Եվ ծեր պարոնը միշտ լսում էր ինչ-որ մեկի լացը, որը հասնում էր նրա բարձին և հանգիստ չէր տալիս: Եվ այդպես ամեն գիշեր, օր-օրի: Այդ լացն անընդհատ հետապնդում էր նրան: Պատահում էր, որ ինչ-որ մեկը լաց էր լինում շատ հեռվում, մյուս կիսագնդում, բայց նա, միևնույնն է, լսում էր նրան: Լսում էր և չէր կարողանում քնել...

Առաջին ավարտ

Պատճառն այն էր, որ ծեր պարոնը շատ բարի մարդ էր: Ցավոք սրտի, մշտական անքնությունից նա շատ-շատ նյարդային էր դարձել:

-Ա՛խ, եթե կարողանայի քնել,- հառաչում էր նա,- գոնե օրումեջ: Ի վերջո ես հո մենակ չե՞մ այս աշխարհում: Մի՞թե ուրիշ ոչ մեկին չի անհանգստացնում այս լացը, ոչ մեկի մտքով չի՞ անցնում, ի՞նչ է, վեր կենալ անկողնուց և տեսնել՝ ով է լաց լինում:

Երբեմն, նորից լսելով լացի ձայնը, նա փորձում էր ինքն իրեն համոզել.

- Այսօր չեմ գնա. մրսած եմ, մեջքս ցավում է… Ի վերջո, ոչ-ոք չի կարող մեղադրել, որ ես եսասեր եմ:

Բայց ինչ-որ մեկն ինչ-որ տեղում շարունակում էր լաց լինել, ու այնպես աղիողորմ, որ ծեր պարոնն ի վերջո վեր էր կենում և գնում օգնության:

Նա ավելի ու ավելի էր հոգնում: Եվ ավելի դյուրագրգիռ էր դառնում: Մի անգամ գիշերը որոշեց ականջները փակել բամբակով, որպեսզի չլսի լացի ձայնը և ի վերջո գոնե մի քիչ հանգիստ քնի:

«Միայն մեկ կամ երկու անգամ այսպես կվարվեմ,- ինքն իրեն համոզում էր նա,- միայն մի քիչ հանգստանամ: Ինձ համար արձակուրդի նման մի բան կազմակերպեմ»:

Եվ նա մի ամբողջ ամիս փակեց ականջները:

Իսկ մի օր երեկոյան նա ականջների մեջ բամբակ չդրեց: Ականջ դրեց: Բայց ոչինչ չլսեց: Գիշերվա կեսն արթուն մնաց, սպասում էր, որ շուտով կլսի ինչ-որ մեկի լացը, բայց այդպես էլ ոչինչ չլսեց: Ոչ-ոք չէր լացում, ինչ-որ տեղ, հեռվում միայն շներն էին հաչում:

- Կամ ոչ-ոք այլևս չի լացում,- որոշեց նա,- կամ ես եմ խլացել:

Դե ինչ, շատ ավելի լավ:

Երկրորդ ավարտ

Եվ այդ ժամանակից ի վեր շատ տարիների ընթացքում ծեր պարոնն ամեն գիշեր վեր էր կենում և ցանկացած եղանակի շտապում էր աշխարհի մի ծայրից մյուսը՝ ինչ-որ մեկին օգնելու համար: Հիմա արդեն շատ քիչ էր քնում, այն էլ՝ միայն ճաշից հետո, անգամ չէր հանվում. քնում էր բազկաթոռի մեջ, որն իրենից ավելի ծեր էր:

Եվ հարևաններն ինչ-որ բան կասկածեցին:

- Հետաքրքիր է, էս ու՞ր է գնում ամեն գիշեր:

- Թափառում է աստված գիտի, թե որտեղ: Պարզապես թափառաշրջիկ է, մի՞թե պարզ չէ:

- Իսկ գուցե նաև գո՞ղ է…

- Գո՞ղ: Դե իհա՛րկե: Ահա և պատասխանը:

- Պետք է հետևել նրան…

Իսկ մի գիշեր, այն տանը, որտեղ ապրում էր ծեր պարոնը, ինչ-որ մեկին թալանեցին: Եվ հարևանները ծեր պարոնին մեղադրեցին: Նրա բնակարանը խուզարկեցին, ամեն ինչ գլխիվայր շուռ տվեցին, Ծեր պարոնն ամբողջ ուժով բողոքում էր.

- Ես ոչինչ չեմ գողացել, ես դրա հետ կապ չունեմ:

- Ախ, այդպե՞ս, ուրեմն ասացեք, թե ուր եք գնում ամեն գիշեր:

- Ես գնացել եմ… գիտեք ինչ… Գնացել էի Արգենտինա, այնտեղ մի գյուղացի ոչ մի կերպ չէր կարողանում գտնել իր կովը և…

- Ա՛յ քեզ անամոթ: Արգենտինայո՞ւմ… Կո՞վ էիր փնտրում…

Մի խոսքով, ծեր պարոնին բանտ ուղարկեցին: Նա բանտում նստած լիովին հուսահատվել էր, քանի որ առաջվա նման գիշերները լսում էր ինչ-որ մեկի լացը, բայց չէր կարողանում դուրս գալ բանտախցից, որպեսզի օգներ նրան, ով այդքան զգում էր իր օգնության կարիքը:

Երրորդ ավարտ

Երրորդ վերջաբանը դեռ չկա:

Չնայած այն կարող էր լինել այսպիսին: Մի հիանալի գիշեր ամբողջ աշխարհում չկար ոչ մի մարդ, անգամ ոչ մի երեխա, որ լաց լիներ… հաջորդ գիշերը նույնպես… Աշխարհում այլևս լաց լինող ու դժբախտ մարդիկ չկային:

Գուցե երբևէ հենց այդպես էլ լինի: Տարեց պարոնն արդեն շատ ծեր է, որ ապրի մինչև այդ երջանիկ օրը: Բայց նա առաջվա նման վեր է կենում գիշերները և գնում է դեպի լացը, որովհետև այդպիսին է նրա բնավորությունը և նա երբեք չի կորցնում հույսը:

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԻԱՑ-ՆԵՄԸ

Կար չկար աշխարհում մի աղքատ հրաշագործ կար... Երևի արդեն զարմացա՞ք. հրաշագործ ու հանկարծ՝ աղքատ: Սովորաբար հեքիաթներում այդ երկու բառերը երբեք իրար հետ չեն հանդիպում: Բայց նա, թեև ամենաիսկական հրաշագործ էր, այնուամենայնիվ, շատ աղքատ էր: Որովհետև վաղուց արդեն կորցրել էր իր բոլոր հաճախորդներին:

– Մի՞թե, - հուսալքված մտածում էր նա,- ես այլևս ոչ մեկին պետք չեմ: Ախր առաջ ես այնքա՜ն պատվիրատու ունեի, որ հազիվ էի հասցնում կատարել նրանց խնդրանքները: Մեկին մի բան էր պետք լինում, մեկին՝ մի ուրիշ: Բայց չէ՞ որ ես, գլուխ գովել չլինի, իմ գործը լավ գիտեմ: Թերևս պետք է թափառել աշխարհով մեկ ու տեսնել, թե ինչ է պատահել: Գուցե ինձնից ավելի լավ մի հրաշագո՞րծ է հայտնվել: Պետք է ծանոթանալ նրա հետ...

Ասելն ու անելը մեկ եղավ: Հրաշագործը վերցրեց իր թանկարժեք գործիքները՝ կախարդական փայտիկը, կախարդանքների գիրքը, հրաշագործ փոշիները, և ճանապարհ ընկավ: Գնա՜ց, գնաց ամբողջ օրը, վերջապես երեկոյան հասավ ինչ-որ տնակի: Թակեց դուռը՝ թը՛խկ-թը՛խկ:

– Ո՞վ է:

– Բարեկամ է, տիկին, բարեկամ:

– Ա՛յ թե լավ է: Համեցե՛ք ներս: Բարեկամները հազվադեպ են ինձ այցելում: Նստե՛ք: Ի՞նչ հյուրասիրեմ: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

– Ի՞նձ եք առաջարկում: Ո՛չ, տիկի՛ն, շնորհակալ եմ: Մի՛ անհանգստացեք: Ինձ ոչինչ հարկավոր չէ: Գուցե ես ի՞նքս կարող եմ ձեզ ինչ-որ բանով օգտակար լինել: Գիտեք, չէ՞ որ ես հրաշագործ եմ: Իմ անունն է Միաց-Նեմ:

–Հրաշագո՞րծ: Ի՜նչ հետաքրքիր է:

– Այո՛, հրաշագործ: Տեսնո՞ւմ եք այս փայտիկը: Տեսքից հասարակ է թվում, բայց իրականում կախարդական է: Բավական է ասեմ երկու բառ, որոնք ինձանից բացի ոչ ոք չգիտի, և երկնքից մի աստղ կիջնի, որ կլուսավորի ձեր տունը...

Այստեղ տիկինն ընդհատեց նրան.

– Վա՜յ, ի դեպ, հիմա լույսը կմիացնեմ: Գիտեք, մտքերի մեջ էի ընկել և չնկատեցի, թե ինչպես մթնեց: Ներեցե՛ք, խնդրում եմ: Հիմա ամեն ինչ կարգին է: Ուրեմն ի՞նչ էիք ասում լույսի մասին:

Բայց հրաշագործն այնքան էր զարմացել, որ մի խոսք անգամ չէր կարողանում ասել: Նա զարմանքից բերանը բաց այնպես էր նայում լամպին, կարծես ուզում էր կուլ տար:

– Բայց… Ինչպե՞ս արեցիք դա, տիկի՛ն:

– Ի՞նչը: Հա՜, լո՞ւյսը: Պարզապես միացրեցի, և լամպը վառվեց: Շատ լավ բան է էլեկտրականությունը:

Հրաշագործ Միաց-Նեմը մտքում պահեց այդ նոր բառը՝ «էլեկտրականություն»: «Ահա թե ինչ,- մտածեց նա,- ուրեմն սա է այն հրաշագործի անունը, որն ուժեղ է ինձնից»:

Այնուհետ նա համարձակվեց շարունակել խոսակցությունը:

– Ես ասացի, տիկի՛ն, որ հրաշագործ եմ, և կարող եմ անել ամենաանհավանական հրաշքները: Օրինակ, բավական է մի պտղունց այս փոշուց լցնեմ ջրով բաժակի մեջ, և դուք կլսեք այն մարդու ձայնը, որը գտնվում է այստեղից շատ հեռու:

– Վա՜յ,- նորից ընդհատեց նրան տիկինը,- դուք ինձ հիշեցրիք, որ պիտի փականագործին զանգահարեմ: Ներեցե՛ք, խնդրում եմ: Ահա համարը … Ալլո՞, փականագո՞րծն է: Չէի՞ք կարող վաղը գալ իմ տուն և նորոգել խոհանոցի ծորակը: Շնորհակալ եմ, շնորհակալ եմ: Հաջողություն: Ահա, ամեն ինչ կարգին է:

Հրաշագործ Միաց-Նեմը զարմանքից համրացել էր և չկարողացավ անմիջապես խոսել:

– Տիկի՛ն, բայց ո՞ւմ հետ էիք նոր խոսում:

– Փականագործի, չէ՞ որ լսեցիք: Շատ հարմար բան է հեռախոսը:

Հրաշագործը նորից մտքում նշեց. «Էլի մի հրաշագործ, որի մասին երբեք չէի լսել: Տես, է՜, ինչպիսի մրցակիցներ ունեմ...» Այնուհետև ասաց.

– Լսե՛ք , տիկի՛ն, իսկ գուցե կցանկանայիք տեսնել ինչ-որ մեկին, որը հիմա շատ հեռու է գտնվում այստեղից: Պարզապես ասացե՛ք: Ես մի ուրիշ կախարդական փոշի էլ ունեմ, որի օգնությամբ…

– Օ՜, տեր Աստված,– բացականչեց տիկինը՝ ընդհատելով նրան։- Ես այսօր այնքան ցրված եմ։ Հիմա կմիացնեմ հեռուստացույցը։ Ես ախր ուզում էի դահուկորդների մրցումները դիտել։ Գիտե՞ք, տղաս լեռնադահուկային մարզաձևի չեմպիոն է։ Հիմա կմիացնեմ, գուցե դեռ հասցնենք… Այո՛, տեսե՛ք, ի՜նչ լավ է։ Ա՛յ, սա իմ տղան է։ Սա, որի ձեռքը բոլորը սեղմում են։ Որեմն նա նորից հաղթեց։ Տեսե՛ք, ի՜նչ հրաշալի տղա է։ Իսկ ես քիչ էր մնում բաց թողնեի հաղորդումը։ Շնորհակալ եմ, որ հիշեցրիք ինձ…Դուք իսկապես հրաշագործ եք։

– Այո՛, տիկի՛ն,ես արդեն ասացի, որ իսկական հրաշագործ եմ։ Իմ անունն է Միաց-Նեմ։

Ա՜խ, – բացականչեց տիկինը՝ չլսելով նրան։ Ի՜նչ լավ բան է հեռուստացույցը։

Խեղճ հրաշագործը խնդրեց երկու անգամ կրկնել այդ արտահայտությունը, որպեսզի կարողանա մտապահել նաև այս նոր բառը։ Եվ մտածեց. «Եվս մի մրցակից։ Հիմա հասկանալի է, թե ինչու է աշխատանքս քիչ, չէ՞ որ, շուրջբոլորն այսքան շատ տարբեր կախարդներ կան, և բոլորն էլ իմ անվանն են արձագանքում...»։

Հետո նա նորից սկսեց համբերատար առաջարկել իր ծառայությունները.

– Եվ այսպես, լսե՛ք ինձ, տիկի՛ն։ Ինչպես արդեն ասացի, ես հռչակավոր և մեծ հրաշագործ եմ։ Եկել եմ իմանամ, թե կարո՞ղ եմ, արդյոք, օգտակար լինել ձեզ։ Ահա նայե՛ք. սա կախարդական գիրք է, իսկ սա՝ կախարդական փայտիկ։

Առաջին ավարտ

Կարիք կա՞, արդյոք, բացատրել, որ այդ օրը հրաշագործ Միաց-Նեմը ոչ մի հրաշք չգործեց։ Աշխարհը շատ էր փոխվել այն պահից ի վեր , երբ նա վերջին անգամ ճամփորդել էր նրա շուրջ։ Էլեկտրական լամպից, հեռախոսից և հեռուստացույցից հետո խեղճ հրաշագործն էլի հարյուրավոր ուրիշ հրաշքներ հայտնաբերեց, որոնց վրա առաջ հազարավոր հրաշագործներ կչարչարվեին։ Իսկ հիմա այդ հրաշքները հայտնվել են հասարակ մարդկանց իշխանության տակ, որոնք կառավարում են դրանք. պարզապես միացնում են՝ սեղմելով կոճակը։

Հրաշագործը որոշեց հասկանալ, թե ինչպես է կառուցված այս աշխարհը, և մի ամբողջ կապոց թերթ գնեց։ Թերթերից իմացավ, որ Երկրագնդի վրա շատ վայրեր կան, որտեղ իր մրցակիցները դեռ չեն հասել, ամեն տեղ չէ, որ կա էլեկտրականություն, հեռախոս, հեռուստացույց և տարբեր այլ հարմարանքներ։ Եվ աշխարհում շատ մարդիկ կան, որոնք գումար չունեն՝ ժամանակակից այդ հրաշքները գնելու համար։

«Շատ լավ է, – մտածեց հրաշագործը՝ շփելով ձեռքերը, որոնցից կայծեր ցայտեցին։ Կգնամ այնտեղ, որտեղ դեռ շատ աշխատանք կա ինձ համար։ Եվ այնտեղ պիտի որ դեռ հարգեն ծեր, բարի հրաշագործներին։

Երկրորդ ավարտ

Հրաշագործը լսեց ծեր տիկնոջը, նայեց կենցաղային տեխնիկայով հագեցած նրա տանը և հասկացավ, որ ժամանակակից աշխարհում տեղ չի մնացել հին հրաշքների համար:

«Մարդիկ ավելի խելացի են դարձել,- մտածեց նա,- և այնքան տարբեր սատանայական բաներ են հորինել, որոնք մենք՝ հրաշագործներս, երազում էլ չէինք կարող տեսնել: Այնպես որ թանկագին Միաց-Նեմ, ոչինչ չես կարող անել: Ակնհայտ է, որ պիտի հարմարվել, ինչպես հիմա են ասում: Այլ խոսքով՝ կա՛մ փոխիր արհեստդ, կա՛մ հաշտվիր տխուր ծերության հետ:

Հրաշագործն, իհարկե, հիմար չէր և մի փոքր մտածելուց հետո գործողության ծրագիր կազմեց: Նա մի մեծ շինություն վարձեց և կենցաղային իրերի խանութ բացեց: Նա վաճառում էր այդ իրերը նույնիսկ ապառիկ և շուտով այնքան հարստացավ, որ իր համար գնեց մեքենա, գեղեցիկ առանձնատուն լավագույն հանգստավայրում՝ Լազո Մաջորե լճի ափին, գնեց նաև զբոսանավ և կիրակի օրերին նավարկում էր լճում: Եթե քամի չէր լինում, նա չէր տխրում, մի փոքր կախարդանքի շնորհիվ ծածանում էր առագաստները և մի քանի րոպեում հասնում դիմացի ափ: Իր զբոսանավի վրա նա այդպես էլ շարժիչ չդրեց, բենզինի գումարն էր խնայում:

Երրորդ ավարտ

Ի՜նչ դաս եղավ այդ օրը հրաշագործ Միաց-Նեմի համար: Եթե նա հիմար լիներ, երևի պարզապես գլուխը կկորցներ: Բայց, քանի որ հիմար չէր, հասկացավ, որ հրաշքները, որոնք տեսել էր տիկնոջ տանը, ոչ թե հրաշք էին, այլ գիտության նվաճումներ: Իսկ քանի որ նաև զուրկ չէր երևակայությունից, այդպես մտածեց.

- Տե՛ս, թե որքան բան են կարողացել անել մարդիկ առանց կախարդական փայտիկի, միայն իրենց մտքի ու ձեռքերի օգնությամբ: Եվ ո՜վ գիտե, թե էլ ինչեր կարող են ստեղծել: Թերևս ավելի լավ կլինի հրաժարական տալ, դառնալ սովորական մարդ և նստել սովորելու, գուցե այդ ժամանակ ես էլ կկարողանամ մի նոր բան հորինել:

Հրաժարական տալու համար հրաշագործը նույնիսկ հրաշագործների ընկերությանը դիմում գրելու կարիք չուներ: Ընդամենը պետք էր մոտակա ջրանցքը նետել իր բոլոր՝ արդեն անպետք կախարդական գործիքները: Նա այդպես էլ արեց և միանգամայն գոհ, առանց բեռի գնաց նոր կյանքին ընդառաջ:

ՌԻՆԱԼԴՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Մի անգամ Ռինալդոն ընկավ հեծանիվից և տուն գնաց գլխին մի մեծ այտուցով: Հորաքույրը, որի մոտ նրան թողել էին ծնողները, երբ գնացել էին ուրիշ երկիր աշխատանք փնտրելու, շատ էր վախեցել: Նա հենց այն հորաքույրներից էր, ովքեր միշտ ամեն ինչից վախենում են:

- Ռինա՛լդո, տղա՛ս, ի՞նչ է պատահել:

- Ոչ մի Սարսափելի բան, Ռոզա հորաքույր, հեծանիվից եմ ընկել, այդքանը:

- Աստվա՜ծ իմ, ի՜նչ սարսափելի է:

- Բայց դու նույնիսկ չես տեսել, թե ինչպես եմ ընկել:

- Հենց դրա համար էլ վախենում եմ:

- Հաջորդ անգամ ընկնելուց առաջ քեզ կկանչեմ:

- Մի՛ կատակիր, Ռինալդո, ավելի լավ է ասես, թե ինչու ես հեծանիվը քարշ տվել տուն:

- Տո՞ւն: Ոչ, ես այն ինչպես միշտ թողել եմ ներքևում՝ շքամուտքում:

- Ուրեմն սա ո՞ւմ հեծանիվն է: – Եվ հորաքույրը ցույց տվեց խոհանոցի անկյունը:

Ռինալդոն շրջվեց և պատի տակ մի կարմիր հեծանիվ տեսավ:

- Սա՞: Սա իմը չէ, Ռոզա հորաքույր, իմ հեծանիվը կանաչ է:

-Իսկապես, կանաչ է… Ուրեմն ո՞ւմն է սա: Հեծանիվը չէր կարող ինքնիրեն տուն բարձրանալ:

- Ի՞նչ կա որ, գուցե ուրվականնե՞րն են այստեղ գործ արել:

- Մի՛ խոսիր նրանց մասին, Ռինալդո, խնդրում եմ:

- Բայց գեղեցիկ հեծանիվ է, չէ՞:

Հանկարծ Ռոզա հորաքույր ճչաց:

- Ի՞նչ պատահեց:

- Տե՛ս, մի հատ էլ հայտնվեց:

- Իսկապես որ: Եվ սա էլ է գեղեցիկ:

Սինյորա Ռոզան պարզապես խուճապի մեջ էր. նա երբեք այսպես չէր վախեցել:

- Բայց որտեղի՞ց են հայտնվում այս բոլոր հեծանիվները:

- Դա շատ պարզ է,- բացատրեց Ռինալդոն,- հավանաբար ինչ-որ հիանալի հրաշք է կատարվում: Իսկ պատահաբար իմ սենյակում էլ հեծանիվ չկա՞: Կա՜: Տե՛ս, Ռոզա հորաքույր,

էստեղ էլ հեծանիվ կա: Հիմա արդեն երեքն են: Եթե այսպես շարունակվի, շուտով մեր տունը հեծանիվներով կլցվի...

Այստեղ հորաքույրը վախից այնպես գոռաց, որ Ռինալդոն նույնիսկ ականջները փակեց: Պարզվում է, որ նա դեռ չէր հասցրել մինչև վերջ արտասանել «հեծանիվներով» բառը, երբ դրանք լցվեցին բնակարանով մեկ:

- Տասներկու հեծանիվ լոգասենյակում կա,- ակամա հաշվում էր Հորաքույր Ռոզան՝ ապշած հայացք գցելով այնտեղ,- երկուսը հենց լոգախցիկում են:

- Բավական է, Ռինալդո՛,- աթոռին ընկնելով աղաչեց խեղճ կինը, - բավական է, ես այլևս չեմ կարող:

-Իսկ ի՞նչն է բավական: Ես ի՞նչ կապ ունեմ: Դրանք ես չեմ արտադրում: Ի՞նչ ես հնարում, ես նույնիսկ երեքակնանի հեծանիվ չեմ կարող սարքել, ուր մնաց՝ սրանք:

- «Զը՛նգ-զրը՛նգ»

Հանկարծ սեղանին մի հրաշալի երեքակնանի հեծանիվ հայտնվեց, բոլորովին նոր, անիվները դեռ թղթով փաթաթված: Իսկ զանգը ուրախ զրնգում էր, կարծես ասելով՝ «Ես էլ եմ այստեղ»:

- Ռինա՛լդո, խնդրում եմ քեզ:

- Ռոզա Հորաքույր, իսկապե՞ս կարծում եք, թե այս ամենը որևէ չափով ինձնից է կախված:

- Իհարկե, տղաս, ուզում եմ ասել… Ոչ, չեմ կարծում… Բայց միևնույն է, Ռինալդո, խնդրում եմ, զգույշ եղիր, այլևս մի արտասանի «հեծանիվ» բառը, նույնիսկ «երեքակնանի» բառը չասես :

Ռինալդոն ծիծաղեց.

- Դե, եթե հարցը միայն այդ է, կարող եմ ուրիշ բաներից խոսել. օրինակ՝ զարթուցիչներից կամ ձմերուկներից… Կամ, ասենք, շոկոլադե թխվածքից կամ ռետինե երկարաճիտ կոշիկներից:

Հորաքույրն ուշագնաց եղավ: Երբ Ռինալդոն արտասանում էր այդ առարկաների անունները, տունը լցվում էր դրանցով. զարթուցիչներով, ձմերուկներով, շոկոլադե թխվածքներով և ճտքակոշիկներով: Այդ անսովոր և անսպասելի առարկաները հայտնվում էին ոչնչից, ուրվականների նման:

- Հորաքո՛ւյր, Ռոզա հորաքույր:

- Հա՛, ի՞նչ է: Ա՛խ,- ուշքի գալով մի կերպ արտասանեց հորաքույրը:- Ռինա՛լդո, թանկագինս, նստի՛ր խնդրում եմ ա՛յ, այնտեղ ու լռի՛ր: Դու սիրո՞ւմ ես քո հորաքրոջը: Ուրեմն նստի՛ր ու մի՛ շարժվիր: Իսկ ես գնում եմ պրոֆեսոր Դե Հրաշագործի հետևից: Նա կհասկանա, բանն ինչում է:

Պրոֆեսոր Դե Հրաշագործը, որի մոտ սլացավ Ռոզա հորաքույրը, թոշակառու էր և ապրում էր հարևան տանը: Երբ Ռոզա հորաքույրն ինչ-որ բարդ խնդիր էր ունենում լուծելու, միշտ դիմում էր պրոֆեսորին, քանի որ նա երբեք չէր ստիպում, որ իրեն խնդրեն: Միշտ սիրով լսում ու խորհուրդներ էր տալիս: Միայն տարեց մարդիկ կարող են այդքան համբերատար ու բարի լինել: Այս անգամ նույնպես պրոֆեսորը թույլ չտվեց, որ իրեն համոզեն:

- Դե, երիտասարդ, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

- Բարի երեկո, պրոֆեսոր: Չգիտեմ, կարծես թե տանը հայտնվել են…

Բայց նա չհասցրեց «ուրվական» բառն արտասանել, քանի որ Ռոզա հորաքույրը ձեռքի ափով փակեց նրա բերանը:

- Ո՛չ, Ռինա՛լդո, չասես այդ բառը: Ինչ ուզում ես, միայն ոչ ուրվականներ:

- Տիկի՛ն, բացատրե՛ք, թե որն է խնդիրը,- շարունակեց պրոֆեսորը,- ի՞նչ է կատարվում:

- Ախր, բացատրելու բան էլ չկա: Նա ընկել էր հեծանիվից և վնասել ճակատը: Եվ ահա, խնդրեմ: Բավական է նա որևէ առարկայի անուն տա, այն իսկույն հայտնվում է այստեղ…

- Տեսե՛ք, պրոֆեսոր,- ասեց Ռինալդոն,- ես ասում եմ, օրինակ, «կատու»…

- Մյա՛ու,- մլավեց կատուն՝ հայտնվելով վառարանի մոտի աթոռի վրա:

- Հը՛մ,- ասաց պրոֆեսորը,- հը՛մ, հասկանում եմ…

- Տեսնո՞ւմ եք՝ ինչ է կատարվում: Իսկ նրա ծնողներն արտասահման են գնացել: Ի՜նչ ահավոր հիվանդություն է…

- Մի՞թե սա հիվանդություն է,- զարմացավ Ռինալդոն:- Սա շատ հարմար բան է: Ասենք օրինակ, գետնանուշի պաղպաղակ եմ ուզում…

Թրրը՛խկ, ու սեղանին ափսեով գետնանուշի պաղպաղակ հայտնվեց:

- Իմ կարծիքով հրաշալի պաղպաղակ է,- նկատեց պրոֆեսորը,- միայն գալ չկա:

- Գդա՛լ,- ձայն տվեց Ռինալդոն,- մի բաժին պաղպաղակ էլ: Մի հատ էլ գդալ: Իսկ դո՞ւ, հորաքույր, պաղպաղակ չե՞ս ուզում:

Բայց Ռոզա հորաքույրը չպատասխանեց, նա նորից ուշաթափվել էր:

Առաջին ավարտ

Պրոֆեսոր Դե Հրաշագործը հանգիստ կերավ պաղպաղակը և շարունակեց զրույցը:

- Այսպես, ուրեմն,- ասաց նա,- մեր Ռինալդոն, կարևոր չէ թե ինչպես, գուցե հենց հեծանիվից ընկելու հետևանքով, մի հրաշագործ ուժի տեր է դարձել: Նա կարող է ստանալ յուրաքանչյուր իր, բավական է միայն արտասանի նրա անունը:

- Օ՜, երկի՜նք,- բացականչեց սինյորա Ռոզան:

- Մի՛ շտապեք այնտեղ, սինյո՛րա,- շարունակեց պրոֆեսորը: - Հիմա մեզ մոտ երկրի վրա էլ է դրախտ լինելու:

- Այդ ինչպե՞ս:

- Շատ պարզ: Ռինալդոն կասի՝ «միլիարդ», և դուք միլիարդատեր կդառնաք: Կասի՝ «լողավազանով առանձնատուն» և դուք կարող եք ջուրը մտնել: Կասի՝ «ավտոմեքենա և վարորդ», և դուք կարող եք ուղևորել զբոսանքի: Նրա ծնողներն արդեն արտասահմանում աշխատանք փնտրելու կարիք չեն ունենա: Եվ գուցե Ռինալդոն կհիշի նաև իր հին ընկերոջ՝ պրոֆեսորի մասին, և կասի... Սպասի՛ր, սպասի՛ր, ոչինչ չասես... «Շուն», ահա թե ինչ պիտի ասես: Մի գեղեցիկ տաքսա, ոչ շատ ծեր, ոչ էլ շատ ջահել... Նա ինձ ընկեր կդառնա: Գիտե՞ք, տանը մենակ այնքան տխուր է...

- Տաքսա, այսպիսին ու այսպիսի,- իսկույն կրկնեց Ռինալդոն:

Եվ իսկույն հայտնվեց տաքսան, ուրախ հաչեց և, կանգնելով ետևի թաթերի վրա, առջևի թաթերը դրեց պրոֆեսորի ծնկներին: Նրա աչքերում երախտագիտության արցունքներ երևացին:

Երկրորդ ավարտ

Կարճ ասած՝ պրոֆեսոր Դե Հրաշագործը բացատրեց թե ինչ է կատարվել:

- Եվ ես խորհուրդ եմ տալիս, -ավելացրեց նա,- ոչ մեկին ոչ մի բառ: Թե չէ Ռինալդոն կհայտնվի վտանգի մեջ:

- Տե՛ր Աստված, բայց ինչո՞ւ:

- Շատ պարզ է. այն հրաշագործ ուժը, որին հիմա նա տիրապետում է, կարող է անհամար հարստության աղբյուր դառնալ: Եթե այդ մասին իմանան, կարո՞ղ եք պատկերացնել, թե որքան սրիկաներ կուզենան տիրանալ Ռինալդոյին, որ օգտագործեն նրա այդ ուժը:

- Տե՛ր Աստված:

Հորաքույրն ու զարմիկը հայացքներ փոխանակեցին ու լռեցին:

- Վաղը,- ասաց պրոֆեսորը, վեր կենալով,- վաղը կորոշենք՝ ինչ անել:

- Վաղը..

Բայց մինչ այդ պետք է ասեմ, որ այդ պրոֆեսոր Դե Հրաշագործը երկակի կյանքով էր ապրում: Առավոտյան նա պրոֆեսոր էր, թոշակառու, իսկ գիշերները՝ հռչակավոր ավազակախմբի պարագլուխ, որոնք Եվրոպայով մեկ բանկեր էին թալանում:

Դե Հրաշագործը զանգահարեց իր մարդկանց և հրամայեց գողանալ Ռինալդոյին: Եվ ստիպեց նրան այնքան արտասանել «ոսկի» բառը, որ այդ թանկարժեք մետաղը

կբավականացներ կցասայլակով տասը ավտոգնացքի համար: Նա նստեց առաջին ավտոգնացքը, ազդանշան տվեց և գնաց: Եվ դրանից հետո ոչ մեկն այլևս երբեք չտեսավ նրան:

Իսկ խեղճ Ռինալդոն այնքան էր հոգնել այդ չարաբաստիկ «ոսկի» բառը կրկնելուց, որ նույնիսկ խռոպոտեց, և ձայնն էլ կտրվեց: Իսկ երբ նորից կարողացավ խոսել, կախարդանքն ասես չէր էլ եղել: Բայց Ռոզա հորաքրոջը, այնուամենայնիվ, ինչ-որ բան բաժին հասավ, երբ վաճառեց բոլոր հեծանիվները, զարթուցիչները, ձմերուկները և այլն:

Երրորդ ավարտ

Պաղպաղակն ուտելուց հետո Ռինալդոն պահանջեց երկրորդ բաժինը: Բայց դա այնքան արագ արեց, որ պաղպաղակով ափսեն չհասցրեց իջնել սեղանին, այլ ընկավ ուղիղ նրա գլխին: Ոչ մի սարսափելի բան չկա, ինքներդ եք հասկանում, եթե խոսքը միայն պաղպաղակի մասին լիներ: Բայց դժբախտությունն այն էր, որ ափսեն ընկավ ուղիղ նրա գլխի այն ուռուցքին, որն առաջացել էր հեծանիվից ընկնելիս: Եվ այդ հարվածը ճակատագրական եղավ: Այդ պահից սկսած Ռինալդոն իզուր էր տարբեր առարկաներ թվարկում, այլևս ոչինչ չէր հայտնվում. ո՛չ ավտոմեքենա, ո՛չ էլ անգամ խաշած կարտոֆիլ:

ՀՈՎՎԻ ՄԱՏԱՆԻՆ

Հիմա կպատմեմ մի հովվի մասին, որն իր նախիրն արածեցնում էր Հռոմից ոչ հեռու մի հովիտում: Ամեն երեկո, ոչխարները փարախ տանելուց հետո, նա ընթրում էր հաց ու պանրով, պառկում անկյունում փռված ծղոտների վրա ու խորը քուն մտնում: Իսկ առավոտյան, ինչպիսին էլ լիներ եղանակը. շոգ, թե ուժեղ քամի, անձրև, թե ձյուն, նա նորից իր ոչխարների ու շների հետ գնում էր մարգագետինները: Ամիսներ շարունակ նա ապրում էր այդպես, տուն ու տեղից հեռու: Նախանձելի վիճակ չէր:

Եվ ահա մի անգամ երեկոյան, երբ ցանկանում էր քնել իր ծղոտե անկողնում, հանկարծ լսեց, որ ինչ-որ մեկն իրեն է կանչում:

- Հովի՛վ, ա՛յ հովիվ:

-Ո՞վ է:

- Ընկերներ են, հովի՛վ, ընկերներ:

- Ճիշտն ասած ես այնքան էլ շատ ընկերներ չունեմ: Թերևս միայն իմ հավատարիմ շունը: Ո՞վ եք և ի՞նչ եք ուզում:

- Ճամփորդ եմ: Ամբողջ օրը քայլել եմ, վաղը նույնպես երկար ճանապարհ ունեմ անցնելու: Գնացքի տոմսի համար փող չունեմ, սոված եմ … մտածեցի՝ գուցե դու…

- Նե՛րս մտեք, նստե՛ք: Ունեցածս միայն հաց ու պանիր է: Թե խմել ուզենաք՝ ահա կաթ կա: Եթե ձեռք է տալիս, խնդրե՛մ:

- Շնորհակալ եմ, դու շատ բարի ես: Ի՞նչ համեղ պանիր է: Ի՞նքդ ես սարքել:

- Իհարկե ինքս: Իսկ հացը քարթու է: Վաղն են թարմ հացը բերելու: Եթե այսօր արդեն վաղը լիներ …

- Մի՛ անհանգստացի՛ր: Հացն էլ լավն է: Երբ ուտել ես ուզում, ավելի լավ է այսօր չոր հաց ուտես, քան վաղը՝ թարմ:

-Տեսնում եմ, ստամոքսի հարցերից լավ եք գլուխ հանում…

Ճամփորդը կերավ, կաթը խմեց: Հովիվը տեղ տվեց նրան իր ծղոտի վրա, որ նա կարողանա հանգստանալ: Առավոտյան նրանք արևի առաջին շողերի հետ արթնացան:

- Շնորհակալ եմ քեզանից, հովի՛վ:

- Ինչի՞ համար, մի կտոր ծղոտի՞:

- Բայց ես ավելի լավ քնեցի, քան թագավորական մահճակալին:

- Տեսնում եմ, քնի հարցերից էլ եք լավ գլուխ հանում…

- Ես այնքան լավ հանգստացա,- շարունակեց ճամփորդը,- որ ցանկանում եմ քեզ մի նվեր տալ որպես հիշատակ:

- Նվե՞ր: Բայց սա… սա, ախր, մատանի է…

- Այո՛, հասարակ երկաթե մատանի: Հիշատակի համար, ինչպես ասացի: Բայց տե՛ս, չկորցնես հանկարծ:

- Կաշխատեմ չկորցնել:

- Կարող է պետք գալ…

- Դե՛, եթե դուք այդպես եք կարծում...

Ու նրանք բաժանվեցին, գնացին տարբեր ուղղություններով: Հովիվը մատանին գրպանը դրեց և իսկույն էլ մոռացավ դրա մասին: Հենց նույն գիշեր հովվի հյուղակ ներխուժեցին մինչև ատամները զինված երկու ավազակ:

- Հապա մի գառ մորթի՛ր,- հրամայեցին նրանք հովվին5,- և խորովի՛ր :

Նման մարդկանց հետ, պարզ բան է, չես կարող վիճել:

- Եվ տե՛ս, որ աղը տեղը տեղը լինի, ո՛չ շատ, ո՛չ քիչ,- պահանջեցին նրանք:

Հովիվը ջանաց, որ աղը տեղը լինի, և նրանք, փառք Աստծու, ընթրիքից գոհ մնացին: Իսկ այն ավազակը, որը հրամաններ էր տալիս և կարծես թե նրանց պարագլուխն էր, վերջում նույնիսկ ասաց.

- Չգիտեմ որպես հովիվ ինչ արժես, բայց որպես խոհարար՝ կեցցե՛ս:

- Կարողացածիս չափ…

-Ճիշտ է: Դու ի՞նչ կարող էիր անել: Ընթրիք պատրաստել, և դու այն պատրաստեցիր: Իսկ մե՞նք ինչ կարող էինք անել: Ուտել այն, և մենք կերանք: Իսկ մնացածը հետո կլինի:

- Ի՞նչ մնացած, չեմ հասկանում:

- Կիմանաս, հովի՛վ, կիմանաս, քո դժբախտությունն այն է, որ դու տեսել ես մեր դեմքերը:

- Ի՞նչ մի մեծ դժբախտություն է որ,- պատասխանեց հովիվը՝ նկատի ունենալով, որ նրանց տեսքն այնքան էլ այլանդակ չէ:

Բայց ավազակը բացատրեց, որ սխալվում է:

- Բանն այն է, թանկագի՛նս, որ դու, գյուղ վերադառնալով, անպայման կպատմես մեր մասին, և այդ ժամանակ ամեն ինչ շուռ կգա, այնպես չէ՞: Դու կարող ես ոստիկաններին էլ պատմել մեր մասին, իբր՝ մեկը ծեր էր, ծուռտիկ, իսկ մյուսը երիտասրդ էր և քթին էլ գորտնուկ ուներ:

- Բայց նրա քթին ոչ մի գորտնուկ էլ չկա:

- Ես օրինակի համար ասացի: Բանն այն է, որ դու հիմա մեզ համար վտանգավոր ես: Բայց մի՛ վախեցիր, մենք քեզ համար լավ գերեզման կփորենք և վրան էլ ծաղիկներ կտնկենք:

- Գերեզմա՞ն: Էդ ի՞նչ եք որոշել:

-Ի՞նչ ես կարծում, մի՞թե մենք քեզ կենդանի-կենդանի գերեզման կդնենք:

- Ուզում եք սպանե՞լ ինձ:

- Ուշ ես հասկանում, հովիվ: Ստիպված ենք սպանել քեզ: Բայց դա դժվար գործ չէ: Մեռնելն ավելի հեշտ է, քան աշխատելը: Չէ՞ որ… Հե՛յ, հովի՛վ, լսի՛ր… էս ո՞ւր կորար: Հովի՛վ... Դե՛, բարեկամս, դու նրան այն կողմում փնտրիր, իսկ ես՝ այստեղ: Հովի՛վ, դո՛ւրս արի, մենք կատակում էինք: Ոչ մեկն էլ մտադիր չի քեզ սպանել: Դե՛, հերիք է , պահմտոցի խաղաս.... Հովի՛վ:

Իսկ ի՞նչ էր տեղի ունեցել: Հովիվը, լսելով ավազակների սպառնալիքները, ձեռքը մտցրեց գրպանը, պատահաբար կպավ երկաթյա մատանուն և իսկույն անտեսանելի դարձավ: Նա մնացել էր այնտեղ, որտեղ նստած էր՝ կրակի մոտ: Բայց ավազակները նրան չէին տեսնում: Նրանք ձայն էին տալիս հովվին, փնտրում էին փարախում՝ զենքերը պատրաստ պահած, որ

գտնելուն պես սպանեն, բայց չէին գտնում: Իսկ հովիվը վախենալով, որ իրեն կգտնեն, նստել էր անշարժ ու շունչը պահած:

Առաջին ավարտ

Վերջապես ավազակները հոգնեցին հովվին փնտրելուց և որոշեցին հեռանալ դեպի լեռները, որտեղ գաղտնի ապաստարան ունեին: Իսկ հովիվը հոտը թողեց շան հսկողության տակ, գիտեր, որ նա վստահելի պահապան է, և գնաց նրանց հետևից՝ աշխատելով չաղմկել: Պատահում էր որ նա ոտքը դնում էր չոր ճյուղի վրա, կամ ոտքի տակից քար էր դուրս պրծնում, ավազակներն իսկույն կանգ էին առնում, անհանգիստ նայում շուրջը, բայց ոչինչ չտեսնելով՝ հանգստացած շունչ էին քաշում և շարունակում քայլել:

- Տարօրինակ է,- վերջապես ասաց պարագլուխը,- ինձ անընդհատ թվում է, որ ինչ որ մեկը գալիս է մեր հետևից:

Մյուսը գլուխը թափահարեց իբրև համաձայնության նշան:

- Բայց ոչ ոք չկա,- շարունակեց պարագլուխը:

Մյուս ավազակը դարձյալ համաձայնեց: Նա, որպես կանոն, երբեք չէր հակաճառում ավազակապետին:

Երկար գնաց հովիվը նրանց հետևից անտառներով ու սարերով, մինչև հասան քարայր, որտեղ նրանց սպասում էին մնացած ավազակները: Այստեղ նա, ականջ դնելով նրանց զրույցներին, իմացավ, որ ավազակները մտադիր են հարձակվել ինչ որ գնացքի վրա և թալանել ուղևորներին:

Շուտով բոլոր ավազակները լավ զինվեցին և գնացին: Մենակ մնալով՝ հովիվն ուսումնասիրեց քարանձավը, խուզարկեց բոլոր անկյունները, նայեց մեկ այս, մեկ այն քարի տակ, փնտրեց ծղոտների տակ և վերջապես գտավ այն փոսը, որտեղ ավազակները թալանած գանձերն էին պահում՝ գայլի մորթու մեջ փաթաթված. շատ ոսկի, թանկարժեք իրեր և փող:

Հովիվը դրանք լցրեց իր պայուսակը, հետո գետնին փռեց թիկնոցը, մեջը լցրեց այնքան բարիք, որքան կարող էր տանել: Այնպես որ ետ դառնալիս նա կռացել էր հարստության ծանրության տակ: Բայց չկարծեք, թե նա վերադարձավ փարախ՝ իր ոչխարների ու շան մոտ:

Հիմա նրա ինչի՞ն էր պետք այդ հոտը: Եվ ինչո՞ւ պիտի մենակ ապրեր, եթե այնքան էր հարստացել, որ ցանկության դեպքում կարող էր այդպիսի հարյուր հոտ գնել: Հովիվը ճանապարհ ընկավ դեպի քաղաք: Եվ ճանապարհին մի ուրախ երգ էր երգում. «Ա՜խ, Հռոմ, սքանչելի Հռոմ, քեզ մոտ է գալիս թագավորից հարուստ հովիվը, տրա՜-լյա՜-լյա՜, տրա՜-լյա՜-լյա՜, թագավորից հարուստ հովիվը»:

Երկրորդ ավարտ

Երբ ավազակները, փնտրելուց հոգնելով, հեռացան, հովիվը համբուրեց մատանին, որը փրկել էր իր կյանքը, և հենց այդ պահին, այդ համբույրի շնորհիվ նորից տեսանելի դարձավ: Նա հասկացավ այդ, քանի որ շունը, որ մինչ այդ հանգիստ քնած էր, տեղից վեր թռավ և սկսեց ուրախ հաչել:

- Կեցցե՛ս,- ասաց հովիվը,- դու նույնպես հասկանում ես, որ մեր բախտը բերեց: Այո՛, բարեկամս, արի վերջ տանք այս մռայլ կյանքին: Հրաժեշտ տանք այս ձանձրալի ոչխարներին: Գիտե՞ս մտքովս ինչ անցավ, կդառնամ դեդեկտիվ, մասնավոր խուզարկու: Ախր այս մատանու օգնությամբ ես հեշտությամբ կարող եմ հետաքննել ցանկացած, նույնիսկ ամենախճճված գործերը: Կարող եմ մտնել տները, բռնել սրիկաներին, ապացույցներ հավաքել, հանցանշաններ որոնել, նկարել և այդպես շարունակ: Կարճ ասած՝ կբռնեմ բոլոր ամենաճարպիկ ու խորամանկ գողերին, ամենահմուտ դրամանենգներին, ամենահանդուգն կողոպտիչներին: Կդառնամ ամենահայտնին ամբողջ Իտալիայում ու Շվեցարիայում, գուցե նաև ամբողջ Աֆրիկայում:

Հենց այդպես էլ եղավ, մի քանի ամիս անց Եվրոպայով մեկ թերթերը գրում էին միայն «Խուզարկուների արքայի» քաջագործությունների մասին, որը, սակայն, նախընտրում էր ուրիշ մականուն՝ «Դոկտոր Անտեսանելիուս»:

Երրորդ ավարտ

Հովիվը շատ ուրախացավ, որ բախտն այդպես բերեց:

- Ի՜նչ հիանալի մատանի է,- ասաց նա,- թող երջանիկ լինի նա, ով տվել է ինձ այս մատանին:

Բայց հիմա էլ նա հանգիստը կորցրեց, քանի որ վախենում էր կորցնել կախարդական մատանին:

- Գրպանումս,- մտածում էր նա,- չի կարելի պահել, թաշկինակ հանելիս կարող եմ պատահաբար ցած գցել: Հենց ընկավ, ցտեսություն, էլ չես գտնի: Մատին նույնպես չարժե դնել: Ավելի լավ կլինի թաքցնեմ, թե չէ ինչ որ մեկը կցանկանա գողանալ: Բայց որտե՞ղ: Ահա՛, այստեղ, այս ծառի մեջ մի լավ փչակ կա...

Այդպես էլ արեց: Մատանին թաքցրեց ծառի փչակում: Իսկ հետո ոչխարները արոտավայր տարավ ու սկսեց մտածել, թե ինչպես օգտագործի կախարդական մատանին:: Նա շատ հետաքրքիր բաներ մտածեց, բայց դրանցից ոչ մեկին վիճակված չէր իրականանալ: Քանի դեռ հովիվը ոչխարներն էր արածացնում, կաչաղակը տեսավ մատանին, ճանկեց այն ու տարավ իր

բույնը: Իսկ թե որտեղ է գտնվում կաչաղակի բույնը, ոչ ոք չգիտի: Այնպես որ, հովիվն այժմ այլևս չէր կարող անտեսանելի դառնալ, իսկ մատանին ընդմիշտ կորավ:

ՏԱՔՍԻ՝ ԴԵՊԻ ԱՍՏՂԵՐԸ

Իսկ այս պատմությունը տեղի է ունեցել միլանցի տաքսու վարորդ Պեպինո Կոմպանիոնիի հետ: Մի անգամ երեկոյան նա ավտոմեքենան քշում էր Ջենովայի դարպասների ուղղությամբ՝ պատրաստվելով այն կայանել ավտոտնակում: Նրա տրամադրությունն այնքան էլ լավ չէր: Այդ օրը քիչ էր քշել, և հանդիպած ուղևորներն էլ տհաճ ու փնփնթան մարդիկ էին: Հատկապես բարկացրել էր մի սինյորա: Ամբողջ քառասունութ րոպե ստիպել էր սպասել խանութի մոտ,այնպես որ նույնիսկ ստիպված էր եղել տուգանք վճարել: Իսկ հիմա տուն վերադառնալիս Պեպինոն, այնուամենայնիվ, նայում էր անցորդներին. պետք չի՞ գա, արդյոք, ինչ-որ մեկին իր ավտոմեքենան: Ահա, ինչ-որ սինյոր ձեռքով է անում:

- Տաքսի՛, Տաքսի՛:

- Խնդրեմ,- նույն պահին Պեպինոն արգելակեց մեքենան:- Միայն նկատի ունեցեք, որ արդեն ավարտում եմ աշխատանքս, դեպի Ջենովայի դարպասներ եմ գնում: Դուք է՞լ եք այնտեղ գնում:

- Գնացե՛ք ուր ուզում եք, միայն՝ արագ:

- Ո՛չ, ի՞նչ եք ասում, կգնանք այնտեղ, որտեղ կասեք, ինչի՞ մասին է խոսքը: Լավ կլիներ, իհարկե, որ շատ հեռու չլիներ:

- Գնացե՛ք, արագ և անընդհատ ուղիղ:

- Լա՛վ, սինյո՛ր:

Պեպինոն սեղմեց արագացման ոտնակը, և ավտոմեքենան սլացավ: Հետահայաց հայելու մեջ Պեպինոն աչքի պոչով հետևում էր ուղևորին: Ա՛յ քեզ տիպ: «Գնացե՛ք, որտեղ ցանկանում եք: Միայն թե ուղիղ գնացեք»: Իսկ դեմքը չի երևում: Բարձրացրել է վերարկուի օձիքը և գլխարկը քաշել աչքերին: «Այ քեզ բան,- մտածեց Պեպինոն,- Բա որ հանկարծ գող լինի: Պետք է տեսնել, հո մեզ ոչ ոք չի՞ հետապնդում: Ո՛չ ճամպրուկ ունի, ո՛չ պայուսակ… Միայն ինչ-որ փոքր փաթեթ կա ձեռքին: Ահա, բաց է անում այն… Հետաքրիր է, ի՞նչ է: Ի՞նչ կարող է լինել: Շոկոլադի սալի՞կ: Ճիշտ որ: Միայն թե այն, չգիտես ինչու, երկնագույն է: Ո՞վ է տեսել երկնագույն շոկոլադ: Բայց նա ուտում է այդ շոկոլադը, տե՛ս, բերանն է դնում: Ասենք՝ ճաշակին ընկեր չկա: Համ էլ արդեն համարյա տեղ ենք հասնում...»

– Հե՜յ, լսե՛ք, էս ի՞նչ է, ախր ի՞նչ է կատարվում, ի՞նչ եք անում, ի՞նչ եք մտածել։

– Մի՛ անհանգստացեք,– հանգիստ ասաց ուղևորը,– և գնացեք միայն ու միայն առաջ

– Ի՞նչ ուղիղ։ Հիմա արդեն գլուխ էլ չես հանի, թե որն է ուղիղը կամ ծուռը… Մենք ախր երկնքով ենք թռչում։ Օգնեցե՛ք, փրկե՛ք։

Պեպինոն մեքենան կտրուկ աջ շրջեց, որ չբախվի երկնաքերերերից մեկի տանիքին տնկված հեռուստատեսային ալեհավաքին, և նորից վրդովվեց.

– Էս ի՞նչ եք արել իմ ավտոմեքենային։ Այդ ինչ սատանություն է։

– Մի՛ անհանգստացեք, ոչինչ էլ չի պատահի։

– Հա, իհարկե, ոչինչ չի լինի, տաքսին թռչում է երկնքում, իսկ դուք հավաստիացնում եք, որ ոչինչ չկա։ Կարելի է կարծել, թե սա ամենասովորական բանն է։ Վա՜յ, տեսե՛ք, մենք արդեն Միլանի տաճարից վեր բարձրացանք։ Հիմա կընկնենք ուղիղ աշտարակաձողի վրա, ու բաններս բուրդ կլինի։ Բայց կարելի՞ է իմանալ, թե այս ինչ հիմար կատակներ են։

– Դուք ինքներդ էլ արդեն պիտի հասկանայիք, որ սա ամենևին էլ կատակ չէ,- ասաց ուղևորը, մենք թռչում ենք և ինչո՞վ։

– Ինչպե՞ս թե ինչով։ Իմ տաքսին հրթիռ չի։

– Համարեք, որ հիմա սա արդեն տիեզերական տաքսի է։

– Ի՞նչ տիեզերական տաքսի։ Բացի այդ, ես ինքնաթիռ վարելու իրավունք չունեմ։ Եվ ստիպված կլինեմ տուգանք վճարել ձեր պատճառով։ Բայց բացատրե՛ք վերջապես, թե էս ինչպե՞ս ենք թռչում։

– Դա շատ պարզ է, տեսնո՞ւմ եք այս երկնագույն սալիկը։

– Իհարկե, ես նկատեցի, որ դուք կերաք դրանից։

– Հա, պետք է մի կտոր սրանից ուտել, և այն կաշխատի. Սա հակաձգողական շարժիչ է, որը թույլ է տալիս թռչել լույսի արագությամբ, ու մի մետր էլ ավելի։

– Լավ, այս ամենը շատ լավ է, նույնիսկ՝ հրաշալի։ Միայն թե ես, հարգելի սինյոր, պետք է տուն գնամ։ Ես ապրում եմ Ջենովայի դարպասների մոտ, ոչ թե լուսնի վրա։

– Իսկ մենք Լուսին չենք էլ թռչում։

– Այ թե ինչ, իսկ ո՞ւր ենք թռչում, թույլ տվեք իմանալ։

– Դեպի Այլդեբարան աստղի յոթերորդ մոլորակ։ Ես այնտեղ եմ ապրում։

– Շատ հաճելի է, բայց ես էլ հո երկրի՛ վրա եմ ապրում։

– Լավ, կբացատրեմ։ Ես երկրացի չեմ, ես այլդեբրանցի եմ։ Տեսնո՞ւմ եք։

– Է՞լ ինչ պիտի տեսնեմ։

– Ա՛յ, այստեղ իմ երրորդ աչքն է:

– Գրողը տանի, իսկապես էլ երրորդ աչք կա:

– Իսկ հիմա ձեռքերիս նայեք: Քանի՞ մատ ունեմ:

– Մեկ, երկու, երեք…..վեց, տասներկու…. Տասներկու մա՞տ ունես:

– Տասներկու մատ: Դե հիմա համոզվեցի՞ք: Իսկ Երկիր ես գործուղման էի եկել: Ինձ այստեղ էին ուղարկել տեսնելու, թե ինչպես եք ապրում: Հիմա վերադառնում եմ իմ մոլորակ:

– Հրաշալի է, դուք ազնվորեն կատարում եք ձեր պարտքը: Իսկ ե՞ս: Ե՞ս ինչ պետք է անեմ: Ինչպե՞ս պիտի տուն վերադառնամ:

– Ես ձեզ երկնագույն սալիկից մի կտոր կտամ, ծամեք և մի րոպեից Միլանում կհայտնվեք:

– Էլ ձեր ինչի՞ն էր պետք տաքսին, եթե այդպիսի երկնագույն սալիկ ունեիք:

– Ուզեցի նստած ճանապարհորդել: Այդպիսի բացատրությունը ձեզ գոհացնո՞ւմ է: Տեսե՛ք, արդեն հասնում ենք:

– Ի՞նչ է, այդ գո՞ւնդն է ձեր մոլորակը:

«Այդ գունդը» մի քանի վայրկյանից հսկայական գլոբուս դարձավ, դեպի որը մեծ արագությամբ սլանում էր Պեպինո Կոմպանիոնիի տաքսին:

– Ա՛յ, այնտեղ, ավելի ձախ,- ցույց տվեց ուղևորը,- վայրէջք կատարենք ա՛յ, այն հրապարակում:

– Հետաքրքիր է, ինչ հրապարակի մասին եք խոսում: Ես այստեղ միայն բաց դաշտ եմ տեսնում:

– Իմ մոլորակում դաշտեր չկան:

– Ուրեմն սա կանաչ ներկած հրապարակ է:

– Օ՜ֆ… ավելի ցած, մի քիչ էլ, ա՛յ, այդպես: Ահա և տեղ հասանք:

– Ինչ էի ասում, մի՞թե սա խոտ չէ: Վա՛յ, էս ի՞նչ է:

– Ինչի՞ մասին եք խոսում:

– Տեսե՛ք… Հսկայական հավեր են… նրանք դեպի մեզ են սլանում՝ նետ ու աղեղներով զինված:

– Նե՞տ, աղե՞ղ, հսկայական հավե՞ր… Իմ մոլորակում այդպիսի բաներ չկան:

– Ո՞չ: Այդ դեպքում լսեք, թե ձեզ ինչ կասեմ:

– Պետք չէ, գիտեմ, մենք շեղվել ենք ճանապարհից: Թույլ տվեք մտածեմ…

– Մտածեք, բայց արագ, քանի որ նրանք մոտենում են: Վա՜յ, լսեցի՞ք: Նետի սուլոց էր: Դե՛, սինյոր Այլդեբրա՛ն, արագ կուլ տվեք ձեր շոկոլադը, ու փախչենք այստեղից, քանի որ Պեպինո Կոմպանիոնին ցանկանում է Միլան վերադառնալ ողջ ու առողջ, ոչ թե մեռած: Պա՞րզ է:

Տիեզերական ճանապարհորդը շտապ կծեց խորհրդավոր այն նյութից, որը Պեպինո Կոմպանիոնին երկնագույն շոկոլադ անվանեց:

– Շուտ կուլ տվեք, մի՛ ծամեք, թե չէ չենք հասցնի,- բղավեց տաքսու վարորդը:

Առաջին ավարտ

Տաքսին պոկվեց տեղից և սլացավ առաջ, բայց մի նետ, այնուամենայնիվ, հասցրեց ծակել հետևի անվադողը, որից սուլոցով դուրս եկավ օդը:

– Լսեցի՞ք, անվադողը նստեց,– վշտացած բացականչեց Պեպինոն, Դուք ստիպված եք վճարել դրա համար:

– Կվճարեմ, կվճարեմ –պատասխանեց սինյոր Ալդեբարանը:

– Իսկ հիմա չե՞ք սխալվում: Թե՞ նորից ինչ-որ վայրի մոլորակ կհասնենք:

Ցավոք սրտի շտապողականության մեջ ուղևորը չկարողացավ ճիշտ չափել շոկոլադի անհրաժեշտ չափաքանակը, և տիեզերական տաքսին դեռ երկար ժամանակ այսուայն կողմ էր թռչում տարբեր գալակտիկաների միջև, մինչև հասավ Այլդեբրան մոլորակ:

Իսկ երբ վերջապես վայրէջք կատարեցին, պարզվեց, որ այն այնքա՛ն գեղեցիկ էր, բնակիչներն էլ այնքա՛ն բարի էին, իսկ նրանց երկնագույն ռագուն (տեղական ճաշատեսակը), այնքա՛ն համեղ էր, որ Պեպինո Կոմպանիոնին արդեն ամենևին էլ չէր շտապում վերադառնալ Միլան: Ծանոթանալով այդ մոլորակի տարբեր հրաշքների հետ, նա այստեղ մնաց ամբողջ երկու շաբաթ և այդ ընթացքում շատ գրառումներ կատարեց: Իսկ երբ վերադարձավ Երկիր, գիրք գրեց, որի մեջ երկու հարյուր լուսանկար դրեց: Գիրքը թարգմանվեց իննսունյոթ լեզուներով, իսկ հեղինակին Նոբելյան մրցանակ շնորհեցին: Այսօր Պեպինո Կոմպանիոնին ամենահայտնի տաքսիստ-գրողը և արեգակնային համակարգի հետազոտողն է:

Երկրորդ ավարտ

Տաքսին վեր խոյացավ և սլացավ իրենց հետապնդող նետերից շատ ավելի արագ, այնպես որ շատ շուտով երկու ճամփորդներն էլ վտանգից հեռու էին:

– Ինձ թվում է,- ասաց Պեպինոն,- Դուք նույնպես վատ գիտեք տեեզերական ճանապարհները, այնպես չէ՞:

– Ձեր գործը ավտոմեքենան վարելն է- մոթմոթաց տիեզերական ճամփորդը: Մնացածի մասին ես կհոգամ:

– Հրաշալի է, միայն աշխատեք սխալները չկրկնել:

Այդպես լույսի արագությամբ (պլյուս մեկ մետր) նրանք սլացան ևս մի քանի րոպե, անցնելով անհավանական տիեզերական տարածություններ, և վերջապես հայտնվեցին… Միլանում՝ տաճարի մոտի հրապարակում:

– Գրողը տանի, ես կրկին սխալվեցի,- բացականչեց սինյոր Այլդեբրանը, իր բոլոր քսանչորս մատներով գլուխը բռնելով:- Գնացի՛նք:

– Դե չէ՛, շատ՛ շնորհակալ եմ,– բացականչեց տաքսիստը և դուրս եկավ ավտոմեքենայից:– Ես ինձ այստեղ էլ վատ չեմ զգում: Դուք կարող եք, եթե իհարկե ձեր խիղճը թույլ կտա, խլել ինձանից ավտոմեքենան, բայց նկատի ունեցեք, որ այս չորս անիվներն են կերակրում իմ ընտանիքը:

– Դե լավ,– մռթմռթաց ուղևորը,– ոտքով կգնամ…

Նա դուրս եկավ ավտոմեքենայից, մի կտոր կծեց իր «երկնագույն շոկոլադից» և անհետացավ: Իսկ Պեպինո Կոմպանիոնին տուն գնալուց առաջ մտավ սրճարան և մի գավաթ թունդ սուրճ խմեց, որպեսզի վախը մի քիչ անցնի:

Երրորդ ավարտ

Շա՛տ երկար կտևի վերջաբանի այս տարբերակը պատմելը, այդ պատճառով էլ միայն բուն իմաստը կասեմ: Տաքսու վարորդն ու իր ուղևորը Հսկայական Հավերին գերի ընկան: Բանտի փոխարեն նրանց ձվի մեջ էին փակել, բայց շուտով նրանք փախան իրենց բանտի հետ միասին: Սենյոր Ալդեբարանը ուղևորվեց դեպի իր մոլորակ, իսկ Պեպինոն թռչող ձվով և «երկնագույն շոկոլադի» պաշարով վերադարձավ Միլան: Այստեղ նա Երկիր-Մարս-Սատուրն և հետադարձ տիեզերական ճանապարհորդությունների գործակալություն հիմնեց: Կառուցեց նաև թռչնաբուծական ֆաբրիկա, որտեղ ածան հավեր են բուծում: Ձվերն, իհարկե շատ խոշոր չեն, բայց միանգամայն հարմար են ձվածեղի համար:

ԻՆՉՊԵՍ ԷՐ ՏԻՆՈՆ ՀԻՎԱՆԴԱՑԵԼ

Միլանում ապրում էր մի հաշվապահ: Նրա անունը Բյանկի էր, և նա բանկում էր աշխատում: Նրա կնոջը անունը տիկին Ռոզա էր: Նրանք մի փոքրիկ տղա ունեին, շատ փոքր՝ դեռ ծծկեր երեխա: Նա գեղեցիկ, հրաշալի տղա էր, սև մազերով, խելացի, աշխույժ աչքերով, մի խոսքով՝ հիանալի երեխա: Նրա անունը Ջովանի-Բատիստա էր, բայց այդ անունը շատ երկար էր թվում նման փոքրիկ տղայի համար, և ծնողները նրան պարզապես Տինո էին կոչում:

Սկզբում Տինոն նորմալ էր մեծանում, ինչպես բոլոր երեխաները: Տինոն դարձավ նախ մեկ տարեկան, հետո՝ երկու, իսկ, այ, երեք տարեկանում նրա մոտ հանկարծ միանգամայն անսովոր հիվանդության նախանշաններ հայտնվեցին:

Մի անգամ տիկին Ռոզան, վերադառնալով խանութից, տեսավ որ, որ տղան գորգին նստած խաղում է ռետինե խաղալիքով: Ու հանկարծ տիկին Ռոզայի սիրտը ճմլվեց… Տինոն… իր Տինոն հանկարծ շատ փոքրիկ թվաց, շատ ավելի փոքր, քան նախքան իր խանութ գնալն էր… Նա նետվեց դեպի երեխան, գրկեց նրան, անունը տվեց, սկսեց շոյել… Փա՜ռք Աստծո, դա նրան միայն թվացել էր: Տինոն նույնքան մեծ ու նույնքան ծանր էր, ինչպես առաջ և առաջվա պես էլ ուրախ խաղում էր ռետինե ձիուկով:

Մի ուրիշ անգամ հաշվապահ Բյանկին ու տիկին Ռոզան մեկ բոպեով մենակ թողոցին Տինոյին հյուրասենյակում, իսկ երբ ետ եկան, սարսափելի զարմացան .

- Տի՞նո…

- Տի՜նո…

Տղան նայեց նրանց ու ժպտաց… Տիկին Ռոզան թեթևացած շունչ քաշեց.

- Աստվա՜ծ իմ, ինչպես վախեցա:

- Ես էլ:

- Ինձ թվաց, որ նա հանկարծ …կարծես փոքրացել էր, դարձել նիհար ու շատ փոքրիկ:

- Ինձ էլ սկզբում թվաց, թե նա տիկնիկի չափ փոքրացել է:

- Բայց սա ի՞նչ էր:

- Տարօրինակ է, որ մենք երկուսով…

- Գիտե՞ս, ախր այդպես մի անգամ արդեն եղել է: Ես վերադարձել էի խանութից, իսկ նա նստած էր գորգին՝ փոքրիկ-փոքրիկ, միանգամայն ճստլիկ…

Այդ օրը հաշվապահ Բյանկին ու տիկին Ռոզան քիչ թե շատ հանգստացան: Բայց հետո նման պատմություն էլի մի քանի անգամ կրկնվեց: Այդ ժամանակ արդեն, բնականաբար, նրանք որոշեցին դիմել բժշկի: Բժիշկը զննեց Տինոյին. չափեց բոյը, քաշը, պատվիրեց, որ ասի՝ «երեսուներեք», խնդրեց, որ հազա, լսեց թոքերը, նայեց կոկորդը՝ փոքրիկ գդալը մցնելով նրա բերանը, վերջապես ասաց.

- Կարծում եմ՝ հրաշալի երեխա է: Ամրակազմ, առողջ, լիովին առողջ:

- Բայց բժի՛շկ… Այդ դեպքում ինչպես հասկանալ…

- Ինչպես հասկանա՞լ… Եկեք փորձ անենք: Սենյակից դուրս գանք՝ մեկ բոպե թողնելով նրան մենակ, ու տեսնենք, թե ինչ կլինի:

Այդպես էլ արեցին. դուրս եկան սենյակից, կանգնեցին դռան հետևում, ականջ դրեցին և… ոչինչ չլսեցին: Տինոն ո՛չ լացում էր, ո՛չ էլ շարժվում, կարծես այնտեղ չէր: Վերադառնալով սենյակ տեսան, որ Տինոն նորից փոքրացել է, դարձել է շատ փոքր, պարզապես ճստլիկ: Բայց միայն մի քանի ակնթարթ: Հայրիկին, մայրիկին ու բժշկին տեսնելուն պես նա նորից դարձավ առաջվանը՝ հիանալի կարմրաթուշ, ամրակազմ տղա, որն իր տարիքի համեմատ շատ ավելի խոշոր էր:

Այդ ժամանակ բժիշկն ասաց.

- Հասկացա: Ես հասկացա պատճառը: Դա սոսկ հիվանդություն չէ: Դա հազվագյուտ երևույթ է: Նման բան նկատել են միայն մի անգամ 100 տարի առաջ Ամերիկայում:

- Ի՞նչ է դա,- հուզվեց հաշվապահ Բյանկին:

- Դա վտանգավո՞ր է,- անհանգստացավ տիկին Ռոզան:

- Ո՛չ, վտանգավոր չէ: Կարծում եմ, որ ոչ: Դա… ինչպես ասեմ …

- Բայց ի՞նչ է դա:

- Ասացե՛ք, բժի՛շկ, մի՛ տանջեք մեզ:

- Հանգստացե՛ք, պարո՛ն ,- պատասխանեց բժիշկը,- անհանգստանալու համար ոչ մի հիմք չկա: Պազապես ձեր երեխան բոլորովին չի կարողանում մենակ մնալ: Երբ մենակ է մնում, սկսում է փոքրանալ: Սա է ամբողջը: Նրան անպայման պետք է ինչ-որ մեկի հետ շփվել, հասկանալի՞ է:

- Բայց մենք նրան երբեք մենակ չենք թողնում:

- Համարյա երբեք…

- Հասկանում եմ, իհարկե: Բայց խոսքը դրա մասին չէ: Երեխան պիտի իր տարեկիցների հետ խաղա, հասկանո՞ւմ եք: Եղբոր, ընկերների, հարևանի երեխաների հետ: Թերևս նրան պետք է տանել մանկապարտեզ, որ նա խաղընկերներ ունենա: Դուք ինձ հասկացա՞ք:

- Այո՛, բժիշկ:

- Շնորհակալ ենք, բժի՛շկ: Իսկ հիվանդությունը երկա՞ր է տևելու:

- Ինչպե՞ս թե երկար:

- Ուզում եմ ասել… Երբ մեծանա, նրան դարձյա՞լ մենակ թողնել չի կարելի: Նա նորի՞ց կսկսի փոքրանալ:

- Հիմա դժվար է ասել,- պատասխանեց բժիշկը,- բայց եթե նույնիսկ այդպես լինի, գուցե դա այնքա՞ն էլ վատ չի, հը՞:

Հաշվապահ Բյանկին ու տիկին Ռոզան տուն վերադարձան փոքրիկ Տինոյի հետ, որը հիմա արդեն այնքան էլ փոքրիկ չէր, և սկսեցին ավելի հոգատար խնամել նրան: Ժամանակի ընթացքում Տինոն եղբայր ունեցավ, ինքն էլ սկսեց մանկապարտեզ հաճախել, հետո՝ դպրոց,

դարձավ բարձրահասակ, առողջ, խելացի և շատ աշխույժ երեխա: Բացի այդ, նա բարի տղա էր, և բոլորը սիրում էին նրան, որովհետև երբեք կռիվ չէր սարքում և միշտ հաշտեցնում էր կռվարարներին: Հետո նա դարձավ երիտասարդ, գնաց համալսարան…

Մի անգամ, երբ նա արդեն 20 տարեկան էր, իր սենյակում նստած պարապում էր: Այդ անգամ նա մենակ էր, թեև սովորաբար նրա մոտ միշտ հավաքվում էին ընկերներն ու բարեկամները: Հաշվապահ Բյանկին ու տիկին Ռոզան հանկարծ միաժամանակ նույն բանի մասին մտածեցին.

- Գնա՞նք տեսնենք:

- Չգիտեմ… այսքան տարի է անցել …

-Արի տեսնենք… Հետաքրքիր է, մի՞թե մինչ հիմա…

Նրանք միասին մոտեցան դռանը և մեկը մյուսի հետևից նայեցին բանալու անցքից…

Առաջին ավարտ

… Նայելով բանալու անցքից՝ Բյանկի ամուսինները գրկեցին իրար ու արտասվեցին :

- Խե՜ղճ Տինո:

-Մեր խե՜ղճ տղա:

- Նա այդպես էլ չբուժվեց, ու երբեք էլ չի բուժվի…

Մենակ մնալով՝ Տինոն իսկապես փոքրացել էր, դարձել 3-4 տարեկան երեխայի հասակի: Դեմքը մնացել էր նույնը, տաբատը երկար էր վրան, առաջվա կանաչ մայկան էր հագը, բայց ինքը կարծես թզուկ լիներ:

- Դուրս է գալիս, որ առաջվա նման նրան չենք կարող մեկ րոպե անգամ մենակ թողնել,- հոգոց հանեց հաշվապահ Բյանկին:

- Գուցե մե՞նք ենք մեղավոր, գուցե քի՞չ ենք վիտամիններ տվել նրան,- հեծկլտաց տիկին Ռոզան:

- Ի՞նչ անենք,- հարցրեցին նրանք՝ զանգահարելով բժշկին:

- Միայն մի՛ հուսահատվեք,- պատասխանեց բժիշկը,- մանավանդ, որ հրաշալի ելք կա այս իրավիճակից: Ամուսնացրեք նրան մի լավ աղջկա հետ, նրանք երեխաներ կունենան: Իսկ ա՛յ երեխաները նրան ոչ մի րոպե մենակ չեն թողնի: Ու նրա հիվանդությունն այնպես կանցնի, կարծես չի էլ եղել:

- Իհա՛րկե, - ուրախ բացականչեց հաշվապահ Բյակին:

- Ճիշտ որ,- ուրախացավ տիկին Ռոզան,- ինչպե՞ս մենք ինքներս գլխի չէինք ընկել:

Երկրորդ ավարտ

… Նայելով բանալու անցքից՝ Բյանկի ամուսինները գրկեցին իրար ու արտասվեցին ուրախությունից :

- Ինչպիսի՜ երջանկություն:

- Ի՜նչ լավ է:

- Նա չի՜ փոքրանում:

- Նա առո՛ղջ է:

Տինոն իսկապես չէր փոքրացել ոչ մի սանտիմետր, նույնիսկ ոչ մի միլիմետր և շարունակում էր հանգիստ պարապել՝ չկասկածելով անգամ, թե ինչ հուզմունք են ապրում իր ծնողները:

Նա արդեն շատ ընկերներ ուներ, շատ հետաքրիր գործեր և զբաղմունքներ, որոնք կապում էին նրան կյանքին: Նա շատ ծրագրեր, շատ հույսեր ուներ, իսկ ավելի շատ՝ աշխատելու ցանկություն: Իսկ դրանք այնպիսի բաներ են, որոնք միշտ մարդու հետ են, նույնիսկ եթե նա բոլորովին մենակ նստած է սենյակում և կողքին ոչ ոք չկա: Այնպես որ մարդ արարածն իրականում երբեք էլ մենակ չի մնում:

Երրորդ ավարտ

… Նայելով բանալու անցքից՝ հաշվապահ Բյանկին ու տիկին Ռոզան զարմացած նայեցին միմյանց, չկարողանալով ոչ մի բառ արտաբերել, և մի ամբողջ րոպե այդպես քարացած մնացին:

- Ի՞նչ է սա:

- Ինչպե՞ս սա հասկանալ:

- Ռոզա՛, բարի եղիր, մի գավաթ թունդ սուրճ պատրաստիր ինձ համար, խնդրում եմ:

- Այո՛, այո՛, ինձ նույնպես մի գավաթ սուրճ է պետք… Բայց ի՞նչ է սա նշանակում:

- Չլսված բան է:

Բայց ի՞նչ էին նրանք տեսել սենյակում:

Նրանք տեսան, որ իրենց որդի Տինոն երկու անգամ ավել մեծ է դարձել: Նա կռացել էր, որ գլուխը չխփի առաստաղին: Ոտքերն ու ձեռքերը երկարել էին ընձուղտի ոտքերի նման: Բայց նա, կարծես թե չէր էլ նկատում դա: Նա շարունակում էր պարապել և ինչ-որ բան էր գրում մատիտով, որը նրա հսկա ձեռքերի մեջ ատամ մաքրելու փայտիկի չափ փոքր էր թվում:

- Հիմա արդեն նա ուրիշ հիվանդություն ունի,- հոգոց հանեց հաշվապահ Բյանկին՝ փչելով գավաթի տաք սուրճի վրա:

- Ու դարձյալ շատ հազվադեպ հիվանդություն,- եզրակացրեց տիկին Ռոզան:

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ երեկոյան սինյոր Վերուչին աշխատանքից վերադառնում էր տուն: Նա ծառայող էր և աշխատում էր, եթե չեմ սխալվում, փոստատանը: Սակայն նա կարող էր նաև ատամնաբույժ լինել կամ՝ ինժեներ: Մենք կարող ենք նրա համար ցանկացած մասնագիտություն պատկերացնել: Կարո՞ղ ենք, օրինակ, նրան բեղերով ու մորուքով պատկերացնել: Հրաշալի է, թող ուրեմն բեղերով և մորուքով լինի: Իսկ հիմա փորձենք երևակայել, թե ինչպես է նա հագնվում, ինչպիսին է նրա քայլվածքը, ինչպես է խոսում: Հիմա նա քթի տակ ինքն իրեն ինչ-որ բան է խոսում: Եկեք թաքուն լսենք:

- Տո՛ւն, վերջապես տուն եմ գնում: «Հարազատ տուն, երջանիկ կացարան, համեստ, խաղաղ, թանկագին...» Էլ չե՛մ կարող: Այնքա՛ն եմ հոգնել: Ամբողջ օրը վազվզոց է, շուրջբոլորն այնքան ժողովուրդ կա, փողոցում՝ ամբոխ, մեքենաների անընդհատ հոսք... Հիմա կգնամ, կփակեմ դուռը, տիկնայք և պարոնայք, և՝ հաջողություն բոլորիդ: Այլևս ձեզ չեմ տեսնի: Տանս շեմից ներս կմտնեմ և ամբողջ աշխարհը կմնա դռներից այն կողմ... Էդ մեկը որ դեռևս կարող եմ անել... Ահա այսպես: Վերջապես ես մենակ եմ... Հրաշալի է... Նախ և առաջ՝ կորչի՛ այս փողկապը... Հիմա կոշիկները դեն կնետենք... Կմիացնենք հեռուստացույցը... Հետո կնստենք բազկաթոռին, ոտքերը կդնենք փոքրիկ աթոռակին, ծխախոտը կվերցնենք... Վե՛րջ, հիմա ինձ լավ եմ զգում, իսկ որ ամենակարևորն է՝ վերջապե՛ս մենակ եմ... Ես ... Իսկ դո՞ւք ով եք... Որտեղի՞ց հայտնվեցիք:

Սինյոր Վերուչիին մեղմ ժպտում էր մի սիրունիկ սինյորինա: Մի վայրկյան առաջ նա դեռևս սենյակում չէր, իսկ հիմա նստել էր իր դիմաց՝ բազմոցին, և ժպտալով ուղղում էր հուլունքները:

- Չե՞ք ճանաչում: Ես հաղորդավարուհին եմ: Դուք միացրիք հեռուստացույցը և ահա ես այստեղ եմ: Հիմա ձեզ վերջին նորությունները կհաղորդեմ:

Սինյոր Վերուչին զայրացավ.

- Ամոթ ունեցեք: Դուք ոչ թե հեռուստացույցի էկրանին եք, ինչպես որ պիտի լիներ, այլ իմ տանը, և նստել եք իմ բազմոցին:

- Բայց, ախր, ի՞նչ տարբերություն: Երբ ես հեռուստացույցի էկրանին եմ լինում, միևնույնն է, դարձյալ ձեր տանն եմ, և ձեզ հետ եմ խոսում...

- Բայց ինչպե՞ս այստեղ հայտնվեցիք: Ես նույնիսկ չնկատեցի... Դուք, ի՞նչ է, ինձանից թաքո՞ւն տուն մտաք:

- Չարժե դրա վրա գլուխ կոտրել... Դե ինչ, ձեզ հետաքրքրո՞ւմ են վերջին նորությունները:

Սինյոր Վերուչին համակերպվեց.

- Դա, իհարկե, այնքան էլ համոզիչ չէ... բայց... Ինչպես կուզեք...

Սիրունիկ սինյորինան կոկորդը մաքրեց և սկսեց։

- Եվ այսպես. «Ողջ Անգլիայում շարունակում են փնտրել «Ռիդինգ» բանտից փախած վտանգավոր ավազակին։ Ոստիկանության կոմիսարը հայտնել է, որ իր կարծիքով հանցագործը թաքնվել է անտառում։

Այդ պահին սինյոր Վերուչին մի ձայն լսեց, որը գալիս էր ո՛չ հեռուստացույցից, ո՛չ էլ հաղորդավարից, այլ՝ իր թիկունքից։ Ձայնն ասաց։

- Հիմարությո՛ւն։

- Իսկ սա՞ ով է,- տեղից վեր թռավ սինյոր Վերուչին։

- Ախր սա հենց ավազակն է,- բացականչեց հաղորդավարուհին՝ տեղից չշարժվելով։- Տեսե՛ք, նա ձեր բազկաթոռի հետևում է թաքնվել։

- Հիմարությո՛ւն,- կրկնեց ձայնը,- էդ էր մնացել, որ ձեզ ասեմ, թե որտեղ եմ թաքնվում...

Սինյոր Վերուչին վեր թռավ տեղից, նայեց այն կողմ, որտեղից ձայնն էր գալիս, և փրփրեց.

- Ինչպե՞ս եք համարձակվում։ Տեսե՛ք, նույնիսկ զինված է։ Ավազակն իմ տանն է։ Գժվե՛լ կարելի է։

- Բայց դուք ինքներդ եք ինձ հրավիրել,- ասաց ավազակը՝ դուրս գալով թաքստոցից։

- Ե՞ս։ Լա՛վ էլ հորինել եք։ Պատկերացնո՞ւմ եք՝ ես ավազակին տուն եմ հրավիրում՝ միասին մի գավաթ խմելու...

- Ի դեպ, ես չէի հրաժարվի։

- Ինչի՞ց։

- Մի գավաթից։

- Ախր դուք ոչ միայն ավազակ եք, այլ նաև՝ անպատկառ։ Նախ, ես հայտարարում եմ, որ Ձեզ չեմ ճանաչում ։ Երկրորդ, Դուք հայտնվել եք այստեղ հակառակ իմ ցանկության։ Դո՛ւք, սինորի՛նա, դրա վկան եք։

- Ո՛չ, սինյոր Վերուչի,- պատասխանեց հաղորդավարուհին,- ես չեմ կարող վկա լինել, որքան էլ մեծ լինի ձեր ցանկությունը։ Ախր, դուք ինքներդ միացրիք հեռուստացույցը։

- Ահա թե ի՛նչ, ուրեմն այս ավազակը նույնպե՞ս...

- Իհա՛րկե, նա նույնպես ձեր տանն է հայտնվել հեռուստացույցից, ինչպես և ես։

- Մի խոսքով,- ասաց ավազակը,- դուք ինձ մի գավաթ գինի հյուրասիրելո՞ւ եք, թե՞ ոչ։

- Խնդրեմ,- պատասխանեց սինյոր Վերուչին,- անցե՛ք, նստե՛ք, տեղավորվե՛ք՝ ինչպես ձեր տանը։ Ինձ համար արդեն պարզ է, որ ես այստեղ ոչ ոք եմ։ Սա ի՛մ տունն է, բայց ես այստեղ

տանտեր չեմ։ Դուռը փակ է, պատուհանները՝ նույնպես, բայց մարդիկ ազատ մտնում են տուն և ինչ ուզում՝ անում են...

- Բայց դուք շատ եք ձգձգում էդ մի գավաթ գինին բերելը,- նկատեց ավազակը։

- Իսկ ե՞ս ինչ անեմ, շարունակե՞մ նորությունները հաղորդել,- հարցրեց հաղորդավարուհին։

Եվ սինյոր Վերուչին պատասխանեց.

- Իսկ ինչու չէ, ինձ համար նույնիսկ հետաքրքիր է, թե ինչո՞վ է ավարտվելու այս պատմությունը։

Եվ սինյորինան սկսեց կարդալ հաղորդավարի անտարբեր ձայնով. «Իմաստաբանական զորքերի հրամանատար գեներալ Բոլոն , հայտարարել է, որ նորից պատերազմական գործողություններ է սկսելու Պլանավիա հանրապետության դեմ, և որ պատերազմը կավարտվի Նոր տարուց ոչ շուտ»։

- Դա այնքան էլ ճիշտ չէ,- ընդհատեց նրան ինչ-որ ձայն, և զգեստապահարանի դուռը թափով բացվեց։

Սինյոր Վերուչին ցնցվեց.

-Ի՞նչ։ Հա՛, հասկացա. . . Գեներալ Բոլոն եք, չէ՞։ Իսկ ի՞նչ էիք անում իմ պահարանում։

- Դժվար թե դա ձեզ հետաքրքրի ,- հանգիստ պատասխանեց գեներալը։

- Այնումենայնիվ, ես ուզում եմ իմանալ,- համառորեն շարունակեց սինյոր Վերուչին,- ի՞նչ էիք այնտեղ անում։ Ռումբե՞ր։ Ռումբեր ի՛մ պահարանում... և ի՛մ բնակարանում։ Բայց, ասացե՛ք, ես ի՞նչ կապ ունեմ ձեր պատերազմի հետ։

-Իմ գործը, թանկագին սինյոր,- ասաց գեներալ Բոլոն,- իմաստաբանական զորքերը ղեկավարելը և Պլանավիայի տարածքը գրավելն է, ոչ թե ձեր հարցերին պատասխանելը։ Ես եկել եմ ասելու սինյորինային, որ իմ հայտարարությունը ճիշտ չի հաղորդվել։ Ես այսպես եմ ասել. «Պատերազմը կավարտվի մինչև Նոր տարի, քանի որ ես կոչնչացնեմ բոլորին, բոլոր պլանավիացիներին՝ մինչև վերջին մարդը, երկրի երեսից կջնջեմ նրանց քաղաքները, նրանց երկիրը անապատ կդարձնեմ։

Այստեղ խոսակցությանը ցանկացավ միջամտել ավազակը.

- Չէ՛, դուք միայն լսեք նրան։ Ինչպիսի՜ եռանդ, ինչպիսի՜ ծրագրեր։ Իսկ ինձ՝ խեղճ գողիս, Անգլիայով մեկ հետապնդում են։ Ես, այնուամենայնիվ, կուզեի իմանալ, թե մեզանից ո՞ր մեկն է իսկական ավազակը...

- Իսկ ես,- ճչաց սինյոր Վերուչին,- ուզում եմ իմանալ,թե երբ դուք բոլորդ կհեռանաք այստեղից : Դուք՝ սիրելի սինյորինա, և դուք՝ սինյոր ավազակ, և դուք՝ սինյոր գեներալ... Սա ի՛մ տուն է, և ես ուզում եմ այստեղ մենակ մնալ: Ինձ ամենևին չի հետաքրքրում, թե ինչ եք անում դուք ու ինչ եք խոսում: Բայց ես ձեր հախից կգամ և բոլորիդ դուրս կհանեմ: Ես ոստիկանություն կկանչեմ և կհայատարարեմ, որ դուք ներխուժել եք իմ տուն: Հենց այդպես: Ես կկանչեմ կարաբիներներին[2], փողոցային երթևեկությունը կարգավորողներին, հրշեջներին... բոլորին կանչեմ: Ես ուզում եմ հասկանալ, ե՞ս եմ իմ տանը տերը, թե՞ ոչ... Ես վերջապես ուզում եմ. . .

Բայց այդ ընթացքում, երբ հեռուստատեսության հաղորդավարուհին վերջին նորություն-ներն էր կարդում, հանգստանալ երազող սինյոր Վերուչիիի բնակարանը լցվեց տարբեր տեսակի մարդկանցով: Այստեղ հայտնվեցին քաղցից ուժասպառ ինչ-որ մարդիկ, զորավարժություններից տանջված զինվորներ, ճառեր ասող քաղաքական գործիչներ, խցանումների մեջ մնացած վարորդներ, մարզիկներ, գործադուլ անող բանվորներ, նույնիսկ օդաչու, որը պատրաստվում էր ռումբեր նետել... Բազմաձայն խոսքը, ճիչերը, աղմուկը, աղաղակները, երգեցողությունը և աշխարհի տարբեր լեզուներով հայհոյանքը խառնվում էին շարժիչների հռնդոցին, ռումբերի պայթյուններին և տանկերի դղրդոցին:

- Բավակա՛ն է,- գոռաց սինյոր Վերուչին : - Սա դավաճանությո՛ւն է: Սա բռնությո՛ւն է: Բավակա՛ն է: Բավակա՛ն է:

Առաջին ավարտ

Հանկարծ լսվեց դռան զանգի ձայնը:

- Ո՞վ է:

- Բացե՛ք

Փա՛ռք Աստծո, կարաբիներներն էին: Նրանց կանչել էր հարևանը, որն անհանգստացել էր սինյոր Վերուչիի բնակարանից լսվող ուժեղ աղմուկի ու պայթյունների ձայներից:

- Տեղներիցդ չշարժվե՛ք: Ձեռքներդ վե՛ր: Ցույց տվեք փաստաթղթերը:

- Շնորհակալությո՛ւն,- հանգիստ շունչ քաշեց սինյոր Վերուչին՝ փռվելով իր սիրելի բազմոցին:- Շնորհակալությո՛ւն: Տարե՛ք նրանց բոլորին: Ոչ մեկին չեմ ուզում տեսնել: Սրանք բոլորը կասկածելի մարդիկ են:

- Սինյորինան նո՞ւյնպես:

- Այո՛, նա նույնպես: Նա ոչ մի իրավունք չուներ իմ տուն բերել այս ողջ հրոսակախումբը:

[2] Կարաբիներ-ձիավոր պահնորդ ոստիկաններ՝ Իտալիայում:

- Համաձայն եմ, սինյոր Վերուչի,- ասաց կարաբիներների հրամանատարը,- դուք անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք ունեք : Ես բոլորին բանտ կուղարկեմ : Կուզե՞ք ձեզ համար սուրճ եփեմ:

- Շնորհակալությո՛ւն: Ես ինքս: Առանց կոֆեինի, թե չէ չեմ կարողանա քնել:

Երկրորդ ավարտ

Հանկարծ... սինյոր Վերուչին լռեց: Նրա գլխում մի լավ միտք ծագեց: Ժպտալով բոլորին, ովքեր հետաքրքրությամբ իրեն էին նայում, նա կամացուկ մոտեցավ հեռուստացույցին, և, համոզվելով, որ ոչ մեկը չի կարող խանգարել իրեն, անսպասելի կտրուկ շարժումով անջատեց այն: Առաջինն անհետացավ հաղորդավարը: Հետո մեկը մյուսի հետևից անհետացան ավազակը, գեներալը, երգիչներն ու մարզիկները, բանակներն ու ժողովուրդները: Ի՜նչ հեշտ էր, այնպես չէ՞:

Բավական է անջատել հեռուստացույցը, և աշխարհն իսկույն կանհետանա, կմնա մեր տան պատերից այն կողմ, կվերադառնա մեր հանգիստը...

Հաղթանակած մնալով կռվի դաշտում՝ սինյոր Վերուչին ինքն իրեն ժպտաց և վառեց ծխախոտը:

Երրորդ ավարտ

Հանկարծ... սինյոր Վերուչին լռեց:

Նա հասկացա՞վ:

Այո՛, հասկացավ:

Ի՞նչ:

Որ բավական չէ դռները փակել՝ աշխարհից, մարդկանցից, նրանց հոգսերից ու խնդիրներից անջատվելու համար: Որ ոչ մեկը չի կարող ուրախանալ, կյանքը վայելել՝ իմանալով (իսկ դրա համար բավական է միացնել հեռուստացույցը), որ դեռ կան մարդիկ, որոնց համար վատ է, որոնք տանջվում ու մահանում են, մոտիկ, թե՝ հեռու, բայց մեր ընդհանուր Երկրագնդի վրա: Իսկ այն մեկն է բոլորիս համար, մեր ընդհանուր տունն է:

ՀԱՐՅՈՒՐ ԼԻՐ՝ ԳՐՊԱՆՈՒՄ

Կային-չկային երեք եղբայր: Նրանք այնքան աղքատ էին, որ պարզապես չգիտեին, թե ինչպես ծայրը ծայրին հասցնեն: Մի օր երեկոյան, երբ ամեն անգամվա նման սոված փորով պառկել էին քնելու, մեծ եղբայրը հանկարծ ասաց.

- Եղբայրներ, այսպես ապրել այլևս հնարավոր չի: Մեր մի կտոր հողը չի կարող մեզ բոլորիս կերակրել: Վաղը ես կհեռանամ: Կգնամ, կթափառեմ աշխարհով մեկ՝ երջանկություն

փնտրելու: Եվ եթե բախտն ինձ ժպտա, կվերադառնամ տուն, և դուք հարուստների նման կապրեք:

Հաջորդ առավոտյան նա մեկնեց: Գնա՛ց, գնա՛ց, երեկոն իջավ, իսկ նա դեռ գնում էր: Վերջապես մի իջևանատուն հասավ: Ընթրեց մի կտոր հաց ու պանրով և պառկելու տեղ փնտրեց: Իջևանատանն արդեն շատ մարդ էր հավաքվել, բայց մի ազատ մահճակալ, այնուամենայնիվ, գտնվեց: Պառկեց մահճակալին և խորը քուն մտավ: Արթնացավ շատ վաղ՝ արևածագից առաջ, ինչպես բոլոր գյուղացիները: Հագնվեց, վճարեց հյուրատան տիրոջը և շարունակեց ճանապարհը: Նա արդեն բավականին քայլել էր, երբ հանկարծ քիթը մաքրելու ցանկություն ունեցավ: Ձեռքը տարավ գրպանը՝ թաշկինակը հանելու, և զարմացավ.

- Սա ի՞նչ է: Հարյուր լիրանոց մետաղադրա՞մ: Իմ գրպանում այսքան փող չկար … Հա՛, հասկանում եմ, երևի ուրիշի շալվարն է. մթության մեջ շփոթել, ուրիշի շորն եմ հագել: Բայց այն իմ շալվարից լավը չի. նույնքան հին է ու մաշված: Արժի՞ վերադառնալ փոխելու համար: Տեսնենք՝ է՞լ ինչ կա գրպանում: Էլի հարյուր լիրանոց… Բայց ինձ թվում էր՝ միայն մեկն է… Ասում են՝ որտեղ երկուսը կա, այնտեղ կարող է երեքն էլ լինել: Տեսնենք՝ երրորդ դրամը չի՞ գտնվի ... Այդպես էլ կա… Ուրեմն ես հիմա երեք հարյուր լիր ունեմ. իմ մեկ օրվա վաստակը:

Բայց գտածը մեկ օրվա վաստակից էլ շատ էր, քանի որ ամեն անգամ, հենց ձեռքը տանում էր գրպանը, հարյուր լիր էր գտնում: Եվ նա, ինչ խոսք, սկսեց հանել մետաղադրամները. անընդհատ հանում էր ու հանում, հանում էր ու հանում: Արդեն մի ամբողջ կույտ դրամ էր հավաքվել, իսկ գրպանը չէր էլ հոգնում, ամեն անգամ նրան հարյուր լիր էր տալիս: Տղան ուրախությունից գլուխը կորցրել էր և հետ վազեց տուն: Տուն հասավ ու ձայն տվեց.

- Եղբայրնե՛ր, եղբայրնե՛րս, բախտս բերել է: Տեսե՛ք, թե ինչ եմ գտել,- և սկսեց գրպանից հանել մետաղադրամները:

- Իսկապես որ, էս ինչքա՛ն փող կա:

- Իսկ ես կարող եմ էլի հանել, ինչքան որ ուզեք:

- Գուցե փող սարքող մեքենա՞ ես գտել:

- Դե հա, զարմանալի ու շատ հասարակ մեքենա… տեսե՛ք, ահա՛ հարյուր լիր, ահա էլի մեկը, էլի ու էլի...

- Ապրե՛ս,- ասաց երկրորդ եղբայրը:- Բայց մենք չենք կարող քո հաշվին ապրել: Դա անարդար կլինի: Վաղը ես էլ կգնամ երջանկություն փնտրելու: Եթե բախտը քեզ ժպտաց, ուրեմն ինձ էլ կժպտա, ու մենք երեքով իսկական պարոնների պես կապրենք …

Հաջորդ առավոտյան այս եղբայրն էլ ճանապարհ ընկավ: Մեծ եղբոր նման նա էլ նույն իջևանատանը կանգ առավ… գիշերը նույն սենյակում քնեց, իսկ առավոտյան արթնանալով, հագավ հարևանի շալվարն ու գնաց: Մի քիչ հեռանալով՝ կանգ առավ ու սկսեց քրքրել գրպանները.

- Տեսնենք՝ իմ բախտն էլ կբերի՞... Այս գրպանը դատարկ է… իսկ մյո՞ւսը… այստեղ ինչ-որ բան կա: Չէ՛, սա մետաղադրամ չէ, այլ՝ թղթի կտոր… Բայց սա, ախր, հազար լիրանո՛ց է: Գուցե մի հա՞տ էլ կգտնվի... Այդպես էլ կա: Ահա՛ էլի մեկը... մի հատ էլ... Դե՛, հիմա ես արդեն հարուստ եմ:

Իսկապես էլ, ամեն անգամ ձեռքը մցնելով գրպանը նա այնտեղ հազար լիր էր գտնում: Պարզվեց՝ այս շալվարը նույնպես կախարդական էր:

Երկրորդ եղբայրը նույնպես, հասկանալի է, մեծ եղբոր պես վարվեց: Անչափ գոհ շտապեց տուն և դեռ հեռվից գոռաց.

- Եղբայրնե՛ր: Եղբայրնե՛ր, իմ բախտն էլ բերեց: Դեռ մի բան էլ ավելի: Տեսե՛ք:

- Իսկապես որ, էս ինչքա՛ն շատ է փողը:

- Ես էլ կարող եմ գրպանիցս ուզածիս չափ փող հանել, մնում է միայն ցանկանալ:

- Ուրեմն, դու էլ փող սարքող մեքենա գտար,- հոգոց հանեց փոքր եղբայրը:- Լա՛վ, վաղը ես էլ կգնամ հաջողություն փնտրելու: Եթե ձեզ երկուսի բախտը բերեց, ինչո՞ւ ես էլ չփորձեմ:

- Դրա կարիքը բոլորովին չկա,- ասացին մեծ եղբայրները:- Մենք երկուսով հիմա կարող ենք այնքան փող ունենալ, որքան մեզ պետք է:

- Շնորհակալություն բարության համար, բայց ես չեմ ուզում ձեր հաշվին ապրել: Ես ինքս եմ ուզում գտնել իմ երջանկությունը:

Եվ հավաքելով իրերը՝ փոքր եղբայրը նույնպես ճանապարհ ընկավ: Գնա՛ց, գնա՛ց, հասավ նույն իջևանատունը, ընթրեց և պառկեց քնելու: Իսկ երբ արթնացավ…

Այստեղ պատմությունն ընդհատվում է, և մենք ինքներս պետք է ավարտենք այն:

Ես, օրինակ, մտածում եմ, որ այն կարող է այսպիսի երեք վերջաբան ունենալ:

Առաջին ավարտ

Փոքր եղբայրը գրպանում միլիոն լիր գտավ: Ամեն անգամ, հենց ձեռքը մտցնում էր գրպանը, այնտեղից միլիոն լիր էր հանում: Էլի միլլիոն, էլի… Այնպես որ, գրպանում ավելի շատ փող գտնվեց, քան իտալական բանկում:

Վերադարձավ տուն: Եղբայրները մեծ խնջույք կազմակերպեցին. երաժշտությամբ ու հրավառությամբ: Եվ որպեսզի ոչ ոք իրենց չնախանձի, փող բաժանեցին բոլոր հարևաններին, ծանոթներին, նույնիսկ բոլորովին անծանոթ մարդկանց:

Ու ոչ մեկի մտքով անգամ չէր անցնում գողանալ այդ կախարդական շալվարները: Իսկապես որ, ինչո՞ւ գողանային: Չէ՞ որ եղբայրները ոչ-մեկին չէին մերժում, որքան փող էլ որ խնդրեին. հարյուր, թե՞ հարյուր միլիոն լիր:

Հիմա եղբայրները վաղուց արդեն ողջ չեն: Բայց եթե այցելեք այն քաղաք, որտեղ նրանք ապրել են, տեղի թանգարանում ձեզ անպայման ցույց կտան նրանց շալվարները, որոնք դրված են ցուցափեղկում, նշանավոր գեներալ Պաստրուֆացիետոյի սրի կողքին:

Երկրորդ ավարտ

Փոքր եղբայրը գրպանում մի այսպիսի գրություն գտավ. «Դե՛, արդեն բավական է: Շատ ժլատ եք բոլորդ» և ստորագրությունը՝ «Հրաշագործ, ով կախարդական շալվարներ է նվիրում ում ուզում է»:

Երրորդ ավարտ

Փոքր եղբայրը նույնպես գրպանում միլլիոն լիր գտավ: Այն դրեց պարկի մեջ և նորից ձեռքը գրպանը տարավ: Դարձյալ միլիոն լիր հանեց: «Կուզեի իմանալ,- մտածեց նա,- ի վերջո ո՞ւմն են այս փողերը, և կարո՞ղ եմ ես վերցնել դրանք: Գուցե ինչ-որ մեկը նվիրո՞ւմ է ինձ: Անձամբ ես ոչ մեկից ոչինչ գողանալու մտադրություն չունեմ»:

Նա անմիջապես վերադարձավ իջևանատուն և սկսեց հարցնել մարդկանց.

- Խոստովանե՛ք, ո՞վ է իր շալվարի փոխարեն իմը հագել:

Կենվորները սկսեցին զննել իրենց շալվարները: Ինչ-որ մեկը նույնիսկ իր բաճկոնն ու վերնաշապիկը զննեց: Իսկ սենյակի հեռավոր անկյունում նստել էր մի մարդ, ով մտադիր էլ չէր տնտղել իր շալվարը, և շարունակում էր ուտել: Հենց նրա հագին էլ գտնվեց փոքր եղբոր շալվարը:

- Ներեցեք,- ասաց փոքր եղբայրը,- մենք փոխս ենք գցել մեր շալվարները: Պետք է, երևի, փոխենք:

Իսկ մարդը խմում էր իր սուրճը և լռում:

- Հիմա ի՞նչ,- շարունակեց փոքր եղբայրը: Բայց մարդուկը հացի կտորին կարագ էր քսում ու կարծես դարձյալ չէր լսում:

- Չե՞ս ուզում շալվարդ հետ վերցնել:

- Զզվեցրիր, էլի՛,- հանկարծ բարկացավ մարդուկը,- հանգիստ ուտել էլ չի լինում: Վերցրո՛ւ քո անիծյալ շալվարը…

Նա հանեց շալվարը և նետեց սեղանին: Փոքր եղբայրը փոխվեց, թողեց ուրիշի շալվարը և գնաց: Իսկ հետո, որոշ ժամանակ անց, ձեռքը տարավ գրպանը և այնտեղ գտավ… միլլիարդ: Հետո էլի՛ միլլիարդ, և էլի մեկը: Գժվել կարելի է, թե ինչպիսի պատմություններ են լինում:

ՄԵԾ ԳԱԶԱՐԸ

Իսկ հիմա ես ձեզ մի պատմություն կպատմեմ աշխարհի ամենամեծ գազարի մասին: Դուք, իհարկե, մեկ անգամ չէ, որ լսել եք այդ մասին, բայց, իմ կարծիքով, պատմությունն այսպես է եղել:

Մի անգամ մի գյուղացի իր բանջարանոցում գազար է տնկում և սկսում է խնամել. ջրում է, մաքրում մոլախոտերից, մի խոսքով՝ ամեն ինչ անում է՝ ինչպես հարկն է: Երբ ժամանակը գալիս է, սկսում է բերքը հավաքել. գազարները հանում է հողից: Հանկարծ տեսնում է մի շա՜տ մեծ գազար: Հա քաշում է, քաշքշում է, բայց հողից հանել չի կարողանում: Փորձում է թե՛ այսպես, թե՛ այնպես, էլի չի կարողանում: Վերջապես չի դիմանում, կանչում է կնոջը:

– Ջուզեպի՜նա:

– Ի՞նչ է պատահել Օրեստե:

– Էստեղ արի: Այնպիսի՜ մի գազար է բուսնել... Ոչ մի կերպ չի ուզում դուրս գալ հողից: Արի մի տե՛ս...

– Հա՜ էլի, էս ի՜նչ մեծ է :

– Արի այսպես անենք, ես կբռնեմ գազարից, իսկ դու՝ իմ բաճկոնից և կքաշենք: Դե ինչ, պատրա՞ստ ես: Քաշեցի՜նք: Էլի՜, էլի՜ քաշիր:

– Ավելի լավ է ձեռքիցդ բռնեմ, թե չե բաճկոնդ կարող է պատռվել:

– Լավ, ձեռքիցս բռնիր: Դե՛, ուժեղ քաշիր: Ո՛չ, ոչ մի կերպ չեմ կարողանում հանել: Հապա կանչիր որդուս, թե չէ ես լրիվ շնչահեղձ եղա..

– Ռոմե՜ո, Ռոմե՜ո:

– Ի՞նչ է պատահել, մայրի՛կ:

– Այստեղ արի, միայն թե արագ:

– Բայց ես դաս եմ սովորում:

– Հետո կսովորես, իսկ հիմա օգնիր։ Տե՛ս, այս գազարը ոչ մի կերպ չի ուզում դուրս գալ հողից։ Ես կբռնեմ հայրիկի մի ձեռքից, դու՝ մյուսից, իսկ ինքը կբռնի գազարից ու կքաշենք։ Գուցե այդպե՞ս կարողանանք հանել հողից։

Օրեստեն թքոտեց ափերին, շփեց ձեռքերը, ուժերը կենտրոնացրեց։

- Դե ինչ, պատրա՞ստ եք։ Մե՛կ-երկո՛ւ, քաշեցի՛նք։ Նորի՛ց... էլի՛, էլի՛... Չէ՛, ոչինչ չի ստացվում։

- Սա երևի աշխարհի ամենամեծ գազարն է,- ասաց Ջուզեպինան։

- Պետք է օգնության կանչել պապիկին, - առաջարկեց Ռոմեոն։

- Դե կանչի՛ր,- համաձայնեց հայրը։ - Ես միայնակ չեմ կարող քաշել-հանել։

- Պապի՛կ, պապի՛կ։ Արի՛ այստեղ, շո՛ւտ արի։

- Գալիս եմ, սիրելիս, գալիս եմ... Պարզապես դժվար է քայլելը... Քո տարիքում ես էլ էի արագ վազում, իսկ հիմա ... Ի՞նչ է պատահել։

Պապիկը տեղ հասավ շնչակտուր և արդեն հոգնած։

- Մեր բանջարանոցում աշխարհի ամենամեծ գազարն է աճել,- բացատրեց Ռոմեոն։- Երեքով չենքկարողանում հանել հողից, կօգնե՞ս։

- Կօգնեմ, բա ո՞նց, հարազատս։

- Ուրեմն այսպես կանենք,- ասաց Ռոմեոն,- դու կբռնես ինձնից, ես մայրիկի հետ հայրիկից կբռնեմ, իսկ նա՝ գազարը կքաշի... Եթե այս անգամ էլ չկարողանանք հողից հանել...

- Լավ,- համաձայնեց պապիկը,- միայն մի բոպե սպասիր...

- Ի՞նչ է եղել։

- Միայն ծխամորճս մի կողմ դնեմ։ Հնարավոր չէ միանգամից երկու գործ անել։ Պետք է կա՛մ ծխել, կա՛մ աշխատել, այդպես չէ՞։

- Դե՛, սկսեցինք,- ասաց Օրեստեն։- Բոլորը պատրա՞ստ են։ Մե՛կ-երկո՛ւ, քաշեցի՛նք։ Մի անգա՛մ էլ, մի անգամ էլ՝ քաշեցի՛նք։

- Օգնեցե՛ք։

-Ի՞նչ պատահեց, պապի՛կ

- Չե՞ս տեսնում, ընկա։ Սայթաքեցի և ընկա։ Եվ հենց ծխամորճիս վրա...

Խեղճ ծերուկը նույնիսկ տաբատն էր վառել։

- Ո՛չ, էսպես բան դուրս չի գա,- որոշեց Օրեստեն։ -Ռոմե՛ո, վազի՛ր հարևան Անդրեայի մոտ, օգնության կանչիր։

- Դե որ այդպես է, թող կնոջ ու տղայի հետ գա՝ ամբողջ ընտանիքով,- առաջարկեց Ռոմեոն։

- Ճիշտ ես ասում,- համաձայնեց հայրը։ – Տես, է՜, ի՜նչ էլ մեծ գազար է... Սրա մասին կարելի է թերթին էլ հայտնել։

- Գուցե հեռուստատեսությունից մարդ կանչենք,- առաջարկեց Զուզեպինան։ Բայց նրա հետ ոչ ոք չհամաձայնվեց։

- Հեռուստատեսություն... – մրթմրթաց Օրեստեն,- ավելի լավ է հարևաններին կանչենք ու նախ սա՛ հողից հանենք։

Կարճ ասած՝ եկավ Անդրեան, եկան նրա կինն ու որդին։ Ճիշտ է, տղան դեռևս շատ փոքրիկ էր՝ հինգ տարեկան, այնպես որ նրա ուժը շատ չէր...

Այդ ընթացքում ամբողջ գյուղն արդեն իմացել էր հսկա գազարի մասին։ Կատակելով ու զրուցելով նրանք գնում էին դեպի բանջարանոց։

- Սա, ախր, ամենևին էլ գազար չէ, ասաց ինչ-որ մեկը,- այստեղ կետ ձուկ է նստել։

- Կետերը ծովում են լողում։

- Ոչ բոլորը։ Ես մեկին տեսել եմ տոնավաճառում ..

- Իսկ ես տեսել եմ գրքում...

Մարդիկ հրահրում էին միմյանց։

- Հապա մի դու փորձիր, Ջիրոլամո,- դու մեր մեջ ամենաուժեղն ես։

- Ես գազար չեմ սիրում, նախնտրում եմ կարտոֆիլ։

- Իսկ ես՝ կոլոլակ։

Կատակներով ու զվարճախոսություններով մարդիկ քաշեցին-քաշքշեցին, բայց գազարը հողից հանել չկարողացան։ Արդեն արևն էլ դեպի մայրամուտ էր թեքվում...

Առաջին ավարտ

... Իսկ գազարն այդպես էլ դուրս չէր գալիս հողից։ Ամբողջ գյուղը եկավ օգնելու, բայց չկարողացան գազարը քաշել-հանել։

Հավաքվեց հարևան գյուղի ժողովուրդը՝ դարձյալ ապարդյուն։

Հեռավոր գյուղերից էլ մարդիկ եկան, բայց գազարը տեղից չշարժվեց։

Վերջիվերջո պարզվեց, որ հսկա գազարն աճել–անցել է Երկրագնդի միջով և դուրս է եկել հակառակ կողմից։ Իսկ Երկրի հակառակ կողմում մի ուրիշ գյուղացի է քաշում, որ գազարը հանի հողից, և նրան էլ է իր ողջ գյուղն օգնում։ Ոնց որ պարանի ձգում խաղի ժամանակ։ Ու երևում էր, որ դրան վերջ չէր լինելու։

Երկրորդ ավարտ

Արդեն արևն էլ դեպի մայրամուտ էր թեքվում, իսկ նրանք դեռ քաշում ու քաշում էին: Վերջապես հողից հանեցին: Միայն թե դա գազար չէր, այլ՝ դդում: Իսկ դդումի մեջ նստած էին յոթ թզուկ-կոշկակարներ և կոշիկ էին կարում:

- Սա ի՞նչ է,- բարկացան թզուկները:- Ի՞նչ իրավունքով եք խլում մեզանից մեր տունը և արհեստանոցը: Դե՛, շուտ ետ դրեք դդումը, նորից հողի մեջ մտցրեք:

Մարդիկ վախեցան և փախան: Բոլորը փախան բացի պապիկից: Հենց նա էլ հարցրեց թզուկներին.

- Ձեզ մոտ լուցկի չի՞ գտնվի: Ծխամորճս լրիվ հանգել է:

Պապիկն ընկերացավ թզուկների հետ:

-Ես հաճույքով կտեղափոխվեի ձեզ մոտ՝ դդումի մեջ ապրելու,- ասաց պապիկը:- Ինձ համար էլ տեղ չի՞ գտնվի արդյոք:

Դա լսեց Ռոմեոն և հեռվից բղավեց.

- Եթե դու գնաս, պապի՛կ, ես էլ եմ ուզում գալ:

Ջուզեպինան նույնպես բղավեց.

- Ռոմե՛ո, տղա՛ս, ես էլ քո հետևից կգամ:

Օրեստեն էլ բղավեց.

- Ջուզեպի՛նա, իսկ ե՞ս ինչ պիտի անեմ առանց քեզ:

Թզուկները բարկացան և իրենց դդումի հետ թաքնվեցին հողի տակ:

Երրորդ ավարտ

Քաշեցին նրանք, քաշեցին... Շատ ժողովուրդ էր հավաքվել, ուրեմն՝ ուժն էլ էր շատ: Եվ ահա գազարը սկսեց դուրս գալ հողից. դանդաղ, սանտիմետր առ սանտիմետր, բայց դուրս էր գալիս: Պարզվեց՝ գազարն այնքան մեծ էր, որ այն տոնավաճառ տանելու համար քսանյոթ բեռնատար ավտոմեքենա և մի եռանիվ հեծանիվ պետք եկավ:

Չկա մի այնպիսի մի գործ, որ մարդկանց ուժերից վեր լինի, եթե նրանք միասին են գործին կպնում և աշխատում են ուրախ ու համերաշխ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԿԱՏՈՒՆ

Մի անգամ Հռոմից դեպի Բոլոնիա ուղևորվող գնացք մտավ մի կատու:

Ընդհանրապես գնացքներում կատուներ այնքան էլ հազվադեպ չեն հանդիպում: Ճիշտ է, նրանք հիմնականում նստում են զամբյուղի կամ տուփերի մեջ, որոնք ծակծկում են, որ կատուները չխեղդվեն: Գնացքներում երբեմն նույնիսկ թափառաշրջիկ կատուներ են հանդիպում, և կատուներ, որոնք ոչ մեկինը չեն, ինչպես նաև մկներ որոնելու համար պատահաբար այստեղ մտած կատուներ... Բայց այս կատուն, ում մասին պատմում եմ, իսկական ճանապարհորդ էր և միանգամայն ինքնուրույն էր ուղևորվում:

Նրա ուսից փաստաբանի պայուսակի նման սև պայուսակ էր կախված, բայց նա, այնուամենայնիվ, ոչ թե փաստաբան էր, այլ՝ կատու: Նա քթին ակնոց էր դրել, ինչպես կարճատես հաշվետարը, բայց հաշվետար չէր և հիանալի տեսողություն ուներ: Նա հանրահայտ դերասանների նման խիստ նորաձև վերարկու էր հագել և խիստ նորաձև գլխարկ դրել, բայց ոչ թե դերասան էր, այլ՝ կատու:

Նա մտավ առաջին կարգի խցիկ և նստեց ազատ տեղում՝ պատուհանի մոտ: Խցիկում արդեն այլ ուղևորներ կային նստած: Մի սինյորա, ով գնում էր Արեցցո՝ այցելելու քրոջը, հարգարժան մի պարոն, ով գործերով Բոլոնյա էր գնում և մի երիտասարդը, ով գնում էր չգիտես թե ուր:

Կատվի հայտնվելը որոշակի աշխուժություն մտցրեց ուղևորների մեջ:

Սինյորան ասաց.

- Ի՞նչ հրաշալի կատու է: Փի՛սի-փի՛սի-փի՛սի... Դու մեծի նման բոլորովին մենակ ես ճանապարհորդում, հա՞...

Հարգարժան պարոնն ասաց.

- Հուսանք, որ նրա վրա լվեր չկան:

- Մի՞թե չեք տեսնում, թե որքան մաքուր է,- նկատեց սինյորան:

- Հուսանք... Բայց, հարգարժան սինյորա, ի դեպ ես ալերգիա ունեմ կատուներից: Հուսանք, որ գրիպ չեմ հիվանդանա:

- Բայց չէ՞, որ նա գրիպով հիվանդ չէ, ի՞նչից եք վախենում:

- Ինձ, հարգարժան սինյորա, վարակում են նույնիսկ նրանք, ովքեր հիվանդ չեն:

- Փի՛սի-փի՛սի-փի՛սի... Դու երևի քո տիրուհու համա՞ր ես տեղ պահել, հա՞:

- Մյա՛ու:

- Ի՞նչ հաճելի ձայն ունի։ Հետաքրքիր է, թե ի՞նչ ասաց։

Այստեղ առաջին անգամ խոսեց երիտասարդը.

- Նա ասաց, որ տիրուհի չունի, որ ինքը միանգամայն ազատ կատու է և, բացի այդ, արքայական ծագում ունի։

- Ի՞նչ հետաքրքիր է։

- Ավելի ճիշտ կլիներ ասել՝ թափառաշրջիկ կատու է,- անբարյացակամորեն նկատեց հարգարժան պարոնը։- Հուսանք, որ ինձ մոտ կապույտ հազ չի սկսվի։

- Կապույտ հա՞զ,- զարմացավ սինյորան,- բայց կատուները կապույտ հազով չեն հիվանդանում։

- Ես, հարգարժան սինյորա, մանուկ ժամանակ այդ հիվանդությամբ չեմ վարակվել։ Իսկ դուք պիտի իմանայիք, որ մեծերի համար այն ավելի վտանգավոր է։

Այդ ժամանակ գնացքը շարժվեց, և խցիկ մտավ հսկիչը։

- Ձեր տոմսերը, պարոնա՛յք։

Սինյորան բացեց պայուսակը.

- Ա՜խ, ո՞րտեղ եմ ես դրել այդ տոմսը... Սպասե՛ք, գուցե այստե՞ղ է... Այո՛, այո՛, փա՜ռք Աստծու։

- Շնորհակալ եմ, սինյո՛րա, իսկ կատվի՞նը։

- Բայց դա իմ կատուն չէ։

- Ուրեմն ձե՞րն է, պարո՛ն։

- Էդ էր մնացել պակաս,- բարկացավ հարգարժան պարոնը,- տանել չեմ կարողանում կատուներին։ Նրանցից իմ ճնշումը բարձրանում է։

- Գիտե՛ք, նա իմն էլ չէ,– ասաց երիտասարդը,– նա ինքնուրույն է ճանապարհորդում։

- Բայց նա պիտի որ տոմս ունենա։

- Մի՛ արթնացրեք նրան, նա այնքա՜ն քաղցր է քնած։ Այնքա՜ն լավն է, տեսեք՝ ինչ գեղեցիկ մռութիկ ունի։

- Ինչպիսին էլ լինի նրա մռութը, բայց ես պետք է նրա տոմսը դակեմ։

- Փի՜սի-փի՜սի-փի՜սի,- ձայն տվեց սինյորան։- Կատվի՛կ, սիրելի կատվիկ, արթնացի՛ր, տե՛ս, թե ով է եկել...

Կատուն բացեց սկզբում մի աչքը, հետո՝ մյուսը և ասաց.

- Մյա՜ու, մյա՜ու։

- Դեռ դժգոհում է,– փնթփնթաց հարգարժան պարոնը: Գրողը տանի, նրան հավանաբար ննջախցիկ է պետք...

- Ոչ մի նման բան,– բացատրեց երիտասարդը,– նա ասաց. «Ներեցե՛ք, ես ննջել էի...»:

- Ննջել էիր, հա՞:

- Հա՛, երևում է նա սիրում է նրբաճաշակ ոճով խոսել:

- Մյա՛ու, մյա՛ու,- նորից խոսեց կատուն:

- Իսկ հիմա ի՞նչ ասաց,- հետաքրքրվեց սինյորան:

- Ասաց. «Խնդրե՛մ, ահա՛ իմ տոմսը»,- թարգմանեց երիտասարդը:

- Իսկ դուք ինչպես հարկն է ստուգեք,- հսկիչին խորհուրդ տվեց հարգարժան պարոնը,- թե չէ լինում են նաև այնպիսի անամոթ ուղևորներ, որոնք երկրորդ կարգի տոմսով առաջին կարգով են երթևեկում:

- Տոմսը կարգին է, սինյո՛ր:

- Մյա՛ու, մյա՛ու,- բարձրաձայն խոսեց կատուն:

- Նա ասաց,- բացատրեց երիտասարդը,- որ թերևս պետք է նեղանար ձեզանից ձեր դիտողությունների համար, բայց չի անում՝ հարգելով ձեր ճերմակ մազերը:

- Ճերմակ մազե՞ր, բայց ես մազ չունեմ, ես ճաղատ եմ:

- Մյա՛ու, մյա՛ու:

- Նա ասում է, որ շատ լավ է տեսնում, բայց եթե մազեր ունենայիք, դրանք ճերմակ կլինեին:

Սինյորան հոգոց հանեց.

- Կեցցե՛ք, որ հասկանում եք կատուների լեզուն: Դա ինչպե՞ս է ձեզ հաջողվում:

- Դա դժվար չէ: Պետք է պարզապես շատ ուշադիր լինել:

- Մյա՛ու, մյա՛ու:

- Ո՞րքան կարելի է շատախոսել,- փնփնթաց հարգարժան պարոնը,- մի բոպե անգամ չի կարողանում լռել:

- Իսկ հիմա՞ ինչ ասաց, ի՞նչ ասաց,- նորից խոսեց սինյորան:

- Նա հարցրեց՝ թույլ չէի՞ք տա ծխել,- թարգմանեց երիտասարդը:

- Այո, իհա՛րկե, իհա՛րկե: Վա՛յ, տեսե՛ք, նա ինձ էլ է ծխախոտ առաջարկում: Իսկական ծխողի նման:

- Եթե ծխում է, ուրեմն հենց ծխող է որ կա,- փնթփնթաց հարգարժան պարոնը:- Ձեր կարծիքով նա առյուծների որսո՞րդ պիտի լիներ, ինչ է:

- Մյա՛ու, մյա՛ու:

- Նա ասաց՝ «Ի՜նչ լավ եղանակ է այսօր։ Իսկ երեկ այնքան գորշ օր էր։ Հուսանք, որ վաղն էլ այսօրվա պես լավ եղանակ կլինի։ Դուք հեռո՞ւ եք գնում, սինյորներ։ Իսկ ես Վենետիկ եմ գնում ընտանեկան գործերով»։

Առաջին ավարտ

Պարզվեց՝ երիտասարդը, որը չգիտես, թե ուր էր գնում, որովայնախոս էր, ձեռնածու և աճպարար, և այս ամենը նրա սարքած գործերն էին։

Երկրորդ ավարտ

Պարզվեց, որ նա ամենևին էլ իսկական կատու չէր, այլ՝ ռոբոտ. շատ թանկարժեք, շքեղ խաղալիք, որը վաճառքի կհանվի միայն Նոր տարուց առաջ։

Երրորդ ավարտ

Այսպիսի կատու, իհարկե, չկա և երբեք էլ չի եղել։ Բայց ի՜նչ հրաշալի կլիներ, եթե մենք երբևիցե իրականում սովորեինք խոսել կենդանիների հետ։ Եթե ոչ բոլորի, ապա գոնե կատուների հետ։

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ Ո՞Ր ԱՎԱՐՏՆԵՐՆ ԵՆ ԴՈՒՐ ԳԱԼԻՍ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԹՄԲՈՒԿԸ

Այս հեքիաթի առաջին ավարտն ինձ դուր չի գալիս։ Ինչպե՞ս կարող է ուրախ, հրաշալի թմբկահարը հանկարծ ավազակ դառնալ։

Երրորդ ավարտը նույնպես սրտովս չի։ Կարծում եմ, հիմարություն է փուչ հետաքրքրասիրության պատճառով փչացնել այս հրաշալի կախարդանքը, թեև հետաքրքրասիրությունը վատ բան չէ։ Եթե գիտնականները հետաքրքրասեր չլինեին, երբեք ոչ մի հայտնագործություն չէին անի։

Ես երկրորդ ավարտի կողմնակիցն եմ։

ԽՈՐԱՄԱՆԿ ԲՈՒՐԱՏԻՆՈՆ

Առաջին վերջաբանը բանի պետք չի, քանի որ հնարավոր չի, որ խորամանկ Բուրատինոն, այդքան խաբեություններից հետո հանկարծ այսքան բարի դառնար։

Բայց ես չգիտեմ, թե որ ավարտն ընտրեմ՝ երկրո՞րդը, թե՞ երրորդը։ Երկրորդը զվարճալի է, իսկ երրորդն ավելի վատն է։

ԽԵՂՃ ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐԸ

Առաջին ավարտն անհնար է։ Ես չեմ հավատում, որ այդ բոլոր հրեշները կարող են Երկրում հայտնվել։

Երկրորդ ավարտը զվարճալի է, բայց ոչ խեղճ գորտերի համար։

Ես երրորդ ավարտի կողմնակիցն եմ նաև այն պատճառով, որ այն հեքիաթը շարունակելու հնարավորություն է տալիս։

ՇՈՒՆԸ, ՈՐԸ ՀԱՉԵԼ ՉԳԻՏԵՐ

Ես, անկասկած, երրորդ ավարտի կողմնակիցն եմ։ Կարևորը լավ ուսուցիչ գտնելն է։ Դա ավելի կարևոր է, քան կրկեսային աստղ դառնալը կամ ամեն օր մի աման կեր ստանալը։

ՏՈՒՆԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Առաջին ավարտը զվարճալի, բայց անհեթեթ է։

Երկրորդը լավն էր, բայց՝ անհավանական. այս սինյոր Մոնետին նրանցից չի, որ հասկանա դժբախտության մեջ գտնվող մարդուն։

Նախընտրում եմ երրորդ ավարտը, թեև այն բավականին տխուր է։

ՍՐՆԳԱՀԱՐԸ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Ինձ դուր է գալիս երրորդ վերջաբանը։

Պե՞տք է բացատրել, թե ինչու։ Չե՛մ կարծում։

ՊՏՈՒՅՏ ՔԱՂԱՔՈՎ ՄԵԿ

Առաջին ավարտը երազողների համար է, երկրորդը՝ հոռետեսների։

Ես երրորդ ավարտի կողմնակիցն եմ, ինձ դուր է գալիս, որ Պաոլոն զոհաբերեց իր հրաշալի, բայց վերացական երազանքն այն բանի համար, որ գործով օգնի իր աջակցության կարիքն ունեցողին։

ԳԼԽԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՐԵՎ ՄԻԼԱՆՈՒՄ

Առաջին ավարտը շատ պարզունակ է, իսկ երկրորդը՝ չափազանց խորհրդավոր։ Երրորդ ավարտը, թերևս, վատը չէ, միայն թե պարզ չէ, թե ինչ պատճառով եկավ գլխարկների այդ անձրևը։ Իսկ գուցե պետք էլ չէ՞ բացատրել։ Չէ՞ որ երկնքից թափվող այդ գլխարկներն այնքան

զվարճալի են, որ ակամա հույս ես տածում, որ երկնքից այլ՝ ավելի վտանգավոր բաներ չեն թափվի, օրինակ՝ ռումբեր և արկեր...

ԻՆՉՈՎ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԻՐԱՐ ՆՄԱՆ

Առաջին ավարտը հաճելի չէ: Երկրորդը շատ անարդար է. ինչո՞ւ պիտի խեղճ հնդկացուն սպիտակ ներկեին: Իսկ ա՛յ, երրորդ ավարտը միանգամայն հարմար է: Բայց ես, իհարկե, կարող եմ նաև սխալվել:

ՊՐՈՖԵՍՈՐ ԶԱՐՀՈՒՐԵԼԻՆ

Ճիշտն ասած՝ չգիտեմ նույնիսկ, թե որ ավարտն ընրեմ: Երեք ավարն էլ ինձ հետաքրքիր և ուսուցանող են թվում: Իսկ ձե՞զ:

ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ԼԱՑ Է ԼԻՆՈՒՄ

Ինձ դուր է գալիս երրորդ ավարտը, այսինքն՝ այն, որը չկա:

Տխուր է, իհարկե, բայց ոչ բոլոր հեքիաթներն են բարի ավարտ ունենում:

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԻԱՑ-ՆԵՄԸ

Առաջին ավարտն անհաջող է. չզարգացած, հետամնաց երկրները ոչ թե հրաշագործների, այլ մյուս՝ ավելի զարգացած երկրների օգնության կարիքն ունեն:

Երկրորդ ավարտում հրաշագործը մտածում է միայն իր մասին և դա շատ վատ է:

Ինձ դուր է գալիս երրորդ ավարտը, որովհետև հրաշագործը չի վախենում իր կյանքը նորից սկսել:

ՌԻՆԱԼԴՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Երրորդ ավարտը, թեև կատակ է, բայց ամենախելամիտն է:

Առաջինը չափազանց քաղցր-մեղցր է, իսկ երկրորդը՝ չափազանց տխուր:

ՀՈՎՎԻ ՄԱՏԱՆԻՆ

Հենց սկզբից դեն եմ նետում առաջին վերջաբանը, քանի որ չեմ հավատում, թե այդ խեղճուկրակ ավազակները կարող էին այդքան գանձեր ունենալ:

Երկրորդ վերջաբանը դուր կգա նրանց, ովքեր արկածներ են սիրում և լավատեսներին։ Երրորդը դուր կգա հոռետեսներին։

Կարծում եմ՝ թե՛ երկրորդ, թե՛ երրորդ վերջաբանները շատ այլ պատմություններ ու արկածներ հորինելու հնարավորություն են տալիս։

ՏԱՔՍԻ ԴԵՊԻ ԱՍՏՂԵՐԸ

Ինձ ամենաշատը դուր է գալիս երրորդ ավարտը, քանի որ ես սիրում եմ ձու։ Ի դեպ, այն միայն ուրվագծված է, այնպես որ, եթե ուզում եք, ինքներդ ավելի մանրամասն գրեք այն։

ԻՆՉՊԵՍ ԷՐ ՏԻՆՈՆ ՀԻՎԱՆԴԱՑԵԼ

Առաջին ավարտը բավականին զվարճալի է, երրորդը՝ մի քիչ խենթ է։

Ամենալավն, իմ կարծիքով, երկրորդն է, որովհետև ճիշտ է ասացվածքը՝ ով շատ ընկերներ ունի, նա երբեք չի տառապի մենակությունից։

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ մի կասկած չի կարող լինել. լավագույն վերջաբանը երրորդն է։

Իսկ թե ինչու, առանց ասելու էլ պարզ է։

ՀԱՐՅՈՒՐ ԼԻՐ՝ ԳՐՊԱՆՈՒՄ

Երեք վերջաբաններն էլ, կարծում եմ, բանի պետք չեն։ Բանն այն է, որ սա ոչ թե հեքիաթ է, այլ այն մարդու երևակայությունը, ով չի ուզում աշխատել։ Բայց դե այդ խեղճին էլ կարելի է հասկանալ։ Ախր նա ամբողջ կյանքում աշխատել է ու այնքան քիչ է վաստակել, որ գրպանում մի հարյուր լիր էլ չէր կարող գտնել։

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԿԱՏՈՒՆ

Այստեղ նույնպես ես այն վերջաբանի կողմն եմ, որը դեռ չկա։

Ես միշտ ապագայի կողմից եմ։